Շաբաթօրյա դպրոցում Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ

ԱՌԱԿՆԵՐ

Ժակ Դյուկան

Բովանդակություն

Դաս 1.	27.12-02.01	ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԸ	6
Դաս 2.	03.01-09.01	ԱԿԱՆՋՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՈՏՔԵՐԸ	16
Դաս 3.	10.01-16.01	ԿՅԱՆՔԻ ՈՒ ՄԱՀՈՒ ՀԱՐՑ	25
Դաս 4.	17.01-23.01	ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ	34
Դաս 5.	24.01-30.01	ԱՐԴԱՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	43
Դաս 6.	31.01-06.02	ՀԱՎԱՏՈՎ, ՈՉ ԹԵ ԱՉՔԻ ՏԵՍԱԾՈՎ	51
Դաս 7.	07.02-13.02	ԻՆՉՊԵՍ ԼՈՒԾԵԼ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	60
Դաս 8.	14.02-20.02	ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԵՐԸ	69
Դաս 9.	21.02-27.02	ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԵՐԸ	78
Դաս 10.	28.02-06.03	ԴԻՄԱԿԱՎՈՐՎԱԾ	87
Դաս 11.	07.03-13.03	ԿՅԱՆՔԸ ՀԱՎԱՏՈՎ	96
Դաս 12.	14.03-20.03	ԻՄԱՍՏՈՒՆԻ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ	105
Դաս 13.	21.03-20.03	ԿԱՆԱՅՔ ԵՎ ԳԻՆԻՆ	114

ԵՐԵՎԱՆ
2015

«24 ԺԱՄ ԱՂՈԹՔԻ ՄԵՋ»՝ ՀՈՒՅՍ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արդեն ավելի քան երկու տարի յուրաքանչյուր ամսվա առաջին չորեքշաբթի օրը եկեղեցու շատ անդամներ միավորվում են աղոթքում՝ մեծ քաղաքներում ավետարանչական աշխատանքի համար:

Ապրելով երկրի վրա՝ Հիսուսը չէր անցնում մեծ քաղաքների կողքով, Նա այնտեղ գտնում էր մարդկանց, ովքեր ծարավ էին արդարության, ճշմարտության և լույսի: Հիսուսի հետ ծանոթությունը վերափոխեց այդ մարդկանց կյանքը:

Այսօր, ինչպես և նախկինում, ժամանակակից քաղաքներում Հիսուսը տեսնում է փրկության կարիք ունեցող շատ մարդկանց: Բայց Նա մեր օգնության կարիքն ունի: *«Աստված կարող էր մեղավորներին փրկել նաև առանց մեր օգնության: Նրա հետ համագործակցությունն անհրաժեշտ է հենց մեզ, որպեսզի մշակենք Քրիստոսի բնավորության նման բնավորություն: Որպեսզի Նրա հետ միասին ուրախանանք յուրաքանչյուր նոր փրկագնված հոգու համար, մենք պետք է մասնակցենք մեր Փրկչի աշխատանքին» (Դարերի փափագը, 142):*

Քաղաքների՝ միշտ աճապարող, դես ու դեն ընկնող բնակիչների բազմության մեջ կան այնպիսիները, ովքեր ցանկանում են հանգիստ գտնել: Մենք կարող ենք նրանց **ցույց** տալ Հիսուսին. չէ՞ որ միայն Նրա հետ է հանգիստը: Քաղաքները լեցուն են անհոգ և կյանքի նպատակը կորցրած մարդկանցով: Մենք կարող ենք նրանց **պատմել** Հիսուսի մասին. չէ՞ որ միայն Նրա մեջ է կյանքի ուրախությունն ու իմաստը: Քաղաքներում շատ կան միայնակ, տառապող, հիվանդ մարդիկ, ովքեր ոչ մի հույս չունեն: Մենք կարող ենք նրանց **ծանոթացնել** Հիսուսի հետ. չէ՞ որ միայն Նա է Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը:

Թանկագին քույրե՛ր և եղբայրնե՛ր: Ձեզանից յուրաքանչյուրը կարող է Աստծո աշխատակիցը դառնալ և Երկնքի հետ միասին ցնծալ մեկ ապաշխարող հոգու համար: Ավետարանչական նախագծերին մասնակցելով, գրականություն տարածելով, տարատեսակ բարեգործական միջոցառումներ և «Առողջության ցուցահանդեսներ»

անցկացնելով՝ դուք կատարում եք Տիրոջ հանձնարարությունը: Բայց ամենից ավելի աղոթե՛ք, որ Սուրբ Հոգու զորությունը գործի ձեր՝ Աստծո աշխատակիցներիդ մեջ, և մարդկանց առաջնորդի դեպի փրկություն:

Աղոթե՛ք հետևյալ քաղաքների համար.

- Կեմերովո, Օմսկ, Կրասնոյարսկ (հունվարի 7),
- Թբիլիսի, Բաքու, Վանաձոր (փետրվարի 4),
- Վլադիվոստոկ, Կազան, Սամարա (մարտի 4):

«Խնդրեցե՛ք և կստանաք,
որ ձեր ուրախությունը կատարյալ լինի»
(Հովհաննես 16.24):

ԵԱԲ
աղոթքի
ծառայություն

ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԻ ԽՈՍՔԵՐԸ

Այն դեպքում, երբ Աստվածաշնչի շատ գրքեր լեցուն են խորը հոգևոր ու աստվածաբանական ճշմարտություններով, Առակաց գիրքը լի է գործնական ու օգտակար խորհուրդներով՝ առօրյա կյանքի վերաբերյալ:

Լինելով համառոտ, զուսպ, բանաստեղծական, խայթիչ և ոչ առանց հումորի՝ առակները համընդհանուր են. հեշտությամբ մտապահվում են և հիանալի կերպով փոխանցում են խրատի էությունը, երբեմն նույնիսկ ավելի արդյունավետ, քան սպառիչ փաստարկներով համոզիչ ճառերը:

Օրինակ՝ «Գնա՛ մրջյունի մոտ, ո՛վ ծույլ, նրա ճանապարհները տե՛ս և իմաստո՛ւն եղիր» (Առակաց 6.6): Կամ՝ «Լավ է բնակվել ամայի երկրում, քան թե կռվասեր և բարկացկոտ կնոջ հետ» (Առակաց 21. 19): Կամ էլ՝ «Եթե թշնամիդ սոված է՝ հա՛ց տուր նրան, և եթե ծարավ է՝ ջո՛ւր խմեցրու նրան. որովհետև այսպես անելով՝ նրա գլխի վրա կրակի կայծեր կդիզես. և Տերը քեզ կհատուցի» (Առակաց 25.21,22): Մի՞թե կարելի է մոռանալ նման փոխաբերությունները:

Առակաց գիրքը իմաստության շտեմարան է, որը մեկ սերնդի ընթացքում չէ, որ լցվել է: Նրա հեղինակ համարում են Սողոմոն արքային (Առակաց 1.1-9.18, 10.1-22.16), հին մերձավորարևելյան աշխարհի անհայտ «իմաստուններին» (Առակաց 22.17-24.22, 24.23-34), ինչպես նաև ոչ իսրայելացի Ագուրին (Առակաց 30.1-33): Որոշ դեպքերում գրքում կարելի է հին մերձավորարևելյան, մասնավորապես՝ հին եգիպտական տեքստեր տեսնել:

Սակայն Առակաց գիրքն Աստծո Խոսք է, որովհետև հենց Աստծո ներշնչանքով են հեղինակները մեկտեղել իրենց նյութերը: Թեև տեքստերում Աստված հազվադեպ է անմիջականորեն հիշատակվում, Նա միշտ ներկա է. մենք գտնվում ենք շուկայում, խոսում ենք, ուտում, խմում, աշխատում, գնում, վաճառում, շփվում, թե սիրում, Աստված միշտ մեր կողքին է: Առակաց գրքի Աստվածը պարզապես կրոնասեր մարդու Աստված չէ՝ լինի դա քահանայապետ, թե պարզապես անցորդ: Բարեպաշտությունն այստեղ աշխատանքային արտահագուստով է:

Առակաց գիրքը նաև սովորեցնում է, թե ինչ է նշանակում վախենալ Աստծուց (Առակաց 1.7, 31.30) ոչ միայն եկեղեցում, այլև առօրյա գործերով զբաղվելու ժամանակ, որովհետև մեր կյանքը խոսում է մեր

քարոզներից, աղոթքներից և անգամ ընծաներից ավելի բարձրաձայն (Առակաց 28.9, 15.8):

Համաձայն Առակաց գրքի՝ «իմաստությունը» դրսևորվում է. երբ մարդը ճանաչում է Տիրոջը «իր բոլոր ճանապարհներում» (Առակաց 3.6), այսինքն՝ լինել իմաստուն՝ նշանակում է ապրել հավատով և հնազանդությամբ, դա նշանակում է մարդկային լինել Արարիչ Աստծո ներկայությամբ:

Առակաց գրքից մենք իմանում ենք, թե ինչպես իմաստուն լինել, ընդ որում՝ կյանքի որոշակի իրադրություններում: Գիրքը պատասխանում է բազում հարցերի՝ ի՞նչ պետք է ես սովորեցնեմ իմ երեխաներին և ինչպե՞ս, ինչպե՞ս կարող եմ ես երջանիկ և հաջողակ լինել, ինչո՞ւ ես ֆինանսական խնդիրներ ունեմ, ես ինչպե՞ս կարող եմ առաջընթաց ունենալ աշխատանքի մեջ, ես ինչպե՞ս կարող եմ դիմադրել կրքերիս, ես ինչպե՞ս կարող եմ հաղթահարել բարկությունս կամ կարճացնել լեզուս:

Վերջապես, իմաստությունը պարզապես մտավոր կատեգորիա չէ: Ընդհակառակը, իր մտավոր ընդունակություններին վստահ մարդն ավելի շատ է հակված հիմար դուրս գալու, որովհետև անգամ ամենախելացի մարդը շատ քիչ բան գիտի: Կարող ես քեզ իմաստուն համարել և այդ պատճառով այլևս նոր գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտություն չզգալ: Ընդհակառակը, իմաստության նախադրյալը խոնարհությունն ու սեփական կարիքը գիտակցելն է, իսկ հետո իմաստություն խնդրելը:

Առակաց գիրքը խորն է և հարուստ: Այն շատ թեմաներ է շոշափում: Հաշվի առնելով ձեռնարկի սահմանափակությունը՝ մենք ստիպված եղանք ընտրել, թե ինչ նյութեր վերցնենք ուսումնասիրության համար: Մենք չենք կարող ընդգրկել ամեն բան, բայց այն, ինչ մտել է այս ձեռնարկի մեջ, իսկապես արժանի է՝ աղոթքով մեր մանրակրկիտ ուսումնասիրությանը:

Ժակ Բ. Դյուկանը եբրայերեն լեզու և Հին Կտակարանի էկզեգեզա է դասավանդում: Նա նաև զբաղեցնում է Էնդրյուսի համալսարանի Հրեաքրիստոնեական հետազոտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնը: Լինելով Ֆրանսիայի քաղաքացի (ծնվել է Ալժիրում)՝ Ժակ Դյուկանն ունի Ստրասբուրգի համալսարանի եբրայերեն լեզվի և Էնդրյուսի համալսարանի աստվածաբանության դոկտորի աստիճան:

ԴԱՍ 1

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27 – ՀՈՒՆՎԱՐԻ 2

ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Առակաց 1-3, Ծննդոց 1.1, Ելից 19.16, 20.20, Առակաց 11.30, 13.12, 15.4:

Հիշելու համարը.

«Իմաստության սկիզբը Տիրոջ վախն է. միայն հիմարները կանարգեն իմաստությունը և խրատը» (Առակաց 1.7):

Եդեմի ժամանակներից ի վեր մարդկային ողբերգության արմատը թաքնված է սխալ ընտրության մեջ: «Մարդը կորցրեց ամեն բան, որովհետև գերադասեց ականջ դնել խաբեբային, և ոչ թե Նրան. Ով Ճշմարտությունն է, Ում պատկանում է բանականությունը: Չարի և բարու խառնվելու պատճառով մարդկային միտքն սկսեց անկում ապրել, մտավոր և ֆիզիկական ընդունակությունները բթացան» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 25):

Առակաց գիրքն օգնում է մեզ ճիշտ որոշում ընդունել՝ հետևելու Աստծուն և ոչ թե խաբեբային: Խոսելով իրենց երեխայի հետ՝ հայրը կամ մայրը ոչ միայն նրան նախազգուշացնում են սխալ ընտրությունից, այլ նաև դրդում են՝ կայացնելու ճիշտ որոշում: Դա շատ կարևոր է. որովհետև, առանց չափազանցնելու, մեր ընդունած որոշումներից է կախված է մեր կյանքը:

Առակաց գրքի առաջին երեք գլուխները լուսաբանում են դաստիարակության այս մեթոդը: Սկզբում բացատրելով գրքի նպատակը՝ «Ճանաչել իմաստությունը» (Առակաց 1.2), իսկ հետո սահմանելով գրքի հիմնական գաղափարը՝ «Իմաստության սկիզբը Տիրոջ վախն է» (Առակաց 1.7, համեմատե՛ք Առակաց 9.10-ի հետ), հեղինակը բազմակողմանիորեն մշակում է այս գաղափարը՝ մեկ նախազգուշացնելով մեզ չհավատալ հիմարությանը, մեկ համոզելով պատասխանել երկնային իմաստության կոչին:

Միաշաբթի **դեկտեմբերի 28**

Իմաստության սկիզբը

«Դավթի որդի Սողոմոնի առակները» ենթավերնագիրը (Առակաց 1.1) կապ է հաստատում Առակաց 1.1-6 և Գ Թագավորաց 3.5-14 հատվածների միջև: Թագավորաց գրքերում (ինչպես և Առակաց գրքում) Սողոմոնը ներկայացված է որպես որդի, ով որոնում է Աստծո իմաստությունը: Բացի նրանից, որ երկու գիրքն էլ Սողոմոնին անվանում են «Դավթի որդի», երկու տեքստում էլ օգտագործվում է կարևոր ընդհանուր եզրաբանություն. «հանձար», «իմաստություն», «դատել»: Այս զուգահեռները ոչ միայն հաստատում են, որ Սողոմոնը գիրքը կազմողներից մեկն է եղել, այլ նաև ցույց են տալիս, որ Առակաց գիրքը դիտարկում է՝ մարդու կողմից աստվածային իմաստության որոնման հարցը:

Կարդացե՛ք Առակաց 1.7-ը: Ի՞նչ է իմաստությունը: Ի՞նչ է «Տիրոջ վախը»: Այս երկու հասկացություններն ինչպե՞ս են հարաբերակցվում: _____

_____

_____

Այս համարում «իմաստությունը» բնորոշվում է որպես կրոնական փորձառություն: Այն կապված է Տիրոջ վախի հետ: Հրեական կրոնի այս կարևոր հայեցակարգը Առակաց գիրքն ըմբռնելու բանալին է: Այն ոչ միայն բազմիցս հիշատակվում է, այլ նաև կազմում է ողջ գրքի հիմքը (Առակաց 1.7, 31.30):

Տիրոջ վախը ոչ մի ընդհանուր բան չունի սնահավատության կամ աստվածային պատժի հանդեպ մանկական վախի հետ: Այն հարկավոր է ըմբռնել որպես Աստծո անձնական ներկայության սուր գիտակցում՝ միշտ և ամենուր: Տիրոջ վախով էր պայմանավորված մարդկանց արձագանքը՝ Սինա լեռան վրա աստվածային հայտնությանը (Ելից 19.16, 20.20), դրանով էլ բացատրվում է հավատարիմ լինելու և Աստծուն սիրելու նրանց խոստումը՝ ի պատասխան Նրա ուխտի (Երկրորդ Օրինաց 10.12):

Կարճ ասած, Աստծուց վախենալ՝ նշանակում է հավատարիմ լինել Աստծուն և սիրել Նրան:

«Իմաստության սկիզբը Տիրոջ վախն է» արտահայտությունը նշանակում է, որ իմաստությունը ծագում է այդ «վախից»: Եբրայերեն «սկիզբ» *(ռեշիթ)* բառը մատնացույց է անում առաջին բառը, որից

սկսվում է արարման պատմությունը (Ծննդոց 1.1): Այսպիսով, իմաստության առաջին դասն ամփոփված է այն բանի ըմբռնման մեջ, որ Աստված մեր Արարիչն է, Նա, Ով մեզ կյանք և շունչ է տալիս, և այն, որ Նա՝ սիրո, արդարության և փրկագնման Աստված, միշտ ներկա է (Հովհաննես 3.16, Սաղմոս 89.14, Եբրայեցիս 9.12):

Աստվածաշունչը մեզ սովորեցնում է սիրել Աստծուն և վախենալ Նրանից: Այս երկու հասկացություններն ինչպե՞ս են դրսևորվում Աստծո հետ մեր անձնական փոխհարաբերություններում:

Երկուշաբթի դեկտեմբերի 29

Ճշմարիտ դաստիարակությունը

Կարդացե՛ք Առակաց 1.8-10-ը: «Դաստիարակության» ի՞նչ երկու հակադիր մեթոդներ են ներկայացված այս երկու համարներում: Ո՞րն է այս համարների հիմնական լուրը ոչ միայն ծնողների, այլ նաև Աստծուց վախեցող ցանկացած մարդու համար: _____

Դաստիարակությունը նախևառաջ ընտանեկան գործ է, և երեխաները ճշմարիտ դաստիարակություն ստանում են առաջին հերթին ծնողներից: Այս համարներում դաստիարակությունն անվանվում է «խորհուրդ» և անգամ «հրահանգ» (Հակոբ թագավորի թարգմանությունն օգտագործում է «օրենք» բառը): Եբրայերեն «օրենք» բառը՝ *տորահ*, նշանակում է «ուղղություն»: Ծնողները պետք է իրենց երեխաներին ցույց տան ճիշտ ուղղությունը: Եվ ընդհակառակը, «դաստիարակության» մյուս մեթոդը բնորոշված չէ, և այն անուն չունի: Այն պարզապես հիշատակվում է որպես մեղավորների ձայն, որը տանում է սխալ ուղղությամբ:

Բացի դրանից, «որդյակս» բառը, որը պետք չէ ընկալել որպես միայն տղա երեխա կամ պատանի, բազմիցս կրկնվում է՝ ընդգծելով ծնողական խրատը: Յուրաքանչյուր ծնող՝ «քո հայրը», «քո մայրը», հստակ նշված է եզակի թվով և անձամբ ընդգրկված է դաստիարակության գործընթացի մեջ, այն ժամանակ, երբ մյուս ճամբարի ներկայացուցիչները մի խումբ անանուն «մեղավորներ» են:

«Իր իմաստությամբ Տերը սահմանել է, որ ընտանիքը լինի ամենամեծ դաստիարակող ուժը: Երեխայի դաստիարակությունը պետք է սկսվի ընտանիքում: Դա նրա առաջին դպրոցն է: Այստեղ իր ծնող-ուսուցիչների ազդեցությամբ նա պետք է ըմբռնի այն դասերը, որոնցով ղեկավարվելու է ողջ կյանքում... Ընտանիքի դաստիարակչական ազդեցությունը վճռորոշ ուժ է ի բարին կամ ի չարը... Եթե երեխան այստեղ հարկավոր խրատները չստանա, սատանան նրան կդաստիարակի իր հայեցողությամբ» (Է. Ուայթ, Քրիստոնեական տուն, 182):

Ընտանեկան դաստիարակության օգտին լավագույն փաստարկը դրա արդյունքն է: Դրանք տեսանելի են բնավորության այն հատկանիշներում, որոնք նման են գլխի և պարանոցի զարդարանքների: Մերձավորարևելյան մշակույթում թանկագին մանյակներն ու ապարանջանները՝ որպես թանկարժեք ժառանգություն, ծնողներից փոխանցվում էին զավակներին: Սակայն դաստիարակությունն ավելի մեծ նշանակություն ունի, քան նյութական հարստությունները: Մեր երեխաների հետ անցկացրած ժամանակը նրանց համար անհամեմատ ավելի մեծ նշանակություն կունենա, քան այն ժամանակը, որ մենք նվիրում ենք մեր աշխատանքին: Բացի դրանից, պարանոցի և գլխի հիշատակումը, փաստորեն նաև մարդու դեմքի հիշատակումը ենթադրում է, որ դաստիարակությունը ձևավորում է մարդու բուն անձը: Իսկ հիմարների կամ մեղավորների ճանապարհին հիշատակվում են միայն ոտքերը (Առակաց 1.15), ասես ինքնագլուխ որդին կորցնում է իր նույնականությունը:

Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել ընդդիմանալ գայթակղություններին, որոնք կարող են մեր ճանապարհին կանգնեցնել մշակույթը, հասարակությունը, ընկերները և անգամ ընտանիքը:

Երեքշաբթի դեկտեմբերի 30

Իմաստության աղաղակը

Կարդացե՛ք Առակաց 1.20,21-ը: Ինչպե՞ս է ներկայացված այստեղ իմաստությունը: Ի՞նչ է ասված այդ մասին: _____

_____

_____

Այն ժամանակ, երբ մեղավորները «դարանամուտ են լինում» և «թաքնվում են» (Առակաց 1.11,18), իմաստությունը «աղաղակում է դրսում» (Առակաց 1,20), «կանչում է աղմկալից տեղերի գլխին» (Առակաց 1.21) և «խոսում է իր խոսքերը» (Առակաց 1.21): Այստեղ իմաստությունը ներկայացված է մարդկային կերպարով, այն փողոցում ինչ-որ բան է առաջարկում տղամարդկանց և կանանց: Նրա առաջարկը հասցեագրված է բոլոր ապրողներին: Աղմկոտ և թշնամական միջավայրում ապրանքների ահռելի քանակի և առևտրականների հսկայական բազմության մեջ իմաստության կոչը պետք է բարձրաձայն լինի, այլապես իմաստությունը չի լսվի բազում այլ ձայների մեջ:

Կարդացե՛ք Առակաց 1.22-32-ը: Ինչի՞ է հանգեցնում իմաստությունը մերժելը: _____

_____

_____

Իմաստությունը մերժելու՝ մարդկանց պատճառը ոչ մի ընդհանուր բան չունի բուն իմաստության հետ, այլ ամբողջովին կապված է այն մերժողների բնավորության հետ: Նրանք ներկայացվում են որպես ամբարտավան և կասկածամիտ (Առակաց 1.25, համեմատե՛ք Առակաց 1.30-ի հետ), ասես իրենք մյուսներից ավելի շատ բան գիտեն: Նրանք համարում են, որ իմաստությունը հարկավոր է միայն հասարակ և միամիտ մարդկանց: Սակայն հենց իմաստությունը մերժողներն են հասարակ ու պարզամիտ. նրանք անմիտներ են, ովքեր «ատում են գիտությունը» (Առակաց 1.22, համեմատե՛ք Առակաց 1.29-ի հետ):

Նրանք, ովքեր մերժում են իմաստությունը, կքաղեն այդ մերժման պտուղները: Հրաժարվելով ընտրել Տիրոջ վախը՝ նրանք այժմ պարտավոր կլինեն բավարարվել իրենց սեփական ընտրությամբ. նրանք «իրենց ճանապարհի պտղից կուտեն» (Առակաց 1.31): Երբ մենք մերժում ենք ի վերուստ եկող իմաստությունը, վերջին հաշվով մնում ենք մտացածին բաների և կեղծիքի մեջ, որ պատրաստում ենք, կամ որ ուրիշներն են պատրաստում մեզ համար, իսկ մենք պատրաստակամորեն ընդունում ենք: Այդպես մենք Աստծուն փոխարինում ենք կուռքերով: Որքան էլ տարօրինակ է, կրոնն արհամարհողները և նրանց ծաղրողները, ում իրենք անվանում են հասարակ և պարզամիտ, հաճախ յուրովի սնահավատ են: Նրանք նշանակություն են տալիս ամենաանցողիկ և անօգուտ բաներին, որոնք երբեք չեն կարողանա բավարարել սրտի գլխավոր պահանջունքները:

Կարդացե՛ք Առակաց 1.33-ը: Հաշվի առնելով նախորդ համարների համատեքստը՝ այստեղ ի՞նչ խոստում և հույս կա մեզ համար: Այդ խոստումն ինչպե՞ս է իրականանում մեր կյանքում:

Չորեքշաբթի դեկտեմբերի 31

Իմաստության առավելությունը

Կարդացե՛ք Առակաց 2.1-5-ը: Ի՞նչ պայմաններով կարելի է ըմբռնել «Աստծո վախը»: Մենք ի՞նչ որոշումներ պետք է ընդունենք այս կապակցությամբ: _____

_____

_____

Երեք անգամ դատողություններն սկսվում են «եթե» բառից՝ նշանակելով դաստիարակության երեք հաջորդական փուլերը: Առաջին «եթե»-ն ներկայացնում է ունկնդրելու պասիվ փուլը. սա նշանակում է ընկալունակ և ուշադիր լինել իմաստության խոսքերի հանդեպ (Առակաց 2.1,2): Երկրորդ «եթե»-ն ներկայացնում է ակտիվ արձագանք՝ հասկացողությանը կանչել և հանձարին ձայն տալ (Առակաց 2.3): Երրորդ «եթե»-ն շահագրգիռ մասնակցություն և իմաստության որոնում է, ինչպես եթե մարդը «գանձ» որոներ (Առակաց 2.4):

Կարդացե՛ք Առակաց 2.6-9-ը: Ի՞նչ ջանքեր են հարկավոր արդարությունն ըմբռնելու համար: Ո՞րն է Աստծո պատասխանատվությունը իմաստություն ձեռք բերելու մեջ:

_____

_____

Ուշադրությո՛ւն դարձրեք, որ 6-րդ համարում «Տերն է տալիս» արտահայտությունը պատասխանում է 5-րդ համարի «Աստծո գիտությունը կգտնես» դարձվածքին: Իմաստությունը, ինչպես և փրկությունը, պարգև է Աստծուց: Առաջին հատվածը նկարագրում է գործընթացը, որ տեղի է ունենում մարդու հետ, երկրորդը՝ Աստծո գործունեությունը. Նա տալիս է իմաստություն, Նա պահում է իմաստությունը և պահում ու պահպանում է իմաստունների ուղիները:

Կարդացե՛ք Առակաց 2.10-22-ը: Ի՞նչ է տեղի ունենում, երբ իմաստությունը վերջապես բնակվում է սրտում: _____

_____

«Երբ իմաստությունը կմտնի քո սիրտը» արտահայտությունը նշանավորում է վերափոխման վերջնական փուլը: Մենք ոչ միայն կունենանք Տիրոջ գիտությունը, այն նաև ախորժելի կլինի մեր հոգիների համար (Առակաց 2.10): Մենք նաև պաշտպանված կլինենք չար ճանապարհից (Առակաց 2.12), չարի գայթակղությունից (Առակաց 2.16) և կքայլենք արդարների ճանապարհներով (Առակաց 2.20):

Կարդացե՛ք Առակաց 2.13,17-ը: Ո՞րն է առաջին քայլը խավարի ճանապարհով, և ինչի՞ է հանգեցնում այն: ___

_____

_____

Թեև մենք մեղավորներ ենք, պարտադիր չէ, որ չարիք գործենք: Ամբարշտության ճանապարհով գնացողները, ակներևաբար, նախ թողել են արդարության ճանապարհը: Այդ դեպքում ամբարշտությունը առաջին հերթին հարկավոր է հասկանալ որպես հավատարմության բացակայություն: Մեղքն սկսվում է աննկատ և անմեղ ձևով, բայց շուտով արդեն մեղավորը ոչ միայն վարվում է ամբարիշտի նման, այլև դրանից բավականություն է ստանում:

Եթե ձեզ դուր է գալիս չարիք գործելը, ի՞նչ է ասում այդ փաստը հենց ձեր մասին: Կամ, որն ավելի վատ է, ի՞նչ կլինի, եթե դուք դա անգամ չարիք չեք համարում:

Հինգշաբթի **հունվարի 1**

Մի՛ մոռացիր

Կարդացե՛ք Առակաց 3.7-ը: Ինչո՞ւ է վտանգավոր սեփական աչքերում իմաստուն լինելը: _____

_____

_____

Եթե մարդն իրեն իմաստուն է համարում սեփական աչքում, դա նրան բերում է պատրանքի, թե կարելի է իմաստուն լինել առանց Աստծո: Սա անհույս իրավիճակ է: «Հիմարից ավելի շատ հույս կա, քան թե նրանից» (Առակաց 26.12): Միևնույն ժամանակ, իմաստությունը նկարագրվում է որպես կրոնական պարտականություն: Իմաստուն լինել՝ նշանակում է պահել Աստծո պատվիրանները (Առակաց 3.1), «շնորհքն ու ճշմարտությունը» (Առակաց 3.3) և «Տիրոջն ապավինել» (Առակաց 3.5): Իմաստությունը ենթադրում է սերտ

փոխհարաբերություններ Աստծո հետ: Ուշադրությո՛ւն դարձրեք սրտի բազմակի հիշատակմանը (Առակաց 3.1,3,5)՝ տեղ, ուր ծնվում է մեր անձնական արձագանքը Աստծո գործողություններին: (Սիրտը Առակաց 2.10-ում արդեն հիշատակվել էր որպես մի տեղ, ուր պետք է մուտք գործի իմաստությունը):

Կարդացե՛ք Առակաց 3.13-18-ը: Ի՞նչ ընծա է գալիս իմաստության պարգևի հետ: _____

_____

_____

Իմաստությունը կապակցվում է կյանքի և առողջության հետ (Առակաց 3.2,8,16,18,22): Լուրջ մտորումների տեղիք է տալիս իմաստության համեմատությունը «կյանքի ծառի» հետ (Առակաց 3.18), խոստում, որ գրքում կրկնվում է մի քանի անգամ (Առակաց 11.30, 13.12, 15.4): Այս փոխաբերությունը մատնացույց է անում Եդեմի այգին: Տվյալ խոստումը չի նշանակում, որ իմաստություն ձեռք բերելը հավիտենական կյանք է ապահովում: Գաղափարն այն է, որ Աստծո հետ կյանքի որակը, որ մեր նախածնողները վայելում էին Եդեմում, կարող է ինչ-որ չափով վերականգնվել: Երբ մենք ապրում ենք Աստծո հետ, որոշ պատկերացում ենք ստանում Եդեմի մասին, ավելին, մենք սովորում ենք հավատալ այդ կորուսյալ թագավորության վերականգնման մասին խոստմանը (տե՛ս Դանիել 7.18):

Կարդացե՛ք Առակաց 3.19,20-ը: Ինչո՞ւ է իմաստությունն այդքան անհրաժեշտ: _____

_____

_____

Անսպասելի ակնարկն արարման պատմությանն անտեղի է թվում տվյալ համատեքստում: Սակայն արարման ժամանակ իմաստության օգտագործումն ուժեղացնում է 18-րդ համարի փաստարկը, որն իմաստությունը կապում է կյանքի ծառի հետ: Եթե Աստված երկինքն ու երկիրն արարելու համար օգտագործեց իմաստությունը, ապա իմաստությունը ինչ-որ ծեծված հարց չէ: Իմաստության մասշտաբը տիեզերական է, դուրս է գալիս մեր երկրային գոյության սահմաններից: Իմաստությունը կապված է նաև մեր հավիտենական կյանքի հետ: Ահա թե ինչ դաս պետք է քաղել կյանքի ծառի մասին ակնարկից, որը հիշեցնում է Եդեմի այգին: Այս հեռանկարն անգամ բովանդակվում է խոստման մեջ, որով ավարտվում է մեր հատվածը. «Փառք պիտի ժառանգեն իմաստունները» (Առակաց 3.35):

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի ստեղծագործություններից կարդացե՛ք հետևյալ գլուխները. «Քրիստոսի առակները» գրքից «Թաքնված գանձ» գլուխը, 111-114, «Լուրեր երիտասարդության համար» գրքից՝ «Օրհնությունը ընտանիքում» գլուխը, 334, «Դաստիարակություն» գրքից՝ «Ֆիզիոլոգիայի ուսումնասիրությունը» գլուխը, 197, 198, «ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ» գրքից՝ «Է. Ուայթի մեկնությունները», հատոր 3, 1156:

«Անհրաժեշտ է, որ երիտասարդները հասկանան աստվածաշնչյան այն խորը ճշմարտությունը, որ Աստծո մեջ է «կյանքի աղբյուրը» (Սաղմոս 36.9): Նա ոչ միայն ամեն բանի Արարիչն է, այլ նաև կենսատուն է ամեն կենդանիի: Այդ Նրա կյանքն է մեր ուժը պահպանում արևի լույսի, մաքուր, հաճելի օդի և սննդի միջոցով: Այդ Նրա կյանքի շնորհիվ է, որ մենք գոյություն ունենք՝ ժամ առ ժամ, վայրկյան առ վայրկյան: Նրա բոլոր պարգևները, եթե դրանք պղծված չեն մեղքով, ուղղված են կյանքին, առողջությանը և ուրախությանը» (Է. Ուայթ, «Դաստիարակություն, 197, 198):

«Շատերն այնպիսի կարծիք են կազմել, որ Աստծուն նվիրվածությունն անհամատեղելի է ամուր առողջության, ուրախության և երջանկության հետ՝ մերձավորների ու հարազատների հետ շփման մեջ: Բայց նրանք, ովքեր քայլում են իմաստության և սրբության ճանապարհներով, հայտնաբերում են, որ «աստվածապաշտությունն ամեն բանի համար օգտակար է՝ ունենալով այժմյան և գալու կյանքի խոստումը» (Ա Տիմոթեոս 4.8): Նրանք կարողանում են ուրախանալ կյանքի իսկական բավականություններով» (Է. Ուայթի մեկնությունները, ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հատոր 3, 1156):

Հարցեր քննարկման համար

1. Ինչո՞վ է իմաստությունը տարբերվում գիտելիքներից: Ինչպե՞ս կարելի է ունենալ շատ գիտելիք և միևնույն ժամանակ չունենալ իմաստություն: Հիշե՛ք ձեզ ծանոթ մարդկանց, ում չի կարելի իմաստուն անվանել՝ չնայած նրանց գիտելիքներին:

2. Մանրամասն կա՛նգ առեք «Աստծո վախի» մասին հարցի վրա: Եթե «վախ չկա սիրո մեջ» (Ա Հովհաննես 4.18), ինչպե՞ս կարելի է վախենալ Տիրոջից և միևնույն ժամանակ սիրել Նրան: Ինչպե՞ս համաձայնեցնել արդարության և սիրո միջև եղած թվացյալ հակասությունը «Տիրոջ վախն» ըմբռնելիս:
3. Ինչո՞ւ է այդքան վտանգավոր «իր աչքում իմաստուն» լինելը, հատկապես՝ եթե հաշվի առնենք, թե որքան այլասերված է մարդկային սիրտը և թե որքան հեշտությամբ ենք մենք տրամաբանական բացատրություններ տալիս գրեթե ցանկացած վարքի, որ ուզում ենք արդարացնել: Խորհեցե՛ք նրանց մասին, ովքեր բանական բացատրություն են գտնում նողկալի վարքի համար: Մենք ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ նույնը չենք անի:

ԴԱՍ 2

ՀՈՒՆՎԱՐԻ 3-9

ԱԿԱՆՋՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՈՏՔԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Առակաց 4, Գ Թագավորաց 3.9, Մատթեոս 13.44, Առակաց 5, Ա Կորնթացիս 10.3, Առակաց 6.1-19:

Հիշելու համարը.

«Ծիտա՛կ արա քո ոտների շավիղը, և քո բոլոր ճանապարհները կհաստատվեն: Մի՛ խոտորվիր աջ և ձախ, ոտքդ հեռացրո՛ւ չարից» (Առակաց 4.26,27):

Գիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ լսելու ընդունակությունն ազդում է քայլվածքի վրա, և անգամ հավասարակշռությունը պահպանելու ընդունակությունը կախված է այն բանից, թե որքանով ենք մենք լավ լսում: Այդ պատճառով դաստիարակությունը կամ խրատելը, այսինքն՝ այն, ինչ մենք լսում ենք, վճռորոշ նշանակություն ունի այն բանի համար, թե ինչպես ենք մենք ապրում: «Իմաստության սկիզբն է՝ «Իմաստություն ստացի՛ր», - պնդում է Առակաց 4.7-ը:

Սակայն, որքան էլ լավը լինեն խրատները, սովորողը պետք է ուշադիր լինի: Մի փոքր հեգնանքով հին եգիպտացի ուսուցիչը նշել, որ «Տղայի ականջը նրա մեջքին է. նա լսում է, երբ նրան ծեծում են»: (Եգիպտական նկարչության մեջ աշակերտները հաճախ պատկերվում էին՝ մեջքին մեծ ականջներ):

Բավական չէ պարզապես *իմանալ* այն մասին, թե ինչն է լավ, և ինչն է վատ. մեզ հարկավոր է սովորել *ընտրել* այն, ինչ ճիշտ է, և չսխալվել: Իմաստություն սովորելը բաղկացած է հարկավոր ցուցումներ լսելուց և այն բանին ենթարկվելուց, ինչ մենք իմացանք, որպեսզի չհայտնվենք սխալ ճանապարհին:

Լսի՛ր

Կարդացե՛ք Առակաց 4-ը: Ի՞նչ գործնական ճշմարտություն է գրի առնված այստեղ, և ինչպե՞ս կարող ենք մենք այն կիրառել մեր կյանքում՝ ձգտելով պահպանել հավատարմությունը Աստծո հանդեպ: _____

_____

_____

_____

«Լսելու» գործընթացը փոխարինում է դաստիարակության և կրթության առաջին քայլին: Հրեական մտածողության մեջ իմաստության կամ խելամտության կենտրոնը գտնվում է ոչ թե ուղեղում, այլ ականջների մեջ: Սա նշանակում է, որ նախքան մենք կջանանք իմաստավորել կամ լուծել խնդիրը, մեզ նախ հարկավոր է լսել այն: Իսկ սա նշանակում է, որ մենք պետք է լսենք: Երբ Սողոմոնը իմաստություն էր խնդրում, նա հստակ կերպով խնդրում էր իրեն «լսող սիրտ» տալ (Գ Թագավորաց 3.9, բառացի թարգմանություն):

Հետևաբար, իմաստության առաջին գործողությունը «լսելն» է, և այն ենթադրում է, որ իմաստությունը գալիս է արտաքին աղբյուրից (տվյալ դեպքում՝ ծնողներից): Մենք չենք կարող ինքներս իմաստություն գտնել: Այն միտքը, որ մարդը կարող է «ինքն իրեն արարել», անհնար է աստվածաշնչյան իմաստության համատեքստում: Իմաստությունն ամենից առաջ այն է, ինչ մենք ստանում ենք, և ոչ թե այն, ինչ մենք ձևավորում ենք սեփական հմտությունների օգնությամբ կամ ճանաչում ենք մեր սրամտության և մտահանգումների շնորհիվ: «Լսելու» ընդունակությունը (եբրայերեն՝ «սրտում դնել») ենթադրում է սրտի մասնակցությունը: Իմաստության որոնումը այդ դեպքում պարզապես սառը, օբյեկտիվ ընկալում չէ: Սիրտը, որն անձի միջուկն է և (հրեական մտածելակերպի համաձայն) հույզերի բնակվելու վայրը, մասնակցում է իմաստություն ձեռք բերելուն:

Կարդացե՛ք Մատթեոս 13.44 և Երեմիա 29.13-ը: Դուք ի՞նչ կապ կարող եք գտնել այս համարների և իմաստության որոնումների միջև, որոնց մասին ասված է Առակաց 4-ում: _____

_____

_____

Այն ամենի մեջ, ինչը մեզ մարդ է դարձնում, հույզերը վերջին տեղը չէ, որ զբաղեցնում են, այդ պատճառով մենք չենք կարող և չպետք է անտեսենք դրանք Աստծո հետ մեր փոխհարաբերություններում: Մենք ինչպե՞ս կարող ենք ըմբռնել հույզերի հարկավոր տեղն ու նշանակությունը մեր հոգևոր կյանքում: Հիշեցե՛ք դեպքեր, երբ ձեր հույզերը ձեզ հուշել են ճիշտ լուծումը (ինչպես նաև՝ դեպքերը, երբ դրանք ձեզ ուղղորդել են սխալ ճանապարհով): Ի՞նչ եք դուք սովորել և՛ մեկ, և՛ մյուս դեպքում:

Երկուշաբթի հունվարի 5

Պաշտպանի՛ր ընտանիքդ

Հենց որ մենք որոշենք քայլել իմաստության ճանապարհով, մեզ մեծ զգուշություն հարկավոր կլինի, որովհետև այդ ճանապարհին մեզ խոչընդոտներ կհանդիպեն (տե՛ս Ա Պետրոս 5.8): Ամենամեծ վտանգներից մեկը, որ մեզ սպառնում է, վերաբերում է մեր մերձավորներին՝ մեր կյանքի ամենաթանկ, խոցելի ու խորը ոլորտին:

Կարդացե՛ք Առակաց 5-ը: Ի՞նչ վտանգներից մենք պետք է զգուշանանք: _____

_____

_____

_____

_____

Առաջին վտանգը հենց մեր մեջ է. ամեն բան սկսվում է մեր սեփական բառերից: Մենք պետք է հետևենք մեր լեզվին և անենք ամեն հնարավորը, որպեսզի այն, ինչ մենք ասում ենք, անտեղի կամ երկիմաստ հաղորդագրություններ չթողնի: Մեր շուրթերից դուրս եկող բառերը պետք է համապատասխանեն մեր գիտելիքներին և արտացոլեն մեր հոգևոր համոզմունքները:

Երկրորդ վտանգը մեկ այլ կինը կամ մեկ այլ տղամարդն է (թեև համարը խոսում է «օտար» կնոջից եկող վտանգի մասին, այդ արտահայտությունը հարկավոր է հասկանալ լայն իմաստով. գայթակղությունը կարող է ելնել ինչպես տղամարդուց, այնպես էլ կնոջից), ովքեր միջամտում են ընտանքին: Թե՛ մեկը, թե՛ մյուսը կարող են գայթակղել ամուսիններից մեկին՝ խախտելու ամուսնական երդումը,

իսկ ո՞վ չի տեսել այնպիսի օրինակներ, թե որքան կործանարար է այդ մեղքը:

Համաձայն համարի՝ այդ հրապուրիչ խոսքերից սկսվող գայթակղություններին ընդդիմանալու լավագույն եղանակը իմաստության խոսքերին ականջ դնելն է: Լսելով և հնազանդվելով Աստվածաշնչի ցուցումներին՝ մենք ավելի շուտ կենտրոնացած կմնանք գլխավորի վրա և այդպիսով պաշտպանված կլինենք շնությունից կամ ցանկացած այլ փորձությունից, որ կհանդիպի մեր ճանապարհին:

Իհարկե՛, մեզ ոչ միայն հարկավոր է խուսափել շնությունից, մենք չպետք է անգամ մոտիկ գանք այն վայրերին, որտեղ ապրում է գայթակղիչ կինը (Առակաց 5.10), և իհարկե՛, առավել ևս մեզ հարկավոր չէ մոտ գնալ նրա դռանը (Առակաց 5.8):

Վերջապես, հնարավոր է՝ մեկ այլ կնոջ կամ տղամարդու սիրելու փորձության դեմ լավագույն պաշտպանությունը հետևյալն է. սիրի՛ր քո սեփական ամուսնուն կամ կնոջը, «քո երիտասարդության կնոջը կամ ամուսնուն» (Առակաց 5.18): Ժողովող գրքի հեղինակը կրկնում է այս խորհուրդը. «Կյա՛նք վայելիր քո սիրած կնոջ հետ քո ունայն կյանքի բոլոր օրերում, որ քեզ տվել է արեգակի տակ քո բոլոր ունայն օրերում, որովհետև նա է քո բաժինը ապրողների մեջ, և արեգակի տակ քո քաշած աշխատանքի մեջ» (Ժողովող 9.9): Երախտապա՛րտ եղեք այն բանի համար, ինչ դուք ունեք, և այդ ժամանակ ստիպված չեք լինի ուրիշ վայրում մեկ այլ բան որոնել:

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 10.13-ը: Ունենալով այդպիսի խոստում՝ ի՞նչ վճռական և գործնական քայլեր է ձեզ հարկավոր ձեռնարկել հենց հիմա, որպեսզի պաշտպանվեք այն կրքերից, որ կարող են եռալ ձեր մեջ:

Երեքշաբթի **հունվարի 6**

Պաշտպանի՛ր քո բարեկամական հարաբերությունները

Ինչ-որ մեկը մի անգամ ասել է. «Տե՛ր, պաշտպանի՛ր ինձ իմ բարեկամներից, թշնամիներիս մասին ես ինքս կհոգամ»: Առակաց գիրքը մտահոգ է բարեկամության հարցում մարդկանց խոցելիությամբ. այն խորհուրդներ է տալիս այն մասին, թե ինչպես պահպանել ընկերներին, ինչպես նաև այն մասին, թե ինչպես անհրաժեշտության դեպքում պաշտպանվել նրանցից: Եբրայերեն «ընկեր» բառը նշանակում է

«հարևան» կամ «մերձավոր», նա, ով մեր կողքին է, ով արդեն դարձել է կամ կարող է դառնալ մեր ընկերը: Աստվածաշնչյան իմաստությունը գնահատում է մարդկային հարաբերությունները և կոչ է անում հոգ տանել այդ հարաբերությունների մասին ու հարգել դրանք:

Կարդացե՛ք Առակաց 6.1-5-ը: Ի՞նչ խնդիր է մատնացույց անում Սողոմոնը, և ինչպիսի՞ն կարող է լինել լուծումը: Ի՞նչ կարևոր հոգևոր սկզբունք կարելի է գտնել այստեղ: __

_____

_____

_____

_____

Թեև Թորան մարդկանց կոչ է անում օգնել աղքատներին և նրանց պարտքով գումար տալ՝ առանց տոկոսներ պահանջելու (Ելից 22.25), իմաստությունը մեզ պաշտպանում է պարտքեր ունեցող ընկերոջը անհեռատես ֆինանսական օգնություն ցուցաբերելուց: Բարեգործության պարտականությունը չի բացառում արդարությամբ վարվելու պարտականությունը (Ելից 23.2,3): Թեև մենք պետք է առատաձեռն լինենք, երբ կարող ենք, մենք նաև պետք է իմաստուն լինենք և անենք ամեն հնարավորը, որ մեր բարեգործությունը չհանգեցնի է՛լ ավելի մեծ խնդիրների (Առակաց 22.27):

Այսպիսով, Առակաց գիրքը մեզ իմաստուն խորհուրդ է տալիս: Առաջին նախագուշացումը վերաբերում է մեր խոսքերին: Որքա՜ն կարևոր է, որ մենք սթափ գնահատենք իրավիճակը և ինչ-որ բան խոստանալուց առաջ համոզվենք, որ ի վիճակի ենք օգնել մեր ընկերոջը: Իսկապես, մեր փոխհարաբերությունների ջերմությունը կամ հուզական պոռթկումը կարող են ստիպել մեզ՝ տալ խոստումներ, որոնց համար մենք կարող ենք հետագայում զղջալ:

Անկախ այն բանից, թե որքան բարի են եղել ձեր մտադրությունները, կարևոր է գործելուց առաջ մտածելը, և ձեզ խոստումներով չկապելը, որոնք դուք չեք կարողանա իրագործել: Իսկ եթե մենք ընկնում ենք դժվարին իրադրության մեջ, պետք է անենք ամեն հնարավորը, որ ուղղենք իրավիճակը, այդ թվում՝ խոնարհվենք, ընդունենք մեր սխալը և ողորմություն խնդրենք:

Ինչպե՞ս հավասարակշռել միմյանց բեռը տանելու մեր ձգտումը (Գաղատացիս 6.2) այս առակում մեզ տրված խրատի հետ:

Չորեքշաբթի **հունվարի 7**

Պաշտպանի՛ր քո աշխատանքը

Կարդացե՛ք Առակաց 6.6-8-ը: Ի՞նչ կարելի է սովորել մրջյունից: _____

_____

Բավական չէ, որ մրջյունները շատ են աշխատում (անգամ ավելի շատ, քան մարդիկ, եթե համեմատենք այն բեռը, որ նրանք ի վիճակի են տանել, այն բեռի հետ, որ մարդը կարող է տանել՝ իր քաշի համեմատ), նրանք աշխատում են ինքնուրույն և ղեկավարների կարիք չունեն: Նրանց ծանր աշխատանքի հիմնական պատճառը ապագայի մասին հոգալն է: Նրանք «սպասում են» դժվար ժամանակների (ձմռան) վրա հասնելուն: Այսպես մրջյունը մեզ սովորեցնում է մտածել ապագայի մասին, երբ մենք ծրագրեր ենք կազմում կամ մասնակցում ենք որևէ գործունեության: «Սա մի հարց է, որն առանձնահատուկ ուշադրություն է պահանջում յուրաքանչյուր ծնողից, յուրաքանչյուր ուսուցչից, յուրաքանչյուր սովորողից, յուրաքանչյուր մարդուց՝ ծեր թե երիտասարդ: Ոչ մի գործնական նախագիծ, ոչ մի կենսական ծրագիր չի կարող ամուր և կատարյալ լինել, եթե այն ներառում է միայն մարդկային կյանքի կարճ տարիները և չի տեղավորում հավիտենական ապագան» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 145):

Կարդացե՛ք Առակաց 6.9-11-ը: Ի՞նչ կարելի է սովորել ծույլից: _____

_____

Այդ ծույլն է, որ մրջյունից սովորելու բան ունի, և ոչ թե հակառակը. «Գնա՛ մրջյունի մոտ, ո՛վ ծույլ, նրա ճանապարհները տե՛ս և իմաստո՛ւն եղիր» (Առակաց 6.6): Մինչդեռ մրջյուններն աշխատում են, ծույլը քնած է: Այն ժամանակ, երբ մրջյունները հաջողությամբ աշխատում են բերքահավաքի ժամանակ, ծույլերը նստած են՝ ձեռքերը ծալած, որը ալարկոտության խորհրդանիշն է: Մրջյունները, իրենք իրենց հաղթահարելով, իրենց քաշը գերազանցող ծանրություններ են քարշ տալիս և պատրաստվում են ապագային, իսկ ծույլերը ապրում են ներկայով և զբաղված են միայն իրենք իրենցով:

Թեև այստեղ դատապարտվում են ծուլությունն ու ալարկոտությունը, մենք պետք է հիշենք նաև, որ կյանքը բաղկացած է ոչ միայն աշխատանքից և փող վաստակելուց: Ինչպե՞ս է աշխատանքային շաբաթվա համատեքստում

ներկայացված շաբաթ օրը օգնում մեզ՝ գտնելու ճիշտ հավասարակշռությունը:

Հինգշաբթի **հունվարի 8**

Պաշտպանի՛ր քեզ

Որոշակի չարիքների թվարկումից հետո, որոնք սպառնում են կյանքի երեք ոլորտներին՝ մեր ընտանիքին, մեր սոցիալական շփումներին և մեր աշխատանքին, Առակաց գիրքը պատկերում է ամբարիշտներին: Սա հեգնանք է՝ լի ծաղրով ու սուր հոգեբանական դիտարկումներով: Երկու հատվածները (Առակաց 6.12-15,16-19) զուգահեռ են և ունեն միևնույն բանաստեղծական ռիթմը, որը բաղկացած է յոթ հիմնական մտքերից: Ցույց է տրված ամբարիշտ մարդու ներքին աշխարհը, որը կապված է նրա սրտի խորհուրդների հետ և դրսևորվում է արտաքին գործողություններում:

Կարդացե՛ք Առակաց 6.14,18 և Մատթեոս 15.9-ը: Ի՞նչ կարևոր գաղափար են տալիս այս համարները: _____

_____

_____

«Եթե դուք խրախուսում եք դատարկ երազանքները՝ մտքին թույլ տալով կենտրոնանալ անվայել թեմաների վրա, ապա նշանակալի չափով մեղավոր եք Աստծո առջև, ինչպես եթե ձեր մտքերը վերածվեին գործողության» (Է. Ուայթ, Քրիստոնեական տուն, 334):

Ի՞նչ նախազգուշացումներ են տրվում Առակաց 6.12-19-ում: _____

_____

Այստեղ օգտագործված պատկերներն ու փոխաբերությունները լի են հեգնանքով: Ամբարիշտն իր ճանապարհներում հետևում է ծույլին: Թվում է, թե այս երկուսի տեսակետները տարբերվում են, և, այնուամենայնիվ, դրանք միևնույն դասն են կրում: Նրանցից ոչ ոք շահագրգռված չէ դրսից եկող խրատներով: Երկուսն էլ ղեկավարվում են սեփական իմաստությամբ և հակումներով: Ծույլերը քնած են, և ո՛չ նրանց ականջները, ո՛չ նրանց ոտքերը չեն գործում. Ամբարիշտների դեպքում գործում են միայն ոտքերն ու բերանները, բայց ոչ ականջները: Արդյունքը նույնն է. երկուսն էլ կգնան կործանման:

Միևնույն ժամանակ չարիքը գործում է երկու ուղղությամբ. այն վնաս է պատճառում ոչ միայն այն մարդուն, ում դեմ մեղք է գործվում,

այլ նաև իրեն՝ մեղանչողին: Ստախոսները վերջին հաշվով սկսում են հավատալ իրենց սեփական ստին: Հարկավոր է նաև նշել, որ ամբարշտության վերջնական արդյունքը թշնամանքն ու հակամարտություններն են, որոնք կարող են ազդել ողջ հասարակության վրա: Իսկապես, մեղքի հետևանքները հազվադեպ են սահմանափակվում իրենցով՝ մեղավորներով: Դրանք ազդում են նաև այլ մարդկանց վրա՝ նրանց չարիք բերելով:

Ուրիշ մարդկանց մեղքերն ինչպե՞ս են ազդել ձեր կյանքի վրա: Իհարկե՛, դրանք հսկայական ազդեցություն են գործել: Դուք ի՞նչ դասեր կարող եք քաղել սրանից: Որքանո՞վ պետք է զգույշ լինեք դուք, որպեսզի ձեր արարքները չվնասեն ուրիշներին:

Ուրբաթ հունվարի 9

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի ստեղծագործություններից կարդացե՛ք հետևյալ գլուխները. «Քրիստոնեական տուն» գրքից՝ «Բարոյական նորմերը», 326-339, «Ապաքինման ծառայություն» գրքից՝ «Ուրիշների հետ շփվելիս», 489-491, «Դաստիարակություն» գրքից՝ «Այլ ակնառու դասեր», 117-120:

«Նա, ով ուսումնասիրում է Աստվածաշունչը, պետք է սովորի նրա էջերը հետազոտել ոչ թե ապացուցելու համար իր կարծիքը, այլ որպեսզի իմանա, թե ինչ է ասում Աստված...

Մտավոր անկրթության և բարոյական սահմանափակության գլխավոր պատճառներից մեկը արժանավոր նպատակների վրա կենտրոնանալու անկարողությունն է: Մենք հպարտանում ենք ընդարձակ գրադարանով, բայց գրքերի ավելացումը, անգամ ամենաարժեքավոր բովանդակությամբ, կարող է ի սկզբանե չարիք լինել: Տպագիր նյութի հսկայական հոսքն ակամայից հապճեպ և մակերեսորեն կարդալու սովորություն է ձևավորում, ինչի արդյունքում միտքը կորցնում է խորը ընկալելու ընդունակությունն ու, դրա արդյունքում, կապակցված ու ճկուն մտածողությունը» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 189):

«Բնակարանները, որ իրենց համար կառուցում են մրջյունները, ցուցադրում են հմտություն և հաստատակամություն: Մեկ ան-

գամից մրջյունը կարող է միայն մեկ ցորենահատիկ տանել, բայց ջանասիրության և հաստատակամության շնորհիվ նա հրաշքներ է գործում:

Սողոմոնը մատնացույց է անում մրջյունի աշխատասիրությունը՝ հանդիմանելով նրանց, ովքեր իրենց ժամանակն անց են կացնում ծուլությամբ կամ հոգին և մարմինն ավերող գործերով: Մրջյունը հոգ է տանում ապագայի մասին, սակայն բանականությամբ օժտվածներից շատերը չեն պատրաստվում ապագա անմահ կյանքին» (Է. Ուայթ, Խորհուրդներ ծնողներին, ուսուցիչներին և աշակերտներին, 190):

Հարցեր քննարկման համար

1. Եվս մեկ անգամ խորհեցե՛ք այն մասին, թե ինչպես կարող ենք օգնել ուրիշներին, անգամ եթե դա թանկ արժենա մեզ համար: Մենք ինչպե՞ս ենք վերաբերվում այս դասում շարադրվածին՝ այս համարի համեմատությամբ. «Ոչ ոք նրանից ավելի մեծ սեր չունի, որ մեկն իր անձը դնի իր բարեկամների համար» (Հովհաննես 15.13):
2. Բնության աշխարհից է՞լ ինչ դասեր կարող ենք քաղել, որպեսզի կիրառենք մեր կյանքում: Հաշվի առնելով, որ մենք ապրում ենք մեղավոր աշխարհում, ինչո՞ւ պետք է զգույշ վարվենք այն դասերի հետ, որ քաղում ենք:
3. Առակաց 6.16-19-ում կարդացե՛ք յոթ նողկալի բաների մասին: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է Աստված այդքան կործանարար համարում դրանք:

ԴԱՍ 3 ԿՅԱՆՔԻ ՈՒ ՄԱՀՈՒ ՀԱՐՑ

ՀՈՒՆՎԱՐԻ 10-16

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Մատթեոս 5.21-30, Առակաց 6.21, 7.3, Առակաց 6.23, 7.2, 6.24, 6.30,31, Առակաց 7.26,27:

Հիշելու համարը.
«Որովհետև պատվիրանքը ճրագ է, և օրենքը՝ լույս, և խրատի հանդիմանությունները՝ կյանքի ճանապարհ» (Առակաց 6.23):

Երկու եղբայր մենակ էին մնացել տանը: Տնից դուրս գալով՝ մայրը նրանց խստորեն նախազգուշացրել էր՝ ձեռք չտալ տորթին, որ հենց նոր էր թխել: Իր խոսքերին կշիռ հաղորդելու համար նա ավելացրել էր, որ հակառակ դեպքում կպատժի նրանց:

Երբ նա գնաց, տղաներին միայն մի քանի րոպե պետք եղավ՝ որոշելու համար, որ իրենք, միևնույնն է, ուտելու են տորթը: «Ի՞նչ անենք, տորթ է, էլի: Չէ՞ որ դա կյանքի ու մահու հարց չէ, - մտածում էին նրանք: - Չէ՞ որ մայրիկը մեզ չի սպանի, ուրեմն արի՛ ուտենք»:

Սակայն Առակաց գրքի ուսուցչի համար այն ամենը, ինչ ասում է ինքը, իրականում կյանքի ու մահու հարց է: Նրա խոսքերը համոզիչ են և երբեմն շատ արտահայտիչ: Հիսուսն Ինքը շատ համոզիչ բառեր էր օգտագործում, երբ խոսքը վերաբերում էր հավիտենական կյանքի ու մահվան հարցերին (տե՛ս Մատթեոս 5.21-50-ը): Եվ զարմանալի չէ. չէ՞ որ մեր վերջնական վիճակը, մեր հավիտենական ճակատագիրը (իսկ ի՞նչ կարող է դրանից ավելի կարևոր լինել) կախված է այն որոշումներից, որ մենք ընդունում ենք այստեղ և հիմա: Այդ պատճառով հարկ է, որ մենք լրջորեն վերաբերվենք այսքան կտրուկ խոսքերով արտահայտված ճշմարտություններին:

Միաշաբթի **հունվարի 11**

Օրենքը մեր կյանքում

Կարդացե՛ք Առակաց 6.21 և 7.3-ը: Ինչպե՞ս պետք է հասկանալ օրենքի նկատմամբ վերաբերմունքի մասին խոսող փոխաբերությունները, որոնցում հիշատակվում են մարմնի զանազան մասերը: _____

_____

Ինչպես մենք տեսանք նախորդ դասերից մեկում, Առակաց գրքում «սիրտը» իրենից ներկայացնում է հույզերի ու մտքերի կենտրոնը: Մեզ հրամայելով օրենքը կապել մեր սրտի վրա (Առակաց 6.21)՝ ուսուցիչն ի նկատի ունի, որ մենք պետք է միշտ սերտ կապի մեջ լինենք օրենքի հետ: Ոչ մի վայրկյան չի կարելի կորցնել կապն օրենքի հետ, որովհետև օրենքը սահմանում է մեղքը (Հռոմեացիս 7.7): Ուսուցիչը նաև պնդում է, որ այդ օրենքը գրվի սրտի տախտակների վրա (Առակաց 7.3) ճիշտ այնպես, ինչպես Տասնաբանյան Աստծո կողմից գրվեց քարե տախտակների վրա (Ելից 24.12):

Սրտի մեջ գրված օրենքը նշանակում է, որ օրենքը պարզապես կանոնների արտաքին հավաքածու չէ, որ դրվում է մեզ վրա: Օրենքը պետք է ներառի մեր դրդապատճառները, մեր գաղտնի մտադրությունները և դրանով իսկ լինի մեր ներքին «ես»-ի մի մասը: Սա ևս մի արտահայտություն է, որը լուսաբանում է, թե մեր կյանքում ինչպես է իրականանում Պողոս առաքյալի խոստումը. «Քրիստոսը ձեզանում, այն փառքի լույսը» (Կողոսացիս 1.27):

Պատվիրանները վզին փաթաթելը նույնպես նշանակում է, որ մենք պետք է մեր կողքին պահենք դրանք: Հին մարդիկ իրենց թանկարժեք իրերը կապում էին թելից՝ այն փաթաթելով պարանոցի շուրջը: Պարանոցն այն տեղն է, որի միջոցով օդն անցնում է թոքեր՝ տալով շնչառություն և կյանք. պատկերացումների համախումբ, որոնք արտահայտվում են եբրայերեն նեֆեշ («հոգի») բառով, որը նշանակում է «կյանք» և ծագում է «կոկորդ» և «շնչել» նշանակող բառից:

Պատվիրանը մատներին փաթաթելը նշանակում է օրենքը բերել գործողության դաշտ: Ուսուցիչը խոսում է մատների մասին. դա խորհրդանշում է առավել անձնական ու նրբանկատ արարքները: Օրենքը պետք է ազդեցություն գործի ոչ միայն կենսական կարևոր որոշումների վրա, որ մենք ընդունում ենք, այլ նաև առավել աննշանների (տե՛ս Ղուկաս 16.10):

Թեև Աստվածաշնչում այս փոխաբերությունների օգտագործումն ընդգծված խորհրդանշական բնույթ էր կրում, հարկավոր է նշել, որ այդ խորհրդանիշները տառացիորեն էին ընկալվում եբրայական, քրիստոնեական և մահմեդական ավանդույթներում: Սա ակնհայտորեն երևում է հրեաների կողմից տֆիլինների (ֆիլակտերիաների) օգտագործման մեջ, որ նրանք կապում են պարանոցին, քրիստոնյաների կողմից պարանոցից կախվող խաչերի, և մահմեդականների (և քրիստոնյաների) կողմից՝ մատների մեջ համրիչների օգտագործման մեջ:

Խորհրդանիշները կարող են օգտակար լինել, բայց ինչո՞ւ մենք պետք է զգույշ լինենք, որ խորհրդանիշով չփոխարինենք այն իրողությունը, որ այն ներկայացնում է:

Երկուշաբթի **հունվարի 12**

Լույսը և կյանքը

Կարդացե՛ք Առակաց 6.23-ը: Ինչպե՞ս է կապված օրենքը «լույսի» հետ: _____

_____

_____

_____

Աստվածաշնչում Աստծո Խոսքը կամ Նրա օրենքը համեմատվում է լույսի հետ. «Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար, և լույս՝ իմ ճանապարհի համար» (Սաղմոս 119.105): Եբրայական մտածողության մեջ կապ գոյություն ունի «օրենքի» և «լույսի» գաղափարների միջև: Այնպես, ինչպես լամպն է լուսավորում այն ուղին, որով մենք ընթանում ենք, օրենքն էլ օգնում է մեզ՝ մնալու ճիշտ ճանապարհի վրա. այսինքն՝ երբ մենք բախվում ենք բարոյական ընտրությանը, այն օգնում է մեզ՝ հասկանալու, թե որ ընտրությունն է ճիշտ, անգամ եթե երբեմն առողջ բանականությունը կամ անձնական նպատակահարմարությունը գայթակղեն մեզ՝ անտեսելու օրենքը:

Հիշեցե՛ք աստվածաշնչյան օրինակներ, որոնք մատնանշում են մարդկանց, ովքեր ընտրել են՝ ըստ Աստծո օրենքի վարվելը՝ չնայած դա չանելու համոզիչ հիմքերին: Մենք ի՞նչ կարող ենք սովորել նրանց հնազանդությունից: Ո՞ր դեպքերում կարող է սխալ թվալ հավատարիմ մնալու նրանց որոշումը՝ գոնե մարդկային տեսակետից:

Կարդացե՛ք Առակաց 6.23-ը՝ Առակաց 7.2-ի հետ միասին: Ինչպե՞ս է կապված օրենքը «կյանքի» հետ: _____

_____

_____

Մեղանչման ժամանակներից ի վեր հավիտենական կյանքի հույսը մարդը ձեռք է բերում ոչ թե օրենքի կատարման, այլ Քրիստոսի հանդեպ հավատի միջոցով: Սակայն օրենքին և նրա ներկայացրած սկզբունքներին հնազանդությունը շարունակում է կենտրոնական դեր խաղալ հավատի կյանքում (տե՛ս Մատթեոս 19.17, Հայտնություն 14.12-ը): Մենք հնազանդվում ենք, որովհետև Տերն Իսրայելին ասել է հազար տարի առաջ. «Ես Եմ Եհովան՝ ձեր Տեր Աստվածը» (Ղևտացոց 18.4): Աստծո օրենքը կապված է «կյանքի» հետ, պարզապես այն պատճառով, Աստված մեր կյանքի աղբյուրն է: Այդ սկզբունքը ներկայացնում է ճշմարիտ հոգևորությունը. մենք վստահում ենք Աստծուն և մեր ներկայիս կյանքի մասին Նրա խոստումներին՝ ճիշտ այնպես, ինչպես մենք հավատում ենք հավիտենական կյանքի Նրա խոստումներին:

Հիսուսն ասել է. «Ես եմ աշխարհի լույսը. Ով որ իմ հետևից գա, նա խավարում չի գնա, այլ կյանքի լույսը կընդունի» (Հովհաննես 8.12): Այս հրանալի խոստումն ինչպե՞ս է կատարվել կամ կատարվում Տիրոջ հետ ձեր կյանքում:

Երեքշաբթի հունվարի 13

Պայքար փորձությունների դեմ

Ինչպես մենք հենց նոր տեսանք, Առակաց 6.23-ի հեղինակը՝ Սուրբ Հոգու ազդեցության ներքո, ուղղակիորեն կապում է լույսն ու Աստծո օրենքով ապրած կյանքը: Հաջորդ համարում նա համոզիչ օրինակ է բերում, թե ինչպես օրենքը, լինելով լույս և կյանք, կարող է հուսալի հոգևոր պաշտպանություն առաջարկել մեզ:

Առակաց 6.24-ն ինչի՞ մասին է նախազգուշացնում մեզ: Բացի ակնհայտից, է՞լ ինչ, ոչ այդքան ակներև նախազգուշացում է տրվում այստեղ: _____

_____

_____

Երբ հավատավոր մարդը հանդիպում է փորձությանը, մեծագույն գայթակղությունն այն է, որ նա փորձում է կրոնական պատճառ

գտնել՝ անօրենությունն արդարացնելու համար: Սխալ վարքն արդարացնելու համար Աստծուն օգտագործելը ոչ միայն հայհոյության սոսկալի ձև է, այլև այդպիսի գործողությունները մեծագույն խաբեություն են թաքցնում: Ի վերջո, եթե մարդը համարում է, որ «Աստված իր հետ է», ինչպե՞ս կարելի է առարկել դրան: Նման բան կարող է տեղի ունենալ անգամ շնության դեպքում: «Աստված ինձ ցույց տվեց, որ այդ տղամարդը [այդ կինը] հենց նա է, ում հետ ես պետք է լինեմ»: Եթե մարդն անկեղծորեն հավատում է դրան, ո՞վ կամ ի՞նչը կարող է լինել ավելի կարևոր այն բանից, ինչ ցույց է տվել նրան «Աստված»:

Ուշադրություն դարձրեք նաև, որ տղամարդուն գայթակղում է ոչ միայն կնոջ ֆիզիկական գեղեցկությունը: Կինն օգտագործում է լեզուն, փաղաքուշ խոսքերը, որպեսզի իր ծուղակը գցի զոհին: Որքա՜ն հաճախ են նուրբ և գայթակղիչ խոսքերով տղամարդիկ և կանայք հայտնվել փոխզիջումային իրավիճակների մեջ՝ երբեմն նույնիսկ կրոնական եզրույթներ հագցնելով դրանց: Առակաց գրքի հեղինակը ձգտում է նման խաբեությունից նախազգուշացնել մեզ:

Օրենքը իդեալական հակաթույն է այն «մեղրի» դեմ, որ «կաթեցնում են նրա շրթունքները»: Միայն օրենքի հրամանը և հնազանդության պարքը կօգնեն մեզ՝ կայուն մնալու հրապուրիչ խոսքերի դիմաց, որոնք այնքա՜ն ճիշտ ու գեղեցիկ են հնչում: Իսկապես, գայթակղող կինը ոչ միայն գեղեցիկ կհամարի ձեզ, այլ նաև իմաստուն և հետաքրքիր: Նա անգամ կարող է հոգևոր կարիքներ ունենալ, որը է՛լ ավելի վտանգավոր է, «Աստծո հանդեպ սերը» կարող է մեղքի արդարացում դառնալ:

Խորհեցե՛ք միայն, թե որքան հեշտ է խաբել մեզ, անգամ հավատի երևութականությամբ, արդարացնել ցանկացած տեսակի սխալ գործողություններ և ոչ միայն շնությունը: Ինչո՞ւ այդ դեպքում բացարձակ հնազանդությունը Աստծո օրենքին՝ մեր միակ հուսալի պաշտպանությունն է հանդիսանում անգամ մեր սեփական բանականության և նրա ծուղակների դեմ:

Չորեքշաբթի հունվարի 14

«Մի՛ գողացիր»

Անմիջապես շնության մասին նախազգուշացումից հետո (Առակաց 6.24-29) հեղինակն սկսում է խոսել մեկ այլ մեղքի՝ գողության

մասին (30,31 համարներ): Երկու պատվիրանների միջև կապը (շնություն և գողություն) ցույց է տալիս, որ անհնազանդությունը մեկ պատվիրանի առումով կարող է ազդել նաև մյուսների վրա: Եթե մենք պատրաստ ենք փոխզիջման գնալու, ընտրելու, թե որ պատվիրանին հնազանդվենք, որին՝ ոչ, դա կարող է ավելի վտանգավոր լինել, քան կատարյալ անհնազանդությունը օրենքին: «Մեր աշխարհում արատի ամենաուժեղ հենարանը ոչ թե սանձարձակ մեղավորի կամ ընկած վտարանդիի հրեշավոր կյանքն է, այլ այն կյանքը, որ թվում է բարեպաշտ, անկեղծ ու ազնիվ, բայց որտեղ միայն մեկ մեղք կա, որտեղ խրախուսվում է միայն մեկ արատ... Նա, ում հայտնի են կյանքի, ճշմարտության և ազնվության մասին բարձր հասկացությունները, և ով, չնայած դրան, գիտակցաբար խախտում է Աստծո սուրբ Օրենքի պատվիրաններից մեկը, իր ազնիվ պարգևները վերածում է մեղքի համար գայթակղության» (Է.Ուայթ, Դաստիարակություն, 150):

Կարդացե՛ք Առակաց 6.30,31-ը: Այս համարներն ի՞նչ են ասում այն մասին, թե ինչպես է վարվում հուսահատված մարդը: _____

_____

_____

Աղքատությունն ու կարիքը արդարացում չեն գողության համար, անգամ եթե «սոված էր» (համար 30): Թեև քաղցած գողին պետք չէ արհամարհել, նա դեռ պետք է յոթնապատիկ հատուցի այն, ինչ գողացել է. սա ցույց է տալիս, որ անգամ հուսահատ դրությունը չի կարող արդարացնել մեղքը: Մյուս կողմից, Աստվածաշունչը պնդում է, որ մեր պարտականությունն է բավարարել աղքատների կարիքները, որպեսզի նրանց դրությունը չստիպի նրանց գողանալ՝ կենդանի մնալու համար (տե՛ս Երկրորդ Օրինաց 15.7,8-ը):

Հետաքրքիր է, որ շնությունից անցնելով գողության, համարը կրկին վերադառնում է շնությանը (Առակաց 6.32-35): Այս երկու մեղքն իսկապես նման են: Երկու դեպքում էլ մարդը անօրինական կերպով յուրացնում է այն, ինչ պատկանում է մեկ ուրիշին: Սակայն գողության և շնության սկզբունքային տարբերությունն այն է, որ առաջին մեղքը բավարարվում է միայն իրերի կորստով, այն դեպքում, երբ երկրորդի ժամանակ ինչ-որ շատ ավելի մեծ բան է տեղի ունենում: Որոշ դեպքերում գողության պատճառած վնասը կարելի է փոխհատուցել, իսկ ամուսնական անհավատարմության դեպքում, հատկապես, երբ խոսքը վերաբերում է երեխաներին, վնասը կարող է անդառնալի լինել:

«Մի՛ շնացիր»: այս պատվիրանն արգելում է ոչ միայն կեղտոտ և անբարոյական արարքները, այլ նաև զգայական մտքերն ու ցանկությունները կամ էլ ցանկացած այլ գործողություն, որը հանգեցնում է դրանց գրգռմանը... Քրիստոսը, Ով Աստծո օրենքի հանդեպ մարդու պարտականությունների խորացված ըմբռնում էր սովորեցնում, ասում էր, որ անմաքուր միտքը կամ հայացքը նույնպիսի մեղք են համարվում, ինչպես և հանցավոր արարքը» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 308):

Հինգշաբթի **հունվարի 15**

Մահվան սպառնալիքը

Մարդկանց մեծ մասը մեղանչելիս չի մտածում մահվան մասին. նրանց մտքում ուրիշ բան կա՝ որպես կանոն, իրենց ցանկության անհապաղ բավարարումը և բավականությունը, որ ստանում են մեղքից: Այս ամենն է՛լ ավելի է խորանում նաև նրանով, որ տարածված մշակույթը հաճախ գովերգում է շնությունը և այլ անօրենություններ-ը: Ի հակադրություն սրան՝ Առակաց գիրքը ճիշտ վերաբերմունք է առաջարկում մեղքի հանդեպ, և այս տեսակետը շատ տարիներ անց կրկնել է Պողոս առաքյալը. «Որովհետև մեղքի վարձքը մահն է» (Հռոմեացիս 6.23):

Կարդացե՛ք Առակաց 7.22,23-ը: Ենացողին ի՞նչն է խոցելի դարձնում մահվան առջև: _____

_____

_____

Նա, ով գնում է «նրա (կնոջ) հետևից», պատկերվում է որպես մի մարդ, ով կորցրել է իր անհատականությունն ու կամքը: Նա այլևս չի մտածում: «Իսկույն» բառը խոսում է այն մասին, որ նա իրեն երկար մտածելու ժամանակ չի տալիս: Նա համեմատվում է «սպանդանոց գնացող արջառի» հետ, «սպանվելու գնացող» եղջերուի հետ (ռուսերեն թարգմանությամբ), և թռչունի հետ, որ «շտապում է դեպի ծուղակը»: Նրանցից ոչ մեկը չի հասկանում, որ իրենց կյանքը վտանգի տակ է:

Կարդացե՛ք Առակաց 7.26,27-ը: Ի՞նչն է անբարոյական կնոջը դարձնում մահացու վտանգավոր: _____

_____

_____

_____

Միանգամայն հնարավոր է, որ կինն այստեղ հանդես է գալիս որպես ինչ-որ ավելի մեծ մի բանի խորհրդանիշ, քան «պարզապես» անառակն է: Փաստորեն նա մարմնավորում է իմաստությանը հակադրվող արժեքները: Սողոմոնն օգտագործում է այս փոխաբերությունը, որպեսզի իր աշակերտին նախազգուշացնի չարի ցանկացած դրսևորումից: Վտանգն ահռելի է, քանի որ այս կինը ոչ թե պարզապես վիրավորում է, այլ սպանում է, և նրա զորությունն այնքան մեծ է, որ կործանել է անգամ ամենաուժեղ տղամարդկանց: Այլ խոսքերով՝ ուրիշները, ովքեր եղել են ձեզանից առաջ, ավելի ուժեղները, քան դուք եք, չեն կարողացել կենդանի մնալ նրա ձեռքերում: Այս հատվածի համընդհանուր լեզուն հստակ կերպով ցույց է տալիս, որ աստվածաշնչյան հեղինակը խոսում է ողջ մարդկության մասին: (համարի եբրայերեն «շեոլ» բառը ոչ մի ընդհանուր բան չունի «դժոխքի» հետ, ինչպես ընդունված է համարել. այն նշանակում է վայր, որտեղ ներկայումս գտնվում են մեռելները՝ գերեզմանը):

Ի վերջո, բանն այն է, որ մեղքը, լինի դա շնություն, թե ուրիշ բան, հանգեցնում է կատարյալ ոչնչացման, որը հակադրությունն է հավիտենական կյանքի, որ Աստված մեզ տալիս է Հիսուս Քրիստոսի միջոցով:

Զարմանալի չէ, որ, ինչպես ասվել է այս դասի ներածության մեջ, խոսքերն այսքան կտրուկ են. չէ՞ որ, բառի բուն իմաստով, մենք գործ ունենք կյանքի և մահու հարցերի հետ:

Մտաբերե՛ք մի քանի «ուժեղ» մարդկանց, ովքեր լրջորեն մեղանչել են: Ինչո՞ւ պետք է դա ստիպի մեզ՝ վախենալ ինքներս մեզ համար: Ո՞րն է ձեր միակ փրկությունը:

Ուրբաթ հունվարի 16

Հետագա ուսումնասիրության համար

«Սատանան մարդկանց առաջարկում է այս աշխարհի թագավորությունները, եթե միայն նրանք ենթարկվեն իր իշխանությանը: Շատերը ենթարկվում են նրա հորդորներին և զոհաբերում են հավիտենությունը: Ավելի լավ է մահանալ, քան մեղանչել. ավելի լավ է կարիքի մեջ ապրել, քան խարդախությամբ զբաղվել, ավելի լավ է քաղցած լինել, քան ստել» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 4, 495):

«Ավելի լավ է ձեզ համար ընտրե՛ք չքավորությունը, լուտանքները, բարեկամներից անջատումը, միայն թե ձեր հոգին մի՛ պղծեք մեղքով: Ավելի լավ է մահը, քան ամբարշտությունն ու Աստծո Օրենքի խախտումը՝ ահա՛ յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյայի կարգախոսը: Որպես մարդիկ, որ իրենց համարում են բարեհորոգիչներ և Աստծո Խոսքի ամենահանդիսավոր, մաքրագործող ճշմարտությունները թանկ գնահատողներ՝ մենք պետք է դրոշը բարձրացնենք անհամեմատ ավելի վեր, քան այն ծածանվում է ներկայումս» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 5, 147):

Հարցեր քննարկման համար

1. Ինչպե՞ս լրջորեն վերաբերվել մեղքի վտանգին և միևնույն ժամանակ չընկնել մոլեռանդության ծուղակը: Ինչպե՞ս կարելի է հնազանդ լինել օրենքին՝ չընկնելով օրինամոլության գիրկը:
2. Կարդացե՛ք Ելից 20.1-17: Ինչպե՞ս են բոլոր Տասը պատվիրանները կապակցված միմյանց հետ: Ինչո՞ւ, եթե մենք բացահայտորեն խախտում ենք մի պատվիրանը, մենք, հավանաբար, խախտում ենք նաև այլ պատվիրաններ: (Տե՛ս Հակոբոս 2.11-ը): Դուք ի՞նչ օրինակներ կարող եք գտնել այն բանի, թե ինչպես մեկ պատվիրանի խախտումը հանգեցրել է մյուսների խախտմանը:
3. Խորհեցե՛ք նաև այն մասին, թե ինչպես կարող են մարդիկ օգտագործել կրոնը՝ արդարացնելու համար սխալ գործողությունները: Դա այնքան էլ դժվար չէ, հատկապես եթե «սերը» համարենք բարին չարից տարանջատող հիմնական չափանիշը: Ի վերջո, խորհե՛ք այն բոլոր վատ բաների մասին, որ արվում են «սիրո» պատրվակով: Ինչպե՞ս է շարունակում գործել օրենքը՝ որպես մարդկանց կա՛մ իրենք իրենցից, կա՛մ էլ ուրիշներից պաշտպանելու միջոց, ովքեր ի վերջո կարող էին մեղքի մեջ գցել նրանց:
4. Եվս մեկ անգամ քննարկեք միաշաբթի օրվա դասի վերջում գրված հարցը, որտեղ խոսվում է իրողությունը խորհրդանիշներով փոխարինելու գաղափարի մասին: Դա ինչպե՞ս կարող է տեղի ունենալ: Հիշեցե՛ք, օրինակ, կռապաշտությունը: Հոգևոր ճշմարտությունների խորհրդանիշ հանդիսացող ի՞նչ ավանդույթներ կարող են ընդունել մարդիկ՝ որպես հենց այդ ճշմարտություններ:

ԴԱՍ 4

ՀՈՒՆՎԱՐԻ 17-23

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Առակաց 8.1-21, Մատթեոս 16.26, Առակաց 8.22-31, Ծննդոց 1.31, Առակաց 8.32-36, Առակաց 9.1-18:

Հիշելու համարը.

«Տերն ինձ ուներ իր ճանապարհի սկզբում, իր վաղեմի գործերից առաջ» (Առակաց 8.22):

Եվ կրկին Առակաց գիրքը խոսում է իմաստության մասին: Հետազոտության տեքստերից երևում է, որ իմաստությունը ճշմարտություն է՝ Ճշմարտությունը, ինչպես որ այն գոյություն ունի Աստծո, Սկզբնաղբյուրի և ամեն ճշմարտության Հիմքի մեջ:

Ճշմարտության «բացարձակ» բնույթի այս շեշտադրումը հակադրվում է որոշ ժամանակակից գաղափարների, հատկապես արևմտյան, որոնք ճշմարտությունը դիտարկում են որպես հարաբերական հասկացություն՝ կախված հանգամանքներից և մշակույթից, և տարբեր մարդկանց մոտ տարբեր է:

Բայց նման մոտեցումը աստվածաշնչյան հիմք չունի: Իմ ճշմարտությունը պետք է լինի նույնպիսին, ինչպիսին և ձերն է, պարզապես այն պատճառով, որ «ճշմարտությունը» համընդհանուր է: Այն չի պատկանում որևէ որոշակի մեկի, այլ ընդհանուր առմամբ ողջ մարդկությանը՝ անկախ այն բանից՝ ընդունո՞ւմ է այն ողջ մարդկությունը, թե՞ ոչ:

Հետաքրքիր է, որ Հիսուսին ուղղված Պիղատոսի նշանավոր հարցը՝ «Ի՞նչ է ճշմարտությունը» (Հովհաննես 18.38) ծագել է ի պատասխան Հիսուսի հայտարարության. «Ամենքը, ով որ ճշմարտությունից են, իմ ձայնը լսում են» (Հովհաննես 18.37): Ճշմարտությունը՝ բացարձակ ճշմարտությունը, գոյություն ունի և անգամ խոսում է մեզ հետ. իսկ մեզ համար կարևոր է, թե մենք ականջ կդնե՞նք նրան և կհնազանդվե՞նք այն բանին, ինչ նա ասում է:

Միաշաբթի **հունվարի 18**

Իմաստությունը կանչում է

Կարդացե՛ք Առակաց 8.1-21-ը: Ո՞րն է իմաստության արժեքը՝ համաձայն այս տեքստերի: _____

_____

_____

Իմաստությունն այնքան կարևոր է, որ այն պետք է հասնի յուրաքաչյուրին: Աստված ստեղծել է բոլոր մարդկանց, իսկ Քրիստոսը մահացել է մեզանից յուրաքանչյուրի համար: Այդ պատճառով իմաստությունը, աստվածաճանաչողությունն ու փրկությունը, որ Նա առաջարկում է, նախատեսված են յուրաքանչյուր մարդու համար:

Ուշադրությո՛ւն դարձրեք այն բառերին, որ օգտագործվում են իմաստության խոսելու ընդունակությունը նկարագրելու համար՝ «կանչում է», «ձայն է տալիս», «աղաղակում է», «կանչում եմ», «ձայն», «պիտի խոսեմ», «իմ շրթունքները բացեմ», «լեզու» (հայերենում՝ քիմք), «շրթունքներ», «խոսքեր»: Ինչպես էլ մեկնաբանվեն այս փոխաբերությունները, պարզ է այն, որ իմաստությունը պետք է փոխանցվի, այսինքն՝ այն պետք է լսելի լինի բոլորի համար, ովքեր ունկնդրելու են: Ի վերջո, ինչպես մենք տեսանք անցյալ շաբաթ, այն ամենն, ինչ ասում է իմաստությունը, կենաց և մահու հարց է:

Ութ անգամ իմաստությունը խոսում է իր խոսքերի ճշմարտության մասին: Հետաքրքիր է, որ իմաստության այստեղ բերված նկարագրությունը նմանություններ ունի Երկրորդ Օրինաց 32.4-ում պատկերված Տիրոջ հետ: Սրա մեջ զարմանալի ոչինչ չկա, որովհետև Աստված՝ որպես ամեն գոյություն ունեցողի Արարիչ, (տե՛ս Հովհաննես 1.1-3-ը) ողջ ճշմարտության հիմքն է:

Կարդացե՛ք Առակաց 8.10,11-ը: Ի՞նչ են ասում այս համարներն իմաստության մասին: _____

_____

_____

Այսքան շատ մարդիկ ապրել են և մինչև այժմ էլ ապրում են չիմացության, հիմարության և խավարի մեջ: Նրանցից շատերն ապրում են առանց հույսի կամ կեղծ հույսերով: Սա ցավալի է. չէ՞ որ իմաստությունն ու ճշմարտությունն այնքան հիասքանչ են, լեցուն հույսով, ներկա ավելի լավ կյանքի խոստմամբ և հավիտենական կյանքի վստահությամբ՝ նոր երկնքում ու նոր երկրում, և այս ամենը՝

Հիսուսի զոհի շնորհիվ: Աշխարհի ողջ հարստությունը ոչինչ չի նշանակում (տե՛ս Ժողովող 2.11-13-ը)՝ Աստծուն ճանաչելու համեմատությամբ:

Կարդացե՛ք Մատթեոս 16.26-ը և հարցրե՛ք ինքներդ ձեզ, թե որքանով է ձեր կյանքը լավ արտացոլում այս խոսքերի ճշմարտությունը:

Երկուշաբթի հունվարի 19

Իմաստությունը և արարչագործությունը

Կարդացե՛ք Առակաց 8.22-31-ը: Ինչպե՞ս է կապակցված իմաստությունն արարման հետ: _____

_____

_____

Այս համարներում իմաստությունը խորհրդավոր կյերպով կապված է Տիրոջ հետ՝ որպես Արարիչ: Այս բանաստեղծական հատվածը շատ ընդհանուր խոսքեր ունի Ծննդոց 1 և 2 գլուխներում նկարագրված արարման պատմության հետ և անգամ արտացոլում է դրա գրական կառուցվածքը, որը կազմակերպված է երեք տարրերի՝ երկընքի, ջրի և հողի հետ: Այս նմանաբանության նպատակն է՝ ընդգծել իմաստության հիմնական արժանիքը. եթե Աստված Ինքը աշխարհն ստեղծելու համար օգտագործել է իմաստությունը, եթե իմաստությունը հնագույն գործիքն է՝ տիեզերքից էլ ավելի հին, և այդքան կարևոր նշանակություն ունի դրա գոյության համար, մենք առավել ևս պետք է օգտագործենք իմաստությունն ամեն ինչում, ինչ անում ենք կյանքում:

Այստեղ նաև ուժգին շեշտադրվում է իմաստության աստվածային ծագումը: Այս պոեմի առաջին բառը՝ «Տերը»՝ Յահվեն է, Ում մասին ասված է, որ Նա «ուներ» (երկրորդ բառը) «իմաստություն» [ինձ]: Եբրայերեն *քանահ* բառը, որը թարգմանված է «ուներ», ունի նշանակության լրացուցիչ երանգ՝ ավելի շուտ «ծնունդ», քան «արարում» (տե՛ս Երկրորդ Օրինաց 32.6, Ծննդոց 4.1-ը): Հաջորդ բառը տեխնիկական բառ է, որը կապակցվում է Ծննդոց գրքի արարման պատմության հետ, *«ռեշիթ»*-ն է («սկիզբ»). այն հանդիպում է Ծնընդոց գրքի առաջին համարում. «Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը:

Սակայն «սկիզբ» բառը Առակաց 8.22-ում օգտագործվում է մի փոքր այլ կերպ, քան Ծննդոց 1-ում է: Ծննդոց 1.1-ում բառը կապված

է բուն արարչագործության հետ, այն դեպքում, երբ Առակաց 8.22-ում բառը կապված է Իր՝ Աստծո, Նրա ճանապարհների *(դերեկ)* հետ, որ նշանակում է Նրա բնությունը: Այդպիով, իմաստությունը Իր՝ Աստծո բնության մի մասն է:

Հետևաբար, իմաստությունը ժամանակի մեջ գոյություն է ունեցել դեռևս նախքան տիեզերքի արարումը: Իմաստության գոյությունը այն ժամանակ, երբ եղել է միայն Աստված, պատկերացում է տալիս հին իմաստության մասին՝ «հավիտենից ի վեր»:

Այսպիսով, իմաստությունը չի բխում մեզանից, այլ, ավելի շուտ, բացվում է մեզ. դա այն է, ինչ մենք իմանում ենք, ինչ սովորում ենք. մենք այն չենք ստեղծում ինքներս մեր մեջ: Իհա՛րկե, գնալ մեր սեփական լույսի ներքո՝ նշանակում է քայլել խավարի մեջ: Մեզ ասված է, որ Հիսուսն է «ճշմարիտ Լույսը, որ ամեն մարդու լուսավորում է» (Հովհաննես 1.9): Յուրաքանչյուր մարդ ունի դրա կարիքը:

Երեքշաբթի հունվարի 20

Ցնծությունն արարման ժամանակ

Ծննդոց 1-ում մենք տեսնում ենք, որ արարման յուրաքանչյուր քայլ ավարտվում է միևնույն կրկներգով. «Եվ Աստված տեսավ, որ բարի է» (տե՛ս Ծննդոց 1.4,10,12,18,21,25,31-ը): Վերջին քայլը (համար 31) է՛լ ավելի հեռուն է գնում. «Եվ ահա, շատ բարի է»: Եբրայերեն «լավ» բառը բավականության գաղափար է բովանդակում և ենթադրում է փոխհարաբերություններ: Արարման շաբաթվա ավարտին Աստված դադար է տալիս, որպեսզի լիակատար չափով վայելի Իր արարչագործությունը (Ծննդոց 2.1-3): Այդ դադարի ժամանակ օրհնվում է շաբաթ օրը: Ճիշտ նույն կերպ Առակաց գրքի մեր պոեմն էլ ավարտվում է այն պատկերով, թե ինչպես է իմաստությունը վայելում արարչագործությունը:

Կարդացե՛ք Առակաց 8.30,31-ը: Ինչո՞ւ էր ուրախանում իմաստությունը: _____

_____

_____

_____

Իմաստության ուրախությունն արտացոլում է Աստծո ուրախությունն արարման ժամանակ: Այդ ուրախությունը ոչ միայն տեղի է ունենում «ամեն օր, արարման յուրաքանչյուր փուլում, այլ նաև իրենով

պսակում է արարման գործընթացի ավարտը, երբ արարումը (երկրի վրա կյանքի) ավարտվեց:

Առակաց 8-ում մենք գտնում ենք իմաստության ուրախանալու պատճառը. «Եվ իմ զվարճությունը մարդկանց որդիների հետ էր» (համար 31): Արարման շաբաթվա ավարտին Աստված փոխհարաբերությունների մեջ մտավ մարդկանց հետ: Աստծո այս «հանգիստը» և Նրա ուրախությունը շաբաթվա աշխատանքից հետո, անմիջական կապ ունի մարդկության կողմից շաբաթը պահելու հետ. «Արարչի օրինակով նա [մարդը] նույնպես կարող է ուրախությամբ, բավականությամբ և բավարարվածության զգացումով հետ նայել ավարտված աշխատանքին: Այդպես մարդը կարող է ուրախանալ ոչ միայն Աստծո արարչագործությամբ, այլ նաև Աստծո արարչագործության իր պատասխանատու կառավարմամբ՝ առանց այն շահագործելու»*:

Կարդացե՛ք Կողոսացիս 1.15-17, 2.3, Հայտնություն 3.14 և Հովհաննես 1.1-14-ը: Այս տեքստերը ի՞նչ են ասում մեզ Հիսուսի դերի մասին բուն արարման մեջ: Ինչո՞ւ է Նրա դերը՝ որպես Արարիչ, այդքան կարևոր Նրա՝ որպես մեր Փրկչի դերն ըմբռնելու համար:

Չորեքշաբթի **հունվարի 21**

Իմաստության կոչը

Առակաց գրքի ութերորդ գլխի վերջին մի քանի համարները մեզ վերադարձնում են անձնական տեսանկյանը՝ այն բանի գործնական կիրառմանը, ինչ նշանակում է իմաստություն ունենալ: Իմաստության նախագո լինելու, աշխարհի արարման ժամանակ Իմաստության առկա լինելու մասին մտավոր գիտելիքը, անշուշտ, կարևոր է, բայց Աստվածաշնչում ճշմարտությունը միշտ ինչ-որ պահի իջնում է մարդկային մակարդակի և ազդում է մեր արձագանքի վրա՝ ամեն ինչի հանդեպ, որ ստացել ենք Հիսուսում:

Կարդացե՛ք Առակաց 8.32-36-ը: Կենսականորեն կարևոր ի՞նչ ուղերձ է բովանդակվում այստեղ: _____

_____

_____

_____

* Kenneth A. Strand, The Sabbath in Scripture and History (Review and Herald Publishing Association, 1982), էջ 23:

Եբրայերեն բառը, որ թարգմանված է «երանի՜», նշանակում է երջանիկ: Այդ հատվածում «երանի» բառը կապված է երկու դատողության հետ: Առաջինը նկարագրում է գործողություն. «Երանի՜ նրանց, որ պահում են իմ ճանապարհները» (համար 32): Այդ նույն լեզուն օգտագործված է Սաղմոս 119.1,2-ում՝ օրենքի վերաբերյալ. «Երանելի են ճանապարհով անմեղները, որ գնում են Տիրոջ օրենքում. երանելի են նրա վկայությունները պահողները...»:

Երկրորդը նկարագրում է վերաբերմունք. «Երանի՜ այն մարդուն, որ ինձ մտիկ է անում» (համար 34): Երկու դեպքում էլ պահանջը ենթադրում է մշտական ջանքեր: Բավական չէ պարզապես հայտնաբերել ճիշտ ճանապարհը. մենք պետք է «գնանք» նրանում: Բավական չէ պարզապես Աստծո Խոսքը լսելը՝ մենք պետք է ամեն օր «պահենք» այն և հետևենք նրան, ինչ գիտենք: Ահա թե այդ մասին ինչպես է խոսում Հիսուսը. «Երանի՜ նրանց, որ Աստծո խոսքը լսում են և նրան պահում» (Ղուկաս 11.28):

«Գոյություն ունի՞ իսկական երջանկություն՝ անհնազանդության և ֆիզիկական ու բարոյական օրենքների խախտման ճանապարհին: Քրիստոսի կյանքը ցույց է տալիս երջանկության ճշմարիտ աղբյուրը և այն ուղին, որով կարելի է այն գտնել... Եթե մարդիկ ցանկանում են իսկապես երջանիկ լինել, ապա նրանք պետք է ուրախությամբ կատարեն իրենց պարտքը, հավատարմությամբ կատարեն իրենց աշխատանքը, որ հանձնարարված է իրենց՝ կատարյալ Օրինակի նմանությամբ վերափոխելով իրենց սրտերն ու կյանքերը » (Է. Ուայթ, «Իմ կյանքն այսօր», 162):

Երջանկությունը կարող է անորսալի լինել. որքան ավելի շատ ենք մենք ձգտում դեպի նա, այնքան ավելի դժվար է թվում նրան հասնելը: Ինչո՞ւ հավատարմությունն Աստծուն, ի տարբերություն երջանկության ձգտման, պետք է լինի մեր գլխավոր գերակայությունը: Ո՞րն է ավելի հավանական (և ինչո՞ւ). երջանկության որոնումը երջանկություն կբերի, թե՞ ամենից առաջ Աստծո Արքայությունը փնտրելը:

Հինգշաբթի **հունվարի 22**

Կամ... կամ

Իմաստության կոչելուց հետո Առակաց գրքի իններորդ գլխի ոգեշնչված հեղինակն իր լսարանին թախանձագին կոչ է անում՝ ընտրու-

թյուն կատարել երկու կենսակերպերի միջև. ընտրել իմաստությունը կամ հիմարությունը: Առաջին և վերջին վեց համարները (Առակաց 9.1-6,13-18) համաչափ են և ցույց են տալիս հակառակ ճամբարների միջև առկա հակադրությունը:

Համեմատե՛ք Առակաց 9.1-6 և Առակաց 9.13-18-ը: Ո՞րն է իմաստության և հիմարության տարբերությունը: _____

_____

_____

1. Իմաստությունը գործուն է և մասնակցում է արարմանը. նրա գործունեությունը նկարագրելու համար յոթ բայ է օգտագործվում (1-3 համարներ): Յոթ սյուները, որ նա տաշել է (1-3 համարներ), մատնացույց են անում արարման յոթ օրերը: Հիմարությունն, ընդհակառակը, նստած է և ոչինչ չի անում, միայն ձևացնում է, թե իրենից ինչ-որ մեկն է ներկայացնում, երբ իրականում այն «հիմար է և ոչինչ չգիտի» (համար 13):
2. Թեև իմաստությունն ու հիմարությունը միանման լսարան են հավաքում (ուշադրությո՛ւն դարձրեք 4 և 16 համարների նմանությանը), այն, ինչ նրանք առաջարկում են իրենց ունկնդիրներին, էապես տարբերվում են իրարից: Իմաստությունն իր հյուրերին հրավիրում է ուտել հաց և խմել ըմպելիք, որ ինքն է պատրաստել (համար 5): Հիմարությունը չի կարող ոչինչ առաջարկել, բացի գողացված ապրանքներով պարծենալուց (համար 17):
3. Իմաստությունը մեզ կոչ է անում հրաժարվել հիմարությունից և ապրել: Հիմարությունն առավել տանելի է, նա չի պահանջում, որ մենք ինչ-որ բանից հրաժարվենք, բայց արդյունքում մեզ մահ է սպասվում: Նրանք, ովքեր հետևում են իմաստությանը, առաջ կշարժվեն, նրանք «կվարվեն խոհեմության ճանապարհում» (համար 6): Նրանք, ովքեր կհետևեն հիմարությանը, կդոփեն նույն տեղում և «չգիտեն» (համար 18):

Կարդացե՛ք Առակաց 9.7-9-ը: Ինչպե՞ս են իմաստուն մարդը և չար մարդն արձագանքում իմաստության խրատներին: Ի՞նչն է իմաստուն մարդուն ավելի իմաստուն դարձնում ամբարիշտից: _____

_____

_____

Իմաստության բանալին խոնարհությունն է: Իմաստուն մարդն ընդունակ է սովորելու և բաց սրտով արձագանքելու խրատներին: Իմաս-

տությունը գալիս է միայն նրա մոտ, ով երեխայի նման զգում է աճի անհրաժեշտությունը: Ահա թե ինչու էր Հիսուսն այդքան պարզ սովորեցնում. «Եթե... չլինեք երեխաների նման, չեք մտնի երկնքի արքայությունը» (Մատթեոս 18.3):

Ուրբաթ **հունվարի 23**

Հետագա ուսումնասիրության համար

«Տիեզերքի Տիրակալը միայնակ չէր Իր բարեգործություններում: Նրա կողքին էր Նա, Ով հասկանում էր Նրա մտադրությունները և կարող էր Նրա հետ կիսել՝ բոլոր արարված էակներին երջանկություն պարգևելու ուրախությունը: «Սկզբում էր Բանը, և Բանն Աստծո մոտ էր, և Բանն Աստված էր: Նա սկզբում Աստծո մոտ էր» (Հովհաննես 1.1,2): Քրիստոսը՝ Խոսքը, Աստծո միածինը, մեկ էր հավիտենական Հոր հետ՝ մեկ՝ բնույթով, բնավորությամբ և մտադրություններով: Միայն Նրան՝ միակին էին մատչելի Աստծո խորհուրդներն ու մտահղացումները... Աստծո Որդին ասում է Իր մասին. «Տերն ինձ ուներ իր ճանապարհի սկզբում, իր վաղեմի գործարքներից առաջ: Ես օծվել եմ հավիտենից ի վեր... երբ որ գցում էր երկրի հիմքերը, այն ժամանակ ես նրա մոտ ճարտարապետ էի, և նրա ուրախությունն էին ամեն օր՝ զվարճանալով նրա առաջ ամեն ժամանակ» (Առակաց 8.22-30)» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 34):

Հարցեր քննարկման համար

1. Ինչո՞ւ է Ծննդոց գրքի մեջ արարման պատմության արժանահավատության հանդեպ հավատը հանդիսանում աստվածաշնչյան իմաստության հիմքը: Ինչո՞ւ է էվոլյուցիայի գաղափարը բոլոր առումներով հակասում Աստվածաշնչին:
2. Առավել մանրամասն կա՛նգ առեք այն գաղափարի վրա, որ ճշմարիտ իմաստությունը մենք չենք կարող առաջ բերել ինքներս, այն պետք է բացվի մեզ: Բերե՛ք կարևոր ճշմարտությունների օրինակներ, որ մենք երբեք չէինք իմանա, եթե դրանք մեզ չբացահայտվեին աստվածային ներշնչանքով: Օրինակ՝ Մենք ինչպե՞ս կիմանայինք խաչի վրա Քրիստոսի մահվան և Նրա ծառայության մասին, եթե դա բացված չլիներ: Կամ՝ յոթերորդ օրվա՝ շաբաթի, կամ էլ երկրորդ գալստյան մասին ճշմարտությունները:

3. Ինչպե՞ս է Ծննդոց 1-ում բացահայտված Աստծո աշխատանքը վկայում այն մասին, որ բարին չի կարող խառնվել չարի հետ: Ձեր պատասխանն ինչպե՞ս է հարաբերակցվում այն հանրահայտ գաղափարին, որ կարելի էր, օրինակ, էվոլյուցիայի տեսակետը ներառել Ծննդոց գրքում պատմվող արարման պատմության մեջ:
4. Այն փաստը, որ Աստված վայելում էր Իր արարածը, ինչպե՞ս է օգնում մեզ ձեռք բերել՝ շաբաթ օրը պահելու առավել խորը և առավել հարուստ փորձառություն:

ԴԱՍ 5

ՀՈՒՆՎԱՐԻ 24-30

ԱՐԴԱՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Առակաց 10.1-14, Մատթեոս 19.19, Առակաց 11, 12, Հովհաննես 3.16, Առակաց 13:

Հիշելու համարը.
«Օրհնություններ կան արդարի գլխին, և բռնությունը կխցկի ամբարիշտների բերանը» (Առակաց 10.6):

Ինչպես հետևում է վերնագրից, այս դասը խոսում է արդարի օրհնությունների մասին: Եբրայերեն *ցադդիք* բառը, որ թարգմանված է «արդար», հիմնական բառն է մեր համարներում: *«Ցեդեք»* բառը (հաճախ թարգմանվում է «արդարություն), որից այն ծագում է, դրսևորվում է ողջ գրքի ներածության մեջ. «Սողոմոնի առակները... իմաստության խրատն ընդունելու համար, այսինքն՝ արդարություն *[ցեդեք]*...» (Առակաց 1.1-3): Առակաց գիրքը ջանում է մեզ ասել, որ իմաստությունն արդարություն է, իսկ «արդարություն»՝ նշանակում է գնալ (ապրել) Աստծո հրամանների համաձայն՝ գնալով հավատով և հնազանդությամբ, ինչի մեջ Տերը կանչել է մեզ և ինչ հրամայել է անել: Արդարությունը պարգև է, որ բխում է Աստծուց: Արդարության հականիշը հիմարությունն է և անհավատարմությունը: Իմաստությունը արդարացիություն է կամ արդարություն, հիմարությունը մեղք է և ամբարշտություն: Եվ այն համարներում, որ մենք կդիտարկենք, դրանց միջև հակադրությունն ակնհայտ է:

Միաշաբթի **հունվարի 25**

Արդարությունը ամբողջական է

Կարդացե՛ք Առակաց 10.1-7-ը: Կյանքի և հավատի ի՞նչ զանազան սկզբունքներ են բացահայտվում այս համարներում: _____

_____

Պատմում են մի մարդու մասին, ով, գտնվելով նավակում, սկսել էր իր ոտքերի տակ անցք շաղափել այն տեղում, ուր ինքը նստած էր: Երբ մյուս ուղևորները պահանջեցին դադարեցնել, նա պատասխանեց. «Դա ձեր գործը չէ՛: Սա ի՛մ նստատեղն է»: Ճիշտ նույնքան անհեթեթ փաստարկ հաճախ բերում են մեղավորները՝ ջանալով արդարացնել իրենց վարքը. «Սա ի՛մ կյանքն է, այն ձեզ չի վերաբերում»: Իհարկե՛, այն ամենը, ինչ մենք անում ենք կամ չենք անում, ազդեցություն է գործում մյուսների վրա, հատկապես նրանց, ովքեր ապրում են մեր կողքին: Մեզանից ո՞վ է, որ իր վրա չի զգացել այլ մարդկանց գործողությունների արդյունքները՝ լավ թե վատ:

Հոգևոր և նյութական կյանքի միջև միասնականության սկզբունքը դիտարկվում է 3-5 համարներում: Հատվածի հիմնական միտքն այս է. նախ՝ չարը կամ բարոյականության բացակայությունը չի պարգևատրվում, անգամ եթե մարդը հարուստ է, երկրորդ՝ արդարությունը միշտ պարգևատրվում է այս կամ այն կերպ, անգամ եթե մարդն աղքատ է:

6 և 7-րդ համարներում մենք տեսնում ենք այն մասին Հիսուսի առավել վաղ ձևակերպումը, որ ցանկությունն արդեն շնություն է, իսկ ատելությունը հավասար է սպանության: Խոսքերի հետևում ատելությունը թաքցնելը միշտ չէ, որ ստացվում է: Մեր մարմնի լեզուն և ձայնի տոնը հաճախ են մատնում մեր չար մտքերի մասին: Այլ մարդկանց հետ լավ փոխհարաբերությունների լավագույն մեկնակետը հետևյալն է. «Քո ընկերին սիրես քո անձի պես» (Ղևտացոց 19.18, համեմատե՛ք Մատթեոս 19.19-ի հետ): Ինչպես հստակ կերպով երևում է այդ համարներից, լավ տպավորությունը, որ դուք թողել եք մարդկանց վրա, կարող է տևական ազդեցություն ունենալ ուրիշների վրա: Ի վերջո, մենք գործ ունենք որոշ չափով առողջ բանականության հետ. ավելի լավ չէ՞ ունենալ լավը, քան վատը:

Մոտ ժամանակներում ի՞նչ կարևոր որոշում ստիպված կլինեք ընդունել դուք: Եթե դուք դեռ չեք ընդունել այն, խոր-

հեցե՛ք այն ազդեցության մասին, որ ձեր ընտրությունը կարող է գործել ուրիշների վրա՝ դրական, թե բացասական:

Երկուշաբթի **հունվարի 26**

Արդարի շրթունքները

Շրթունքները (և ամեն բան, ինչ դրան հարում է՝ քիմքը և լեզուն) Առակաց գրքի ամենակարևոր մարմնամասն է: Հակոբ արքայի թարգմանության նոր տարբերակում «շուրթեր» բառն օգտագործվում է 50 անգամ, «քիմքը»՝ 41 անգամ, իսկ «լեզուն»՝ 19: Խոսքի մեջ մարմնի այս մասի օգտագործումը առանձնապես կարևոր թեմա է Առակաց 10-29-ում:

Հիմնական նախադրյալը վճռորոշ է. մեր խոսքերը վիթխարի ուժ ունեն, որն ընդունակ է մարդուն բերելու կա՛մ դեպի բարին, կա՛մ դեպի չարը: Լեզուն կարող է լինել լավագույն կամ վատթարագույն պարգևը, որ մեզ տրված է: Այս համարժեքությունն Առակաց գրքի ամենակարևոր դասերից մեկն է: Իսկապես, շուրթերն ստեղծում են կյանքը, բայց նրանք կարող են նաև մահվան բերել:

Կարդացե՛ք Առակաց 10.11-14-ը: Ինչո՞վ են արդարի խոսքերը տարբերվում հիմարի խոսքերից: _____

_____

_____

_____

Ուշադրությո՛ւն դարձրեք «կյանքի աղբյուր» արտահայտությանը 11-րդ համարում: Այն խորհրդանշորեն ցույց է տալիս իմաստության հատկանիշները: Այն օգտագործվում է Տիրոջը՝ կյանքի Աղբյուրին նկարագրելիս (Սաղմոս 36.9: Միևնույն պատկերն օգտագործվում է սրբարանի վերաբերյալ, որից ջրի աղբյուր է հորդում (Եզեկիել 47. 1,2): Հիսուսն օգտագործում է այս փոխաբերությունը, որ ներկայացնի Հոգու պարգևը (Հովհաննես 4.14): Այնպես որ, արդարի շրթունքները «կյանքի աղբյուրի» հետ համեմատելը նրան կապում է Իր՝ Աստծո հետ:

Այդ շրթունքները բնութագրում է «կյանքի» դրական աղբյուրը: Այս հատկանիշն ասում է մեզ, թե ինչպիսին պետք է լինի շրթունքների ճիշտ գործածությունը: Դրանք պետք է լինեն բարու և ոչ թե չարի ուժ, կյանքի և ոչ թե մահվան աղբյուր: Այն, ինչ ասված է այստեղ, դիտարկվում է նաև Հակոբոս 3.2-12-ում:

Հիշեցե՛ք նաև, որ հենց խոսքի, «իր զորության խոսքի» միջոցով (Եբրայեցիս 1.3) Աստված արարեց երկինքն ու երկիրը:

Խորհեցե՛ք, թե ինչ անհավատալի զորություն ունի խոսքը: Ձեր խոսքերով դուք կարող եք՝ սեփական ուժերի հանդեպ վստահություն ներշնչել մարդկանց, քաջալերել, հույս պարգևել կամ էլ կոտրել նրանց և վնաս հասցնել ոչ պակաս, քան ֆիզիկական հարձակումն է: Որքանո՞վ եք դուք զգույշ, երբ օգտագործում եք ձեր լեզվի ուժը:

Երեքշաբթի **հունվարի 27**

Արդարի հույսը

«Ուղիղների ճշմարտությունը նրանց կառաջնորդի, բայց նենգավորների ծռությունը նրանց կփչացնի» (Առակաց 11.3): Ի՞նչ ապացույցներ ունեք դուք այս համարի ճշմարտացի լինելու վերաբերյալ: Ի՞նչ օրինակներ եք տեսել կամ լսել, որտեղ դրսևորվել է այս հոգևոր ճշմարտությունը: Միևնույն ժամանակ, դուք ի՞նչ դեպքեր գիտեք, որոնք ապացուցում են, որ այս համարը, գոնե առայժմ, պետք է ընդունել հավատով: _____

_____

_____

_____

Կարդացե՛ք Առակաց 11-ը: Թեև այս գլուխը շատ տարբեր թեմաներ է շոշափում, որո՞նք են հավատավորի ստացած մեծամեծ օրհնություններից մի քանիսը, և ինչպե՞ս է դա տարբերվում այն բանից, ինչ տեղի է ունենում ամբարիշտների հետ: _____

_____

_____

Ապագայի մասին մտքերը և անտեսանելիի համարժեք գնահատականը (տե՛ս Բ Կորնթացիս 4.18-ը) դրդում են արդարներին՝ ապրելու արդար կյանքով: Ապագայի հանդեպ իրենց հույսերի շնորհիվ արդարներն իրենց պահում են խոնարհությամբ, արդարությամբ և կարեկցանքով:

Մյուս կողմից, ամբարիշտներն ապրում են միայն ներկայով. նրանք անհանգստանում են միայն նրանով, ինչ տեսնում են, նաև

անհապաղ հատուցում ստանալով: Նրանք իրենց մասին ավելի շատ են մտածում, քան մյուսների մասին, և պատրաստ են դիմելու խաբեության ու բռնության: Օրինակ, վաճառողները, ովքեր խաբում են իրենց գնորդներին, միգուցե անհապաղ հատուցում են ստանում՝ մեծ շահույթի տեսքով, սակայն վերջին հաշվով նրանք կարող են կորցնել իրենց հաճախորդներին և սնանկանալ (Առակաց 11.3,18):

Խորհեցե՛ք մի քանի որոշումների մասին, որ դուք պետք է ընդունեք, և այն մասին, թե ինչպես եք դուք ընդունում դրանք: Որքանո՞վ են հաշվի առնվում երկարաժամկետ հեռանկարները ձեր որոշումների մեջ (օրինակ՝ հավիտենությունը):

Չորեքշաբթի հունվարի 28

Արդարների ճշմարտությունը

Կարդացե՛ք Առակաց 12-ը և ուշադրությունը կենտրոնացրե՛ք այն բանի վրա, ինչ ասված է այստեղ խոսքերի, մասնավորապես՝ ճշմարտության կամ ստի մասին: Ի՞նչ ուղերձ ենք գտնում այստեղ ազնվության և կեղծավորության մասին: _____

_____

_____

_____

Փիլիսոփա Սիսելլա Բոկը համոզիչ կերպով ցույց է տվել, թե որքան կործանարար կարող է լինել սուտը հասարակության համար: Նա գրում է. «Հասարակությունը, որի անդամներն ի վիճակի չեն տարբերակել ճշմարտացի խոստումները կեղծերից, փլուզվում է» (*Lying: Moral Choice in Public and Private Life* (New York: Pantheon Books, 1978), 19): Նույն կերպ Ավգուստինոսը, ինչպես նշված է Բոկի գրքի նախաբանում, նշել է, որ «երբ ճշմարտության հանդեպ հարգանքը քայքայված կամ անգամ թեթևակի թուլացած է, ամեն բան անորոշ է դառնում (էջ XV):

Էլեն Ուայթը գրել է. «Սուտ խոսող շրթունքները նողկալի են Տիրոջ առջև: Նա հռչակել է, որ սուրբ քաղաք չի մտնի «ոչ մի անմաքրություն անող և պղծություն և ստություն գործող»: Միայն ճշմարտությունն ասելու սովորությունը պետք է դառնա մեր կյանքի մի մասը: Ճշմարտության հանդեպ թեթևամիտ, մակերեսային վերաբերմունքը,

երկերեսանիությունը, ճշմարտությունը սեփական եսասիրական շահերին հարմարեցնելը նշանակում է մարդու նավաբեկություն հավատում... Ճշմարտությունը չասող մարդը էժան գնով վաճառում է իր հոգին: Երբեմն նրան թվում է, թե սուտը իրեն փրկում է ծայրահեղ վիճակներում, թե խաբելով ինքն ավելի շատ հաջողություն է ունենում գործերում, քան եթե ազնվորեն վարեր դրանք: Բայց վրա է հասնում պահը, երբ նա ինքը դադարում է վստահել մարդկանց: Ինքը, լինելով ստախոս, դադարում է վստահել մյուսներին» (Իմ կյանքն այսօր, 331):

Երբ մենք խորհում ենք այն մասին, թե ինչ վիթխարի զորությամբ են օժտված բառերը, մենք պետք է մտածենք նաև ստի մասին, որովհետև ստի մի հսկայական քանակություն փոխանցվում է խոսքերով: Ո՞վ չի ունեցել խղճի խայթ, դավաճանության, պղծված լինելու զգացողություն, երբ ստել է: Դժվար չէ պատկերացնել լիակատար քաոսն այն հասարակության մեջ, որտեղ սուտը ավելի շուտ բնականոն է, քան չափանիշից շեղում:

Եվս մեկ տեսանկյուն կա. ստի ազդեցությունը հենց իր՝ ստախոսի վրա: Ոմանք այնքան են վարժվել կեղծիքին, որ դա նրանց չի անհանգստացնում, թեև շատերը ստելիս իսկապես մեղքի կամ ամոթի զգացում են ունենում: Դա լավ է, որովհետև նշանակում է, որ նրանք դեռևս որոշ չափով ընկալ են Սուրբ Հոգու հանդեպ:

Սակայն պատկերացրե՛ք, թե ինչ վտանգի մեջ է նա, ով ստում է և անգամ չի էլ անհանգստանում դրա համար:

Վերջին անգամ ե՞րբ եք դուք խաբել: Ի՞նչ եք զգացել այդ ժամանակ:

Հինգշաբթի **հունվարի 29**

Պարգև արդարի համար

Ինչպես մենք տեսանք Առակաց գրքում, ցուցումների և խրատների մեծ մասը տրված է մարդկանց երկու տիպերի հակադրման ձևով. իմաստուն մարդը վարվում է այսպես, իսկ հիմարը՝ այսպես, արդար մարդն անում է սա, իսկ ամբարիշտը՝ սա:

Իհարկե՛, իրականում մեզանից յուրաքանչյուրի մեջ կա և՛ մի փոքր իմաստություն, և՛ մի փոքր հիմարություն: Բացառությամբ Հիսուսի՝ մենք ամենքս մեղավորներ ենք և ամենքս «Աստծո փառքից պակասած ենք» (Հռոմեացիս 3.23): Բարեբախտաբար, մենք հրաշալի խոստում ունենք. թեև մենք մեղավորներ ենք, հավատով «ձրի ենք

արդարանում Նրա շնորհով՝ այն փրկության ձեռքով, որ Հիսուս Քրիստոսում է» (Հռոմեացիս 3.24):

Ի վերջո, բոլոր մարդիկ կհայտնվեն երկու ճամբարներից մեկում՝ կա՛մ փրկվածների, կա՛մ կործանվածների մեջ:

Կարդացե՛ք Հովհաննես 3.16-ը: Յուրաքանչյուր մարդ ի՞նչ երկու այլընտրանքների հետ է ստիպված լինում բախվել: _____

_____

_____

Կարդացե՛ք Առակաց 13-ը: Այս գլուխն ինչպե՞ս է հակադրում կյանքն ու արդարների և ամբարիշտների ճակատագիրը: _____

_____

_____

Իմաստունը համեմատվում է ճրագի հետ, որի լույսը վառվում է երկար ու վառ («կզվարթանա»), իսկ ամբարիշտը համեմատվում է ճրագի հետ, որ հանգչում է (Առակաց 13.9): Իմաստուն մարդը կվայելի իր աշխատանքի բարի պտուղը, իսկ մեղավորը չարիք է հնձելու (համարներ 2, 25): Իրենց որդիների միջոցով (Առակաց 13.22) իմաստուններն ապագա ունեն անգամ մահից հետո, իսկ ամբարիշտները իրենց հարստությունը կթողնեն անծանոթ մարդկանց և անգամ արդարին (Առակաց 13.22):

Հիմնական միտքն այն մասին է, որ հավատի և Տիրոջը հնազանդության կյանքն ավելի լավ է, քան անհնազանդության և հիմարության կյանքը:

Եթե մի կողմ թողնենք հավիտենական կյանքի խոստումների հարցը, որո՞նք այն ամենօրյա առավելությունները, որ դուք զգացել եք Քրիստոսի հանդեպ հավատի կյանքի շնորհիվ:

Ուրբաթ **հունվարի 30**

Հետագա ուսումնասիրության համար

«Բավական չէ իրեն Քրիստոսին հավատացող հռչակելը և եկեղեցու մատյանում գրանցված լինելը... Ինչ էլ մենք ինքներս ասենք մեր սեփական արդարության մասին, այն ոչինչ չարժե, եթե մեր գործերում չհայտնվի Քրիստոսը» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 312, 313):

«Քրիստոսի ժամանակներում մեծագույն մարդկային մոլորություններից մեկն այն էր, որ ճշմարտությանն ուղղակի համաձայնելն է հենց արդարությունը: Սակայն փորձը ցույց է տալիս, որ ճշմարտության մասին տեսական գիտելիքները բավական չեն հոգու փրկության համար... Պատմության ամենամռայլ էջերը համեմված են կրոնասեր մոլեռանդների կատարած հանցագործություններով... Այդ նույն վտանգը գոյություն ունի նաև այսօր: Շատերն իրենց համարում են քրիստոնյաներ՝ պարզապես այն պատճառով, որ որոշակի աստվածաբանական հավատամքների են հետևում: Բայց նրանք գործնական կյանքում չեն իրագործում ճշմարտությունը ... Մարդիկ կարող են հավատ և ճշմարտություն դավանել, բայց եթե դա նրանց չի դարձնում անկեղծ, զուսպ և հոգևոր, ապա հավատը անեծք է դառնում նրանց համար, իսկ նրանց միջոցով՝ նաև աշխարհի համար:

Արդարությունը, որ սովորեցնում էր Քրիստոսը, սրտի և կյանքի հնազանդեցումն է Աստծո կամքին» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 309, 310):

Հարցեր քննարկման համար

1. Քննարկեցե՛ք, թե ինչպես են մեր որոշումները՝ դրական թե բացասական, ազդում ուրիշների վրա: Ինչո՞ւ է դա կյանքի անխուսափելի փաստ: Իր ողջ ակներևությամբ այս ճշմարտությունը դրսևորվեց մեղանչման պատմության մեջ. չէ՞ որ այսօր էլ, մի քանի հազար տարի անց, Ադամի ու Եվայի ընտրության ազդեցությունը զգացվում է մեզանից յուրաքանչյուրի կյանքում: Ինչ-որ մեկին կարող է թվալ, որ հարկավոր է գնահատել բարու և չարի ազդեցությունը, որ հետևում է մեր որոշումներին, և վարվել՝ դրանից ելնելով, բայց դա վտանգավոր է, որովհետև մենք հաճախ չգիտենք, թե իր հետևից ինչ կբերի մեր ընտրությունը: Ինչո՞ւ այդ դեպքում Աստծո և Նրա օրենքների լույսի ներքո մենք պետք է ընտրենք անել այն, ինչ ճիշտ է՝ անկախ այն բանից, թե որքանով են ահարկու թվում հետևանքները:
2. Առակաց գիրքը կտրուկ տարբերություն է դնում արդարի և հիմարի միջև, և այդ համարներից մենք իմանում ենք, թե ինչն է ճիշտ, և ինչն է սխալ: Սակայն ինչո՞ւ մենք պետք է շատ զգուշավոր լինենք այն հարցում, թե ում պետք է հիմար անվանել: Մյուս կողմից, որքա՞ն հաճախ ենք մենք խաբվել նրանց կողմից, ում երբևէ արդար էինք համարում:

ԴԱՍ 6

ՀՈՒՆՎԱՐԻ 31–ՓԵՏՐՎԱՐԻ 6

ՀԱՎԱՏՈՎ, ՈՉ ԹԵ ԱՉՔԻ ՏԵՍԱԾՈՎ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Առակաց 14, Դանիել 7.25, Մարկոս 12.30,31, Առակաց 15.3, Եսայիա 5.20, Առակաց 15, Մատթեոս 20.26-28:

Հիշելու համարը.
«Կա ճանապարհ, որ ուղիղ է մարդու առջև, բայց նրա վերջը մահվան ճանապարհներ են» (Առակաց 14.12):

Ինչպես գրել է Պողոս առաքյալը՝ «Հիմա հայելու մեջ օրինակով ենք տեսնում» (Ա Կորնթացիս 13.12): Մենք այնքան քիչ բան ենք տեսնում, և անգամ այն, ինչ տեսնում ենք, միշտ անցնում է մեր անձնական ընկալման զտիչի միջով: Մեր աչքերն ու ականջները միայն նեղ պատկերացում են տալիս մեզ շրջակա աշխարհի մասին:

Մենք կարող ենք մոլորվել ոչ միայն արտաքին աշխարհի, այլ նաև ինքներս մեզ վերաբերող հարցերում: Մեր երազանքները, մեր տեսակետներն ու մեր կարծիքները կարող են մեզ շատ աղավաղված պատկերացում տալ այն մասին, թե ինչպիսին ենք մենք իրականում, և այն բոլոր մոլորությունների մասին, որ կարող են չափազանց կարևոր դուրս գալ:

Ի՞նչ կարող ենք մենք անել՝ նման խաբեությունից մեզ պաշտպանելու համար: Առակաց գիրքը մեզ հիմնարար խորհուրդ է տալիս: Մենք չպետք է ապավինենք ինքներս մեզ, ինչպես անում են հիմարները: Ընդհակառակը, մենք պետք է վստահենք Տիրոջը, Ով վերահսկում է իրադարձությունների ընթացքը, անգամ այն ժամանակ, երբ թվում է, թե ամեն բան այնպես չէ: Կարճ ասած, մենք պետք է ապրենք հավատով, ոչ թե աչքի տեսածով, որովետև մեր տեսողությունը կարող է չափազանց խաբուսիկ լինել՝ ցույց տալով լոկ մի փոքր մասն այն ամենի, ինչ գոյություն ունի, և, որ ավելի վատ է, աղավաղել անգամ այն քիչը, որ մենք տեսնում ենք:

Միաշաբթի **փետրվարի 1**

Հիմարի վստահությունը

Կարդացե՛ք Առակաց 14-ը: Այստեղ ի՞նչ է ասված հիմարների մասին: _____

_____

Հիմարը գոռոզաբար է խոսում (Առակաց 14.3): Հիմարի առաջին նկարագրությունը վերաբերում է նրա «գոռող բերանին»: Հիմարի բերանի հետ կապված գավազանի պատկերը ենթադրում է նրա հնարավոր պատիժը: Հիմարի հպարտ խոսքերը իրենց հետևից բերում են բերանին հասցված ապտակ, և դա տարբերվում է իմաստուն մարդկանց շրթունքների գործողություններից, որոնք, պահպանում են նրանց (տե՛ս նաև Դանիել 7.8):

Հիմարը ծաղրում է իմաստությունը (Առակաց 14.6-9): Թեև թվում է, թե հիմարն իմաստություն է որոնում, իրականում նա չի հավատում դրան և կասկածամտրեն է վերաբերվում դրան: Նա չի գտնի այն, որովհետև, իր սեփական կարծիքով, գոյություն չունի այլ իմաստություն, քան այն, որ ունի ինքը: Ամենասարսափելին նրա վերաբերմունքն է օրենքի խախտմանը: Ի՞նչը կարող է ավելի մահաբեր լինել, քան մեղքի գաղափարը ծաղրելը:

Հիմարը դյուրահավատ է (Առակաց 14.15): Որքան էլ դա հակասական լինի, այն ժամանակ, երբ հիմարը ծաղրում է այն իդեալիստներին, ովքեր դեռ հավատում են իմաստության արժեքին, նա կորցրել է ընդունակությունը՝ քննադատաբար իմաստավորելու այն, ինչ լսում է. նա հավատում է «ամեն խոսքի»: Այս իրադրության հեգնանքը հարված է հասցնում աշխարհիկ հասարակության բուն էությանը: Կասկածամտորեն տրամադրված մարդիկ հեգնում են Աստծուն և ծաղրում են կրոնը՝ պնդելով, որ այդ համոզմունքները նախատեսված են երեխաների և ծերունիների համար, բայց նրանք իրենք հաճախ հավատում են ամենաանմիտ գաղափարների, օրինակ՝ այն բանին, որ երկրի վրա կյանքը ծագել է զուտ պատահաբար:

Հիմարը պոռթկուն է (Առակաց 14.16,29): Քանի որ հիմարը համարում է, որ ճշմարտությունն իր ներսում է, նա ժամանակ չի ծախսում մտածելու վրա: Նրա արձագանքը արագ կլինի, և այն հիմնականում թելադրված է պոռթկմամբ:

Հիմարը ճնշում է ուրիշներին (Առակաց 14.21, 31): Հիմարի հոգեբանությունը բնութագրվում է ճնշելու և անհանդուրժողականության

մեխանիզմների գերիշխանությամբ: Նա անհանդուրժող է ուրիշների նկատմամբ և նրանց արհամարհանքով կվերաբերվի (տե՛ս Դանիել 7.25, 8.11,12):

Հեշտ է հիմարի գծերը տեսնել ուրիշների մեջ, բայց ի՞նչ կասենք ինքներս մեր մասին: Բնավորության այս թերություններից որո՞նք պետք է նախ գիտակցենք, իսկ հետո Աստծո ողորմությամբ հաղթահարենք:

Երկուշաբթի փետրվարի 2

Իմաստունի վախը

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Առակաց 14-ը: Այնտեղ ի՞նչ է ասված իմաստունի մասին: _____

_____

_____

Իմաստունը խոսում է մեղմորեն (Առակաց 14.3): Իմաստունները զսպում են իրենց շրթունքները: Նրանց անխոս արձագանքի պատճառը գոռոզ ինքնավստահության բացակայությունն է: Իմաստունը համարում է, որ դիմացինը կարող է իրավացի լինել, այդ պատճառով իմաստունը ժամանակ կգտնի, որ խորհի ամեն բանի մասին և կշռադատի փաստարկները: Նրանք լռում են նաև այն պատճառով, որ լսում են և պատրաստ են սովորել ուրիշներից:

Իմաստունները գնահատում են ուսուցումն ու գիտելիքները (Առակաց 14.6,18): Հիմարի համար դժվար է սովորելը, որովհետև նրա համար դժվար է նստել ուսուցչի ոտքերի մոտ: Իմաստունները, ընդհակառակը, հեշտ են սովորում, որովհետև նրանք խոնարհ են: Այդ պատճառով նրանք ուրախություն և բավականություն են ստանում ուսուցումից և աճից: Բացի դրանից, հենց իմաստության որոնումն է՝ այն բանի, ինչ իրենք չունեն, որ նրանց իմաստուն է դարձնում:

Իմաստունները զգույշ են (Առակաց 14.15): Իմաստունները գիտեն, որ մեղք ու չարիք գոյություն ունեն: Այդ պատճառով նրանք զգույշ են իրենց ճանապարհներում: Նրանք չեն ղեկավարվում իրենց զգացմունքներով և անձնական կարծիքով. նրանք կստուգեն և խորհուրդ կխնդրեն: Սակայն նրանք միշտ ուշադիր կլինեն այն բանի հանդեպ, ինչ իրենց ասում են մյուս մարդիկ. նրանք լավը կտարբերեն վատից (Ա Թեսաղոնիկեցիս 5.21):

Իմաստունները հանգիստ են (Առակաց 14.29,33): Իմաստունը կարող է լռել, որովհետև նա չի ապավինում «իր ճանապարհին», այլ հույսը դնում է «վերինների» վրա (Առակաց 14.14): Հենց Աստծո հանդեպ նրանց հավատն է, որ նրանց թույլ է տալիս հանգիստ լինել և ինքնատիրապետում դրսևորել (Եսայիա 30.15): Հենց Աստծո վախն է նրանց վստահություն տալիս (Առակաց 14.26):

Իմաստունները կարեկից են և զգայուն (Առակաց 14.21,31): Երկու պատվիրանները՝ «Սիրի՛ր քո Տեր Աստծուն» և «Սիրի՛ր քո ընկերին» (Մարկոս 12.30,31) կապված են իրար: Մենք չենք կարող սիրել Աստծուն և միևնույն ժամանակ վատ վերաբերվել ուրիշ նմարդկանց: Մեր հավատի մեծագույն դրսևորումը երևում է այն բանում, թե ինչպես ենք մենք վարվում ուրիշների, հատկապես նրանց հետ, ովքեր կարիքի մեջ են:

«Մենք չենք գիտակցում, թե մեզանից քանիսն են ընթանում աչքի տեսածով, ոչ թե հավատով: Մենք հավատում ենք միայն նրան, ինչ տեսնում ենք, բայց չենք գնահատում Նրա Խոսքում տրված թանկարժեք խոստումները» (Է. Ուայթ, Մեր բարձրագույն կոչումը, 85): Ի՞նչ է նշանակում ընթանալ հավատով, ոչ թե աչքի տեսածով: Ինչպե՞ս անել դա:

Երեքշաբթի փետրվարի 3

«Տիրոջ աչքերը»

«Տիրոջ աչքերն ամեն տեղ են. քննում են չարերին և բարիներին» (Առակաց 15.3): Դուք ի՞նչ եք զգում այս համարի կապակցությամբ և ինչո՞ւ: _____

_____

_____

_____

Առակաց գքրի հաջորդ երկու գլուխներում տոնայնությունը փոխվում է: Այս գլուխներում ավելի շատ աստվածաբանություն կա, քան նախորդներում, այստեղ Տերը ավելի հաճախ է հիշատակվում, քան նախորդ առակներում: Եվ Նրա մասին մի զարմանալի բան է ասված. Նրա աչքերն ամենուր են (Առակաց 15.3):

Տիրոջ ներկայության այս սուր զգացողությունն էլ հենց այն է, ինչ հին իսրայելացիներն անվանում էին «Տիրոջ վախ»: Նույն այդ համանմանությունը հանդիպում է նաև Սաղմոսների գրքում. «Տիրոջ

աչքը նրանից վախեցողների վրա է» (Սաղմոս 37.18): Բացի դրանից, Հոբի գիրքը Աստծուն պատկերում է որպես «մինչև երկնքի ծայրերը նայող» (Հոբ 28.24): Այդ պատճառով Հոբը եզրակացնում է, որ «Տիրոջ երկյուղն է իմաստությունը» (Հոբ 28.28):

Այս առակը մեզ հիշեցնում է՝ բարին ու չարը տեսնելու Տիրոջ ընդունակությունը՝ անկախ այն բանից, թե դրանք որտեղ են տեղի ունենում: Մարդկային մակարդակով այդ գիտակցումը պետք է օգնի մեզ՝ միշտ հիշելու, որ պետք է բարիք գործել և երբեք չարիք չգործել, որովհետև Աստված տեսնում է ամեն բան, ինչ մենք անում ենք, անգամ եթե ուրիշ ոչ ոք չի տեսնում: Մենք խաբում ենք ինքներս մեզ՝ մտածելով, թե քանի որ տվյալ պահին մեզ հաջողվում է խուսափել կատարված չարիքի համար պատժվելուց, ապա մենք կկարողանանք միանգամայն անպատիժ մնալ: Երկարաժամկետ հեռանկարում դա ոչ ոքի չի հաջողվում:

Այդ պատճառով եկե՛ք ջանադիր լինենք, որովհետև «չկա մի արարած աներևույթ նրա երեսից» (Եբրայեցիս 4.13):

Կարդացե՛ք Առակաց 15.3, Եսայիա 5.20 և Եբրայեցիս 5.14-ը: Այս համարներում ի՞նչ կարևոր լուր է բովանդակվում մեզ համար, որ ապրում ենք մի ժամանակահատվածում, երբ բարու և չարի մասին պատկերացումները հաճախ լղոզված, աղճատված են, իսկ մարդիկ պնդում են, թե «բարին» ու «չարը» հարաբերական հասկացություններ են, որոնք գոյություն ունեն միայն այն ժամանակ, երբ մենք ընդունում ենք դրանք: Ի՞նչ վատ բան կա բարու և չարի այդպիսի ըմբռնման մեջ, և ինչո՞ւ է այդքան վտանգավոր դրան հետևելը:

Չորեքշաբթի **փետրվարի 4**

Ուրախության մասին

Կարդացե՛ք Առակաց 15-ը: Ինչո՞ւ է ուրախությունն այդքան կարևոր մարդկային հատկանիշ: _____

_____

_____

_____

Սուրբ Գիրքը մեզ չի խոստանում առանց դժվարությունների կյանք: Ինչպես Ինքը՝ Հիսուսն է ասել. «Ամեն օրվա համար բավական

է իր նեղությունը» (Մատթեոս 6.34): Առակաց 15.15-ը բացատրում է, որ դժվար օրերի ժամանակ նա, ով կպահպանի ուրախ սիրտը, դրանից օգուտ կունենա: Ցավը, տառապանքներն ու փորձությունները կգան, և մենք հաճախ չենք կարող վերահսկել, թե երբ և ինչպես: Բայց մենք կարող ենք գոնե որևէ չափով վերահսկել մեր արձագանքը դրանց նկատմամբ:

Կարդացե՛ք Առակաց 15.14,23-ը: Ո՞րն է Աստծո դերն այդ ուրախության մեջ: _____

_____

_____

_____

Թեև աստվածաշնչյան համարը բացահայտորեն չի խոսում ուրախության պատճառի մասին, 13 և 14-րդ համարների զուգահեռ միտքը ակնարկում է, որ «ուրախ սիրտը» իմաստուն մարդուն է պատկանում: Դա այն մարդու սիրտն է, ով հավատ ունի և տեսնում է ազատագրումը, որ վրա է հասնելու ներկա փորձություններից հետո: Ահա՛ թե ինչու Աստծո հանդեպ հավատն այդքան կարևոր նշանակություն ունի, ահա՛ թե ինչու է կարևոր, որ մենք սեփական փորձով ճանաչենք Աստծո և Նրա սիրո իրականությունը: Այդ ժամանակ, ինչ փորձություններ էլ մեզ հասնեն, խելամիտները կկարողանան դիմակայել դրանց, որովհետև սեփական փորձով ճանաչել են Աստծո սերը:

Առակաց 15.23-ը ևս մի կարևոր միտք է առաջ քաշում: Ուրախությունը ավելի շատ գալիս է այն բանից, ինչ մենք տալիս ենք, քան նրանից, որ մենք ստանում ենք: Մեկ այլ մարդու ասված քաղցր խոսքը այն ասողին ուրախություն կբերի: Ո՞վ օրհնություն չի զգացել ուրիշներին օրհնելիս՝ լինի խոսքով, թե գործով, կամ էլ և՛ մեկով, և՛ մյուսով: Ինչպես մենք արդեն տեսանք Առակաց գրքում, մեր խոսքերը հսկայական ուժ ունեն: Նրանք կարող են վիթխարի բարիք կամ հսկայական չարիք գործել: Եվ ինչքան լավ է, երբ դրանք մեծ օրհնություն են ոչ միայն բարիքը ստացողի, այլ նաև անողի համար:

Սեփական փորձով դուք որքանո՞վ եք լավ ճանաչում Աստծո սերը: Դուք որոշակի ի՞նչ կարող էիք անել, ինչը կարող էր օգնել ձեզ՝ ձեր սիրտը բացելու այս կարևոր ճշմարտության առջև: Խորհեցե՛ք, թե որքանով ավելի լավը կլիներ կյանքը, եթե դուք ճանաչեիք Աստծո սիրո առավելությունները:

Աստծո փիրակալությունը

Մենք ամենքս երազում և ծրագրեր ենք կազմում, սակայն հաճախ ամեն բան այլ կերպ է դասավորվում, երբեմն դեպի լավը, երբեմն դեպի վատը: Աստվածաշունչն ընդունում է մարդկային պատասխանատվության և ազատության արժեքը: Բայց Աստվածաշունչը նաև ցույց է տալիս, որ Աստված վերահսկում է իրադարձությունների ընթացքը (տե՛ս Առակաց 20.24, 21.31, Դնիել 2 և 7-ը):

Ի՞նչ է ասված Առակաց 16.1-ում: Ինչպե՞ս պետք է հասկանալ այս համարը: _____

_____

_____

Մենք պատրաստվում և ծրագրեր ենք կառուցում, բայց վերջին խոսքը, միևնույնն է, Աստծունն է: Դա չի նշանակում, որ մեր ջանքերն անօգուտ են: Բայց հավատի կյանքում, եթե մենք պարզապես մեր ծրագրերն ենք ներկայացնում Աստծուն, Նա կաշխատի դրանց հետ, և մեր ծրագրերը կխմբագրվեն (Առակաց 16.9) և վերջնականապես կհաստատվեն Նրա կողմից (Առակաց 16.3): Անգամ մեր թշնամիների գործողությունները կօգտագործվեն ի շահ մեզ (Առակաց 16.4,7):

Թեև այս գաղափարը հեշտ չէ հասկանալ, հատկապես երբ մենք բախվում ենք դժվարին իրավիճակների, բայց դրանք կոչված են մխիթարություն տալու մեզ: Կոչված են օգնելու, որ սովորենք վստահել Աստծուն, երբ թվում է՝ ամեն բան այնպես չի ընթանում, և մեր երազանքներն էլ չեն կատարվում այնպես, ինչպես մենք հույս ունեինք: Մեզ համար գլխավոր պահը սովորելն է՝ ամեն բան ենթարկեցնել Աստծուն: Եթե մենք դա անենք, կարող ենք վստահ լինել Նրա առաջնորդությանը՝ անգամ ամենածանր ժամանակներում:

Կարդացե՛ք Առակաց 16.18,19-ը: Մարդու հաջողության մեջ ի՞նչ դեր են խաղում հավակնությունները: _____

_____

_____

Ինչպես միշտ, Աստվածաշունչը մեզ զգուշացնում է հպարտությունից: Ի վերջո, ինչո՞վ կարող ենք հպարտանալ մենք՝ մեղավոր էակներս: Մի՞թե կա մի այնպիսի արատ, որ ավելի շատ կհակասի Աստծո բնավորությանը, քան հպարտությունը, որ առաջնածին մեղքն է: (Տե՛ս Եզեկիել 28.17-ը): Հիսուսը վճռականորեն սովորեցնում էր,

որ նշանավոր լինելու ձգտումը սխալ է, և Իր աշակերտներին խոնարհության կոչ էր անում (Մատթեոս 20.26-28):

Կարդացե՛ք Առակաց 16.33-ը: Ի՞նչ դեր ունի պատահականությունը մարդկային հաջողության մեջ: _____

_____

_____

_____

Աստվածաշունչը տեղ չի թողնում պատահականության համար: Որովհետև երբ մարդը համարում է, որ իրադարձությունների ընթացքը պայմանավորված է պատահականությամբ, մենք կարող ենք վստահ լինել, որ Աստված, միևնույնն է, վերահսկում է իրավիճակը:

Երբ մենք ձգտում ենք հասկանալ, թե ինչու են տեղի ունենում ինչ-որ իրադարձություններ, մեծ պայքարի իրական բնույթն ինչպե՞ս է մեզ որոշ դժվար հարցերի պատասխաններ տալիս տեղի ունեցող իրադարձությունների պատճառների մասին:

Ուրբաթ փետրվարի 6

Հետագա ուսումնասիրության համար

«Նախ սատանան մարդկանց գեղեցիկ կերպով նկարագրում է այն նպատակները, որոնց նրանք կհասնեն օրենքը խախտելով: Այդ եղանակով նա խաբեց հրեշտակներին: Այդպես նա գայթակղեց Ադամին ու Եվային, որ մեղանչեն: Եվ այդ նույն միջոցով այսօր նա շատերին է շեղում Աստծուն հնազանդվելուց: Նա նկարում է անօրենության ճանապարհների գրավչությունը, «բայց նրա վերջը մահվան ճանապարհներ են» (Առակաց 14.12): Երանելի են նրանք, ովքեր, ենթարկվելով այդ ճանապարհով գնալու վտանգին, հասկացել են, թե որքան դառն են մեղքի պտուղները, և ժամանակին հետ են դարձել դրանից» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 720):

«Ոչինչ չի նպաստում մարմնի և հոգու առողջությանն ավելի, քան շնորհակալության և փառաբանության ոգին: Մելամաղձությանը, անբավական մտքերին և զգացմունքներին դիմադրելը մեր անկասկածելի պարտականությունն է: Նույնպիսի պարտականություն է աղոթքը: Եթե մենք նշանված ենք երկնքի հետ, մի՞թե կարող ենք մենք, եղերամայրերի խմբի նման, Հոր տուն տանող ճանապարհով գնալ՝ հառաչելով ու բողոքելով: Անընդհատ դժգոհող և, ըստ երևույթին,

բարձր և ուրախ տրամադրությունը մեղք համարող քրիստոնյաները չունեն ճշմարիտ կրոնը» (Է. Ուայթ, Ապաքինման ծառայություն, 251):

Հարցեր քննարկման համար

1. Քննարկե՛ք այն միտքը, որ մենք չափազանց սահմանափակ պատկերացում ունենք իրականության մասին: Սա ի՞նչ է նշանակում: Ծրջապատող աշխարհում ի՞նչ երևույթներ կան, որոնց գոյության մասին մենք գիտենք, բայց չենք կարող տեսնել կամ զգալ դրանք: Օրինակ՝ մեր շուրջը որքան ռադիոալիք (բջջային հեռախոսների զանգեր, արբանյակային ծրագրեր, ռադիոծրագրեր) են եթերը լցնում հենց հիմա, բայց, միևնույնն է, մենք չենք կարող տեսնել, լսել կամ զգալ դրանք: Այդպիսի իրողությունների գոյությունն ինչպե՞ս պետք է օգնի մեզ՝ հասկանալու, թե որքան սահմանափակ են մեր զգացմունքները: Այդ ըմբռնումն ինչպե՞ս պետք է օգնի մեզ՝ հասկանալու այլ բաների իրական բնույթը, որ մենք չենք կարող տեսնել, օրինակ՝ հրեշտակներին:
2. Ինչո՞ւ է այդքան կարևոր մարդու ազատ կամքի և ընտրության ազատության իրական լինելու ըմբռնումը, անգամ եթե Աստված լիովին կառավարում է ամեն բան: Թեև այդ հասկացությունները (մարդու ազատ կամքը և Աստծո ինքնիշխանությունը) միմյանց հակասող են թվում, դրանք երկուսն էլ առկա են աստվածաշնչյան ուսմունքի մեջ, այդ պատճառով ինչպե՞ս մենք կարող ենք հաշտեցնել նրանց:

ԴԱՍ 7

ՓԵՏՐՎԱՐԻ 7-13

ԻՆՉՊԵՍ ԼՈՒԾԵԼ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Առակաց 17, Ա Կորնթացիս 13.5-7, Հովհաննես 8.1-11, Առակաց 18, Առակաց 19, Երկրորդ Օրինաց 24.10-22:

Հիշելու համարը.

«Լավ է մի չոր պատառը՝ խաղաղությունով, քան թե մի տուն լիքը մորթված ոչխար՝ կռվով» (Առակաց 17.1):

Եվ կրկին Առակաց գիրքը մերկացնում է արտաքին տեսքի խաբուսիկությունը: Կարող է թվալ, թե մենք ունենք ամեն բան, ինչ առաջարկում է աշխարհը՝ հարստություն, իշխանություն, հաճույքներ, փառք, բայց արտաքինի հետևում հակամարտություններ և դժբախտություններ են թաքնված: Հնարավոր է նույնիսկ, որ այդ լարվածության և տառապանքների պատճառը այն նույն հարստությունն ու հաճույքներն են, որոնց այդքան շատ են ձգտում մարդիկ: Ինչպես ասում է եգիպտական ասացվածքը՝ «Ավելի լավ է հացը՝ երջանիկ սրտով, քան հարստությունը՝ սրտնեղությամբ» (Միրիամ Լիխտենշտեյն, «Instructions», Հին եգիպտական գրականություն, Ընթերցումների գիրք, հատոր 2, 156): Ըստ Առակաց գրքի՝ այդ խնդրի լուծման առաջին քայլը մեր գերակայությունների ըմբռնումն է. խաղաղ փոխհարաբերություններն ավելի կարևոր են, քան հարստությունը (Առակաց 17.1): Կարևոր է ոչ այնքան այն, թե մենք ինչ ունենք, որքան այն, թե մենք ով ենք ներքուստ: Հետո գալիս է պատասխանը, որը վերականգնում է ճիշտ գերակայությունները և հանգեցնում է ներքին խաղաղության (եբրայերեն՝ «շալոմ»), իսկ դրա հետևանքով՝ նաև մեր երջանկությանը:

Մեղքը և ընկերները

Կարդացե՛ք Առակաց 17.9, 19.11-ը: Ի՞նչ կարևոր միտք են հայտնում այս համարները: Մենք ինչպե՞ս ենք վարվում այն մարդկանց հետ, ովքեր սխալվում են: _____

_____

_____

_____

Երբ ինչ-որ մեկը սխալ է գործում, մեծ գայթակղություն է առաջանում՝ պատմել այդ մասին ուրիշներին: «Իսկ դուք լսե՞լ եք, թե ինչ է արել սա կամ նա»: Ու թեև կարող է թվալ, թե մենք ցնցված ենք այդ արարքից, բայց իրականում մենք ցանկանո՛ւմ ենք ուրիշներին պատմել այն մասին, ինչ տեղի է ունեցել: Կարճ ասած, մենք բամբասում ենք, և դա այն է, ինչից մեզ զգուշացնում է Աստվածաշունչը, որովհետև նման վարքը վեճեր է առաջացնում անգամ մերձավոր ընկերների միջև: Ի վերջո, եթե ընկերդ սխալ արարք է գործել, ի՞նչ ընկեր եք դուք, եթե գնում և այդ մասին պատմում եք ուրիշներին:

Առակաց գիրքը մեզ խորհուրդ է տալիս՝ դրա փոխարեն «ծածկել» սխալը: Դա, սակայն, չի նշանակում, որ մենք պետք է թաքցնենք մեղքը կամ էլ ձևացնենք, թե այն երբեք չի եղել, ասես մարդը ոչ մի վատ բան չի գործել: Թաքցվող մեղքը առաջվա նման գոյություն ունի, թեև թաքցված է: Իրականում եբրայերեն «ծածկել» բառն այս արտահայտության մեջ որոշակիորեն «ներել» իմաստն ունի (Առակաց 85.2, Նեեմիա 4.5): Մենք պետք է սիրով և ոչ թե բամբասանքներով արձագանքենք ուրիշի սխալին:

Կարդացե՛ք Առակաց 17.17 և Ա Կորնթացիս 13.5-7: Ինչպե՞ս է օգնում սերը՝ գլուխ հանելու ընկերոջ սխալից: _____

_____

_____

Մարդն իր ընկերոջը կամ ամուսնուն սիրում է ոչ այն բանի համար, որ նրանք կատարյալ են: Մենք սիրում ենք՝ չնայելով նրանց սխալներին ու թերություններին: Միայն սիրո շնորհիվ է, որ մենք սովորում ենք չդատել ուրիշներին, որովհետև, մեր սեփական սխալներն ու թերությունները հաշվի առնելով, մենք կարող էինք նույնքան մեղավոր լինել: Դրա փոխարեն մենք կարող ենք նրանց հետ միասին տրտմել այն բանի համար, ինչ նրանք արել են, և ձգտենք անել ամեն

հնարավորը, որ օգնենք նրանց՝ հաղթահարելու դա: Ի վերջո, ինչի՞ համար են պետք ընկերները, եթե ոչ դրա:

Մտաբերե՛ք այն ժամանակը, երբ դուք սոսկալի սխալ եք գործել և ձեզ ներել են, ձեզ օգնել ու մխիթարել են: Ի՞նչ է ասում սա այն մասին, թե ինչպես պետք է դուք վարվեք ուրիշների հետ:

Երկուշաբթի փետրվարի 9

Արդարացի՛ եղիր

Իսկական սերը կույր չէ: Այն, որ մենք, սիրուց դրդված, «թաքցնում ենք» ինչ-որ մեկի սխալը, չի նշանակում, որ մենք չենք տեսնում մեղքը և այն չենք ճանաչում՝ որպես մեղք: Սերն ու արդարությունը մեկտեղ են ընթանում: Եբրայերեն «արդարություն» բառը՝ *«ծեդեք»* նաև նշանակում է «սեր», «ողորմություն»: Մենք չենք կարող իսկական կարեկցանք ունենալ, եթե արդարացի չենք. մենք չենք կարող արդարացի լինել, եթե կարեկցանք և սեր չունենք: Այդ երկու հասկացությունները պետք է միասին գործեն:

Օրինակ, աղքատների հանդեպ ողորմություն դրսևորելը չպետք է իրականացվի արդարացիության հաշվին. այդ պատճառով Աստվածաշունչը սովորեցնում է՝ դատարանում աղքատի հանդեպ կողմնակալ չլինել (Ելից 23.3): Եթե սերը մեզ պարտավորեցնում է օգնել աղքատներին, անարդարացի կլինի հովանավորել նրանց, երբ նրանք իրավացի չեն, միայն այն պատճառով, որ նրանք աղքատ են: Այդ պատճառով արդարացիությունն ու ճշմարտությունը պետք է ուղեկցվեն սիրով և կարեկցանքով: Հենց այս իմաստուն հավարակշռությունն է բնորոշ Թորային՝ Աստծո օրենքին, և հենց այդ է սովորեցնում և պանծացնում Առակաց գիրքը:

Կարդացե՛ք Առակաց 17.10, 19.25: Ի՞նչ է ասվում այդտեղ մեղավորին հանդիմանելու անհրաժեշտության մասին: _

_____

_____

Այն փաստը, որ Առակաց 17.10-ը անմիջապես գալիս է՝ սխալները սիրով ծածկելու կոչի հետևից (Առակաց 17.9), պատահական չէ: «Սիրո» հետ կապված «հանդիմանության» այս հիշատակումը ցույց է տալիս սերը ճիշտ տեսանկյունից: Համարում ուժեղ հանդիմանություն է նկատի առնվում:

Կարդացե՛ք Հովհաննես 8.1-11-ը: Հիսուսն ինչպե՞ս էր վարվում ակներև մեղքի հետ: _____

_____

_____

«Ներելով այդ կնոջը և նրան ոգեշնչելով նոր կյանքի՝ Հիսուսը լիակատար կերպով բացահայտում էր Իր կատարյալ արդարությունը: Չարդարացնելով մեղքը և չփոքրացնելով կնոջ մեղավորությունը՝ Նա ձգտում էր փրկել և ոչ թե դատապարտել: Աշխարհում այս կնոջ բաժինը միայն արհամարհանքն ու ծաղրն էին մնացել: Բայց Հիսուսը մխիթարության և հույսի խոսքեր ասաց նրան: Նա՝ անմեղը, կարեկցում է թույլ մեղավորին և նրան օգնության ձեռք է մեկնում: Այն ժամանակ, երբ կեղծավոր փարիսեցիները մեղադրում էին նրան, Հիսուսը նրան հրամայում է գնալ և այլևս մեղք չգործել» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 462):

Երեքշաբթի **փետրվարի 10**

Եվ նորից խոսքեր...

Կարդացե՛ք Առակաց 18-ը: Թեև այս գլխում տարբեր թեմաներ են շոշափվում, ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչ է այստեղ ասված խոսքերի մասին: Այստեղ ի՞նչ կարևոր մտքեր են ներկայացված այն մասին, ինչ մենք ասում ենք կամ ինչ չենք ասում: _____

_____

_____

Մենք կրկին բախվում ենք խոսքերի իրականությանը և ուժին. տվյալ դեպքում մենք տեսնում ենք, թե ինչպես են հիմարներն օգտագործում իրենց շրթունքները՝ իրենց սեփական կործանման համար: 13-րդ համարը հատկապես խրատական է: Որքա՜ն հեշտ է խոսել՝ առանց ուշադիր լսելու և չհասկանալով ողջ ասվածը: Քանի՜ անգամ կարող էինք ինքներս մեզ և ուրիշներին ազատել անտեղի ցավից և երկպառակություններից, եթե միայն սովորեինք լավ մտորել լսածին տված մեր պատասխանի մասին: Իրականում լինում են դեպքեր, երբ լռությունը լավագույն պատասխանն է:

Կարդացե՛ք Առակաց 18.4-ը: Ինչո՞ւ են իմաստունի խոսքերը նման խոր ջրերի: _____

_____

«Խոր ջրերի» պատկերը Առակաց գրքում օգտագործվում է դրական իմաստով՝ խորհրդանշելով իմաստությունը (Առակաց 20.5): Այն փոխանցում է լռության, ինչպես նաև՝ խորության և հարստության գաղափարը: Իմաստունները մակերեսային չեն: Նրանք իրենց խոսքերը քաղում են անձնական մտորումների և փորձառության խորքերից: Մեզանից ո՞վ առիթ չի ունեցել ապշելու այն մարդկանց խորը մտքերից և գաղափարներից, ովքեր անվիճելիորեն օժտված են իմաստությամբ և գիտելիքներով:

Կարդացե՛ք Առակաց 18.21-ը: Ի՞նչ է դա նշանակում: _____

_____

_____

Եվ կրկին Առակաց գիրքը հիշեցնում է մեզ, որ խոսքերը հսկայական ուժ ունեն և կարող են բարիք կամ չարիք գործել, կյանք կամ մահ բերել: Որքա՜ն զգույշ պետք է օգտագործենք այդ հզոր զենքը:

Մտաբերե՛ք մի դեպք, երբ ձեզ ցավալիորեն խոցել են ինչ-որ մեկի խոսքերը: Դուք ի՞նչ եք իմացել այդ ժամանակ խոսքի ուժի մասին: Դա ձեզ ինչպե՞ս է սովորեցրել՝ մանրակրկիտ ընտրել բառերը:

Չորեքշաբթի փետրվարի 11

Մի պատմության երկու տեսանկյունները

Կարդացե՛ք Առակաց 18.2-ը: Ինչո՞ւ հիմարներին ժամանակ պետք չէ՝ սեփական կարծիքը կազմելու համար: _____

_____

_____

Հիմարներն այնքան ինքնավստահ են և այնքան շատ են ծարավի իրենց կարծիքն արտահայտելու, որ նրանք շահագրգռված չեն ուրիշներից ինչ-որ բան իմանալու: Նրանց թաքուն մտքերը փոխհատուցվում են բաց բերաններով: Սա մահացու համադրում է: Որքա՜ն զգույշ պետք է լինենք, որպեսզի չպարզվի, որ մենք նույն կերպ ենք վարվում, հատկապես՝ եթե խոսքը վերաբերում է այն բանին, ինչի առումով մենք տեղեկացված ենք համարում մեզ և վստահ ենք, որ իրավացի ենք:

Մի՞թե մեզանից ցանկացածի հետ չի պատահել, որ ինչ-որ մի պահի մենք ինչ-որ համոզմունք ենք պաշտպանել՝ միայն նրա համար, որպեսզի հետագայում պարզվի, որ սխալ ենք եղել: Դա չի նշանակում,

որ մենք չպետք է հաստատ համոզմունքներ ունենանք. դա միայն նշանակում է, որ մեզ որոշ խոնարհություն է հարկավոր, որովհետև մեզանից ոչ ոք չգիտի բոլոր հարցերի պատասխանները, և անգամ երբ մենք գիտենք ճիշտ պատասխանը, ճշմարտությունը հաճախ շատ ավելի խորն է լինում և ունենում է ավելի շատ երանգներ, քան մենք կարող ենք հասկանալ կամ տեղավորել:

Կարդացե՛ք Առակաց 18.17-ը: Ի՞նչ կարևոր ճշմարտություն է ներկայացված այստեղ: _____

_____

_____

Միայն Աստված է, որ ոչ մի բան ճշգրտելու կարիք չունի, հենց այն պատճառով, որ Իր բնույթով արդեն ամեն բան գիտի, որովհետև Նրա աչքերն ամենուր են (Առակաց 15.3): Աստված ընդունակ է տեսնելու ցանկացած հարցի բոլոր տեսանկյունները: Իսկ մենք, որպես կանոն, շատ նեղ հայացք ունենք իրերի վերաբերյալ, և այդ հայացքն է՛լ ավելի է նեղանում, երբ մենք աներեր հավատ ենք դրսևորում, հատկապես այն հարցերի մասին, որոնք կարևոր ենք համարում:

Ինչպես մենք արդեն գիտենք, ցանկացած պատմություն միշտ երկու (և անգամ ավելի) տեսանկյուն ունի, և որքան ավելի շատ է մեր տեղեկատվությունը, այնքան լավ կկարողանանք ճիշտ պատկերացում ձևավորել առարկայի մասին:

Հիշե՛ք մի դեպք, երբ դուք բացարձակապես վստահ եք եղել ինչ-որ հարցում, հնարավոր է՝ ձեր ողջ կյանքում հավատացել եք դրան՝ միայն նրա համար, որ հետո իմանաք, որ ողջ կյանքում սխալվել եք: Սա ի՞նչ պետք է ասի ձեզ այն մասին, որ անհրաժեշտ է հիշել, թե դուք կարող եք սխալվել այն հարցերում, որոնք այդքան ջանադրաբար պաշտպանում եք հիմա:

Հինգշաբթի **փետրվարի 12**

Ազնի՛վ եղեք

Պատմում են մի թագավորի մասին, ով իր թագավորության մեջ բարձրագույն պետական պաշտոնի թեկնածու էր որոնում: Այս նպատակով նա ստախոսների հատուկ մրցույթ կազմակերպեց, որպեսզի ընտրի այն մարդուն, ով ընդունակ է հորինելու ամենամեծ սուտը: Թագավորության բոլոր նախարարները մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրեցին, և նրանցից յուրաքանչյուրը եկավ և ներկայացրեց

իր ամենամեծ սուտը: Բայց թագավորը բավարարված չէր. նրանց սուտն անհամոզիչ էր թվում: Հետո թագավորը հարցրեց իր ամենամերձավոր և առավել հուսալի խորհրդականին. «Ինչո՞ւ դու հայտ չես ներկայացրել»:

Խորհրդականը պատասխանեց. «Ես շատ եմ ցավում, որ պետք է հիասթափեցնեմ ձեզ, Ձե՛րդ մեծություն, բայց ես չեմ կարող հայտ ներկայացնել»: «Ինչո՞ւ», - հարցրեց թագավորը: «Որովհետև ես երբեք սուտ չեմ խոսում», - պատասխանեց խորհրդականը: Եվ թագավորը որոշեց հենց նրան նշանակել բարձրագույն պաշտոնում: Քանի որ մենք մեղավորներ ենք, սուտը ավելի հեշտ է գալիս մեզ մոտ, քան մենք կարծում ենք. այդ պատճառով էլ, կրկին նշենք, թե մենք որքան զգույշ պետք է վարվենք մեր խոսքերի հետ:

Կարդացե՛ք Առակաց 19-ը: Թեև այս գլխում շատ թեմաներ են ներկայացված, այս համարներն ի՞նչ են ասում ստի մասին: _____

_____

Առակաց գիրքը բարձր բարոյական չափանիշներ է ներկայացնում: Ավելի լավ է աղքատ մնալ կամ կորցնել պաշտոնի բարձրացումը, եթե այն ստանալու համար ստիպված ես լինում ստել կամ զոհաբերել ճշմարտությունը (Առակաց 19.1), կամ էլ խարդախություն անել, կամ էլ խախտել հավատարմությունը (Առակաց 19.22):

Կարդացե՛ք Առակաց 19.9-ը: Ո՞րն է վկայի պարտականությունը: _____

_____

Ստելը միշտ է վատ, բայց դատարանում այդպես վարվելը և երդմամբ հաստատելը է՛լ ավելի վատ է: Շատ երկրներում սուտ վկայությունը լուրջ հանցագործություն է: Այդ պատճառով վկան պետք է ճշմարտացի ցուցմունքներ տա: Եվ պատահական չէ, որ այս համարը հաջորդում է «ընծա տվող բարեկամի» (Առակաց 19.6) և իրենց ընկերներից և անգամ իրենց բարեկամներից ատելի աղքատների (Առակաց 19.7) մասին հիշատակմանը: Բանն այն է, որ վկայի վրա չպետք է ազդեցություն գործեն կաշառքները կամ նրանց սոցիալական կարգավիճակը, ում մասին նա վկայում է:

Կարդացե՛ք Երկրորդ Օրինաց 24.10-22-ը: Ի՞նչ կարևոր սկզբունք է դիտարկվում այստեղ, և ինչպե՞ս մենք պետք է կիրառենք այն մեր և կարիքավորների հանդեպ մեր վերաբերմունքի մեջ:

Հետագա ուսումնասիրության համար

Բամբասանքներ հավաքելն ու քսությունը սատանայի սիրելի հնարքներից մեկն է, դրա օգնությամբ նա տարաձայնություններ և թշնամանք է ցանում, բաժանում է ընկերներին և շատերի մեջ խարխլում է՝ մեր հայացքների ճիշտ լինելու մասին հավատը: Եղբայրներն ու քույրերը չափազանց սիրով են խոսում այն սխալների մասին, որոնք, ինչպես նրանց թվում է, կատարում են ուրիշները, առաջին հերթին նրանք, ովքեր վճռականորեն և հստակ կերպով փոխանցում են Աստծուց տրված հանդիմանող և զգուշացնող լուրերը» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 4, 195):

«Բողոքողների զավակները լսում են այդ ամենը և ներծծում են անբավականության թույնը: Այդպիսով չար զգացմունքներով կուրացած ծնողները փակում են դեպի իրենց զավակների սրտերը տանող բոլոր մատույցները: Որքա՞ն շատ ընտանիքներ են իրենց կյանքը բարդացնում կասկածներով և անվստահությամբ: Ճաշի ժամանակ նրանք բամբասում են իրենց ընկերներից, և զրպարտանքը մատուցում են՝ որպես նրբաճաշակ աղանդեր: Զգայացունց «նորությունները» և բամբասանքը շրջապատում են բոլոր սեղանակիցներին, և այդ, թող թույլ տրվի ասել, նորությունները հետո մեկնաբանում են ոչ միայն մեծերը, այլ նաև երեխաները: Դրանով իսկ նրանք անպատվում են Աստծուն: Հիսուսն ասաց. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, որովհետև այս իմ փոքր եղբայրներից մեկին արիք, ինձ արիք» (Մատթեոս 25.40): Հետևաբար, այն մարդիկ, ովքեր բամբասում են Քրիստոսի ծառաների մասին, բամբասում են հենց Նրանից և ուրանում են Նրան» (նույն տեղում):

Հարցեր քննարկման համար

1. Ծանր է, երբ մեր մտերիմներն ու սիրելիները սխալվում են: Եվ թվում է՝ ամենահեշտն է՝ փորձել սքողել նրանց սխալները: Ինչպե՞ս գտնել ճիշտ հավասարակշռությունը նման դեպքերում: Իհարկե, մենք պետք է ողորմություն դրսևորենք, ինչպես և Աստված է մեր հանդեպ ողորմություն դրսևորում: Բայց մի՞թե ողորմությունը նշանակում է, որ մարդը կարող է անպատիժ մեղանչել և պատասխան չտալ իր արարքների հետևանքների համար: Ինչպե՞ս պետք է վարվել այդպիսի դեպքերում:

2. Ինչպես ասվել է դասում, կյանքում գրեթե ամեն բան բարդ է, և դրանք պետք է դիտարկել բազմակողմանիորեն: Եվ անգամ այն հանգամանքները, որոնց դեպքում մենք ճիշտ ենք դուրս գալիս, որպես կանոն, ավելի բարդ են, քան մեզ թվում է: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել բաց լինել և միևնույն ժամանակ հիմար չդառնալ:
3. Մենք ինչպե՞ս կարող ենք առանց խոսքերի ստել:

ԴԱՍ 8

ՓԵՏՐՎԱՐԻ 14-20

ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Առակաց 20, Ա Կորնթացիս 12.14-26, Երեմիա 9.23,24, Առակաց 21, Մատթեոս 25.35-40, Առակաց 22:

Հիշելու համարը.
«Շատ մարդ հրատարակում է մարդու բարերարությունը, բայց հավատարիմ մարդուն ո՞վ կգտնի» Առակաց 20.6:

Ինչ-որ չափով (որ բավականին կարևոր է իրականում) մեզանից յուրաքանչյուրը իր շրջապատի պտուղն է: Թեև ժառանգականությունը մեծ դեր է խաղում, այն արժեքները, որ մենք դավանում ենք, ձեռք ենք բերում մեր շրջապատից՝ ընտանիք, կրթություն, մշակույթ: Մանկուց ամեն ինչ ազդեցություն է գործում մեզ վրա, ինչ մենք տեսնում ենք և լսում:

Ցավոք, այն, ինչ մենք տեսնում ենք և լսում, միշտ չէ, որ դրական ազդեցություն է գործում մեզ վրա. շրջապատող աշխարհը մեղավոր է բոլոր տեսակետներից, և դա չի կարող չազդել մեզ վրա: Սակայն մենք ստացել ենք Սուրբ Հոգու խոստումը և մենք ունենք Աստծո Խոսքը, որ մատնացույց է անում ինչ-որ ավելի վսեմ ու լավ բան, քան առաջարկում է այս աշխարհը:

Այս շաբաթ մենք կդիտարկենք տարբեր առակներ և գործնական ճշմարտություններ: Եթե դրանք ընդունենք մեր սրտում և հետևենք դրանց, իրականում կարող են օգնել մեզ՝ հաղթահարելու այս մեղսավոր աշխարհի ազդեցությունը և մեզ նախապատրաստել լավագույն աշխարհին:

Մենք ամենքս հավասար ենք

Կարդացե՛ք Առակաց 20.12-ը: Այստեղ ի՞նչ է ասված բոլոր մարդկանց արժեքավորության մասին: _____

_____

_____

Ի տարբերության էվոլյուցիոն տեսության, որը մեզ բոլորիս համարում է միայն ոչ բանական տիեզերքի պատահական ծնունդներ, Աստվածաշունչը սովորեցնում է, որ բոլոր մարդիկ ստեղծվել են Աստծո կողմից (տե՛ս նաև Գործք առաքելոց 17.26-ը): Պատահական չէ, որ Թոմաս Ջեֆերսոնը հայտարարում էր բոլոր մարդկանց հավասարության մասին՝ հենց այն պատճառով, որ նրանք «ստեղծվել են» Աստծո կողմից, և միայն Նրանում ենք մենք հավասար:

Սակայն, թեև մենք ունենք մեկ Արարիչ, դա չի նշանակում, որ մենք ամենքս միանման ենք: Անգամ միաձվային երկվորյակները իրենց լիովին միանման չեն պահում: Կորնթացիս թղթում Պողոսը խոսում է մեր տարբերությունների մասին և ընդգծում է, որ դրանք չպետք է հանգեցնեն գերազանցության զգացման, այլ, ընդհակառակը, պետք է օգնեն մեզ՝ տեսնելու մեր կարիքը մեկ այլ մարդու հանդեպ: «Աչքը չի կարող ձեռքին ասել՝ ինձ պետք չես. կամ դարձյալ գլուխը ոտքերին՝ ինձ պետք չեք» (Ա Կորնթացիս 12.21):

Կարդացե՛ք Առակաց 20.9-ը: Է՞լ ինչն է մեզ ամենքիս հավասար դարձնում: _____

_____

Մեղքը ևս մի համահավասարեցնող գործոն է: Հռետորական հարցին առակի պատասխանն է՝ «ոչ ոք», և այն ցույց է տալիս մարդու ողբերգական և անհուսալի վիճակը: Բոլոր մարդիկ թույլ և մահկանացու են, և աշխարհի բոլոր փողերն ու իշխանությունը դա չեն փոխի: Սակայն Սուրբ Գրքի համատեքստում մարդկային մեղավորության այս նշումը չպետք է հուսահատեցնի, որովհետև խաչի վրա Հիսուսի մահը և Նրա հարությունը ճանապարհ հարթեցին, որպեսզի ցանկացած մարդ, որքան էլ մեղավոր լինի, կարողանա ունենալ հավիտենական կյանքի խոստումը: Եվ այդ կյանքը տրվում է բացառապես Նրա հանդեպ հավատով և ոչ թե մեր գործերով:

«Իսկ եթե մարդը չի կարող որևէ բարի գործով արժանանալ փրկության, այդ ժամանակ այն պետք է պարգևվի բացառապես շնոր-

հով, որ ընդունում է այն մարդը, ով խոստովանում է, որ ինքը մեղավոր է, քանի որ ընդունում է Հիսուսին և հավատում է Նրան: Ծնորհը բացառապես անհատույց պարգև է, իսկ հավատով արդարացումն անվիճելի է: Ամեն մի կասկած շոգիանում է, հենց որ պարզ է դառնում, որ ընկած մարդու արժանիքներով՝ իր բարի գործերի միջոցով, նա երբեք չի կարողանա ստանալ հավիտենական կյանքը (Է. Ուայթ, Հավատը և գործերը, 20):

Դուք երբևէ զգացե՞լ եք ձեր գերազանցությունը (կամ թերարժեքությունը)՝ այլ մարդկանց համեմատությամբ: (Բոլոր դեպքերում պետք չէ համեմատվել այլ մարդկանց հետ): Եթե այո, ապա խաչն ի՞նչ կարող է պատմել ձեզ բոլոր մարդկանց հավասարության մասին:

Երկուշաբթի փետրվարի 16

Փորձություն կյանքով

«Եվ նրանց գործերը գնում են նրանց հետևից», - ասում է Հայտնություն 14.13-ը արդարների պարգևի մասին: Միայն ապագան ցույց կտա անձի իսկական արժեքը: Հիմա մարդիկ կարող են պարծենալ իրենց հարստությամբ, գիտելիքներով, ֆիզիկական ուժով և, հնարավոր է, նրանք այդ ամենն իսկապես ունեն: Բայց դա ի՞նչ է նշանակում Աստծո աչքում: Որքա՜ն հաճախ բնավորության գծերը, ձեռքբերումներն ու գործերը, որ մարդիկ կարևոր կամ տպավորիչ են համարում, անմիաստ և ունայն են դուրս գալիս, ինչպիսին և կան իրականում: Վերցրե՛ք թեկուզ որոշ խղճուկ կերպարների՝ ժամանցային արդյունաբերությունից, որոնց երկրպագում և որոնց պաշտում են երկրպագուները: Այն, ինչ մենք աստվածացնում ենք և ինչին երկրպագում ենք, համոզիչ ապացույցն է այն բանի, թե որքան մեղավոր ենք մենք:

Կարդացե՛ք Առակաց 20.6-ը (տե՛ս նաև Երեմիա 9.23,24, Մարկոս 9.35): Ի՞նչ են ասում այս համարները իսկական արժեքների մասին: _____

_____

_____

_____

Մեկ արտասովոր, աչքի զարնող արարքը կամ հանուն սիրելիի ինքնազոհության գործողությունը չի կարող ծառայել որպես մեր փոխ-

հարաբերությունների խորության և որակի ապացույց. դրանց մասին վկայում են մի ամբողջ շարք կանոնավոր, առաջին հայացքից անշան արարքներ, որ մենք կատարում ենք ամեն օր՝ համբերատար ու անփոփոխ կերպով: Այն սնունդը, որ դուք ամեն օր պատրաստում և մատուցում եք ձեր ամուսնուն, մշտական ուշադրությունը հիվանդ ծնողների հանդեպ, անփոփոխ ջանասիրությունն աշխատանքի վայրում՝ ողջ կյանքի ընթացքում կատարվող այս բոլոր համեստ գործողությունները այն բանի վկայությունն են, որ ձեր հավատն իսկական է: Կայուն հավատարմությունն ավելի արժեքավոր է, քան սիրո տպավորիչ, բայց հազվադեպ դրսևորումները:

Այս սկզբունքն արդարացի է նաև Աստծո հետ մեր փոխհարաբերություններում: Ավելի դժվար, բայց առավել արժեքավոր է ապրել Աստծո համար, քան մահանալ հանուն Նրա: Աստծո համար ապրող սուրբն ավելի մեծ գործ է անում, քան Նրա համար մահացող նահատակը: Ամեն մեկը կարող է պնդել, որ հավատում է Աստծուն և ծառայում է Նրան, հարցն այն է, թե այդ հավատը հավիտենական հետևանքներ ունի՞: Կամ, ինչպես ասել է Հիսուսը. «Բայց ով մինչև վերջ համբերի, նա կփրկվի» (Մատթեոս 24.13):

Ինչպե՞ս կարող եք դուք ձեր համբերությամբ, բարությամբ և մարդկանց կարիքներին արձագանքելու կարողությամբ որևէ մեկին բացահայտել Քրիստոսի բնավորությունը: Դուք պատրա՞ստ եք անելու դա, անգամ եթե ստիպված լինեք բարձր գին վճարել:

Երեքշաբթի **փետրվարի 17**

Տիրոջն սպասելով

Կարդացե՛ք Առակաց 20.17, 21.5-ը: Ի՞նչ գործնական դաս կարող ենք մենք քաղել այդ համարներից: ____

_____

_____

_____

Հաց գողացող գողն այն ավելի շուտ է ստանում, քան նա, ով աշխատում է իր սնունդն ստանալու համար: Իրենց վատ ապրանքը վաճառելու հանար աշխատող առևտրականները կարող են ավելի շուտ հարստանալ, քան ազնիվ վաճառականը (համեմատե՛ք Առակաց 21.5-ը հաջորդ համարի հետ): Սակայն, պնդում է Առակաց գիրքը, ապա-

գան քաղցրությունը «խաձավազ» կդարձնի, և հապաձեպ ձեռք բերված հարստությունն աղքատություն կդառնա: Տեքստը մի շարք օրինակներ է բերում, որոնք պատկերում են այս դիտարկման ճշգրտությունը.

1. Ժառանգումը (Առակաց 20.21): Չափազանց արագ ստացվող ժառանգության մասին հիշատակումը (ենթադրվում է, որ ծնողները դեռևս կենդանի են) հաջորդում է այն մարդու դատապարտմանը, ով չարախոսում է իր ծնողներին (Առակաց 20.20): Այս երկու ասացվածքների կապը չափազանց ծանրակշիռ է: Ինչպես եթե որդին (կամ դուստրը) չարախոսեր ծնողներին, ավելին՝ նրանց մահը ցանկանար: Հնարավոր է՝ նա անգամ մտածել է ծնողների մահվան ծրագիրը, որպեսզի ստանա ժառանգությունը: Այդպիսի վարքի հեռանկարը ողբերգական է. ճրագը, որ նա հիմա օգտագործում է, վերածվել է «խորը խավարի» (համար 20), և ծնողների դեմ նրա անեծքները հենց իր դեմ կդառնան, քանի որ «նրա վախճանը չի օրհնվի» (համար 21):

2. Վրեժը (Առակաց 20.22): Այս անգամ առակը հասցեագրված է տուժածին, ով կարող է գայթակղություն ունենալ՝ վրեժ լուծելու իր դեմ գործված չարիքի համար: Խորհուրդը պարզ է՝ գործը թողնել Տիրոջը: Միայն այդ ժամանակ դուք կպահպանեք ձեզ, դա ենթադրում է, որ եթե դուք վրեժ եք լուծում, լուրջ վտանգի եք ենթարկում իքներդ ձեզ: Առակաց 25.21,22-ը ընդգծում են այս նույն հրահանգը՝ օգտագործելով թշնամու գլխի վրա կրակի շեղջեր հավաքելու՝ ապաշխարություն և դարձ արտահայտող եգիպտական ծեսի փոխաբերությունը: Եթե դուք ձեռնպահ եք մնում վրեժ լուծելուց, խոստանում է Առակաց 20.22-ը, դուք պաշտպանված կլինեք Տիրոջ կողմից և այդ ընթացքում դեռ ձեր թշնամուն էլ կփրկեք՝ այդպիսով չարին բարիով հաղթելով (Հռոմեացիս 12.21):

Ինչպե՞ս սովորենք նմանվել Քրիստոսի բնավորությանը, երբ բանը հասնում է չարին բարիով հաղթելուն: Ինչո՞ւ է դա հակասում մեր ներքին էությանը: Ինչո՞ւ է սեփական «ես»-ի համար մահանալը այդ նպատակին հասնելու միակ միջոցը:

Չորեքշաբթի փետրվարի 18

Կարեկցանք աղքատների նկատմամբ

Մարդու բնույթը չափվում է ոչ այնքան իմաստությամբ կամ անգամ կրոնական նվիրվածությամբ, որքան աղքատներին ու կարիքավոր-

ներին օգնելու պատրաստակամությամբ: Ձեր բնավորությունը որոշվում է ոչ թե նրանով, թե դուք ինչ ունեք, այլ նրանով, թե դուք ինչ եք տալիս ձեր մերձավորին: Ո՞վ եք դուք ձեր մերձավորի համար՝ ահա՛ ձեր բնավորության չափորոշիչը: Իր մերձավորին փրկած սամարացին ավելի մոտ է Աստծո արքայությանը, քան հոգևոր մարդ համարվող քահանան (Ղուկաս 10.26-37): Առակաց գիրքն ընդգծում և բացատրում է այս նախապատվությունը:

Հանուն Աստծո: Առաջին պատճառը, որ դա նախապատվություն դարձնենք, Իր՝ Աստծո մեջ է, Ով աղքատների հանդեպ կարեկցանքը գերադասում է մեր կրոնական նախանձախնդրությունից (Առակաց 19.17, 21.13): Աղքատների հանդեպ ձեր զգայուն լինելուն և նրանց համար կատարված ձեր որոշակի գործերին Աստված ավելի շատ ուշադրություն կդարձնի, քան ձեր բարեպաշտ արարքներից ցանկացածին: Աստված Ինքն էլ այդպիսի գործեր է գործել, ուստի, երբ մենք ինչ-որ բան ենք անում աղքատների համար, դա անում ենք Իր՝ Աստծո համար (Մատթեոս 25.35-40):

Կարդացե՛ք Մատթեոս 25.35-40-ը: Այստեղ ի՞նչ է ասված այն մասին, թե ինչպես էր Հիսուսն Իրեն նույնականացնում կարիքավորների հետ: Այս ճշմարտությունն ինչպե՞ս պետք է ազդի այդպիսի մարդկանց հանդեպ մեր վերաբերմունքի վրա: _____-

_____

_____

_____

Հանուն աղքատների: Երկրորդ պատճառն ինքը՝ աղքատն է, ում Աստված ստեղծել է նույն կերպ, ինչպես և հարուստին (Առակաց 22.2): Մարդկանց միջև հավասարությունը, հիմնված այն բանի վրա, որ նրանք բոլորն ստեղծվել են Աստծո կողմից, աղքատին նույնքան է դարձնում ուշադրության արժանի, որքան և հարուստին: Մենք պետք է սիրենք մեր մերձավորներին այնպիսին, ինչպիսին նրանք կան՝ Աստծո պատկերով ստեղծված արարածներ:

Միևնույն ժամանակ մտածե՛ք այն մասին, թե որքան լավ բան եք դուք ստանում՝ կարիքավորներին օգնելով: Մենք մեր էությամբ եսասեր ենք. անխոս, մենք հակված ենք մեզ ուրիշներից ավելի լավը համարելու: Օգնելով կարիքավորներին՝ մենք սովորում ենք մահանալ ինքներս մեզ համար և ավելի լավ արտացոլել Քրիստոսի բնավորությունը, իսկ ի՞նչը ավելի մեծ արժեք ունի մեզ համար, քան դա:

Դուք անձնական բավարարվածության ավելի մեծ զգացում ունենում եք կարիքավորներին օգնելո՞ւց, թե երբ ինչ-որ բան անում եք ինքներդ ձեզ համար:

Հինգշաբթի փետրվարի 19

Դաստիարակությունը

Եբրայերեն «դաստիարակություն» բառը ծագում է «կառուցել» և «սկսել» նշանակող բառից: Այս իմաստները ներառված են դաստիարակության հրեական մոտեցման մեջ. երբ մենք «կրթում ենք երեխային» (Առակաց 22.6), մենք կառուցում ենք, մենք սկիզբ ենք դնում և հիմք են գցում ապագայի համար: Այդ պատճառով ծնողներն ու մանկավարժները պատասխանատու են իրենց երեխաների ապագայի և անուղղակիորեն՝ աշխարհի ապագայի համար: Այն, ինչ մենք անում ենք մեր երեխաների հետ այսօր, հասարակության վրա ազդում է հետագա շատ սերունդների ընթացքում:

Կարդացե՛ք Առակաց 22.6-ը: Ի՞նչ է ասված այստեղ երեխաներին ճիշտ դաստիարակելու կարևորության մասին: _____

_____

Հատկանշական է, որ եբրայերեն «դաստիարակություն» բառն այն նույն բառն է, որ փոխանցում է տաճարի «սրբանալու» գաղափարը (Գ Թագավորաց 8.63): Վաղ տարիքից մեր երեխաներին դաստիարակելը նշանակում է նրանց Աստծուն նվիրաբերել ճիշտ այնպես, ինչպես նվիրաբերվեց տաճարը: Դա ազդում է նաև մեր փրկության վրա. «Ծնողներին հանձնարարված է իրենց երեխաների դաստիարակության և կրթության խոշոր գործը՝ հետագա, հավիտենական կյանքի համար» (Է. Ուայթ, Երեխաների դաստիարակությունը, 38): Այդպիսի դաստիարակությունը հավիտենական հետևանքներ ունի: Պողոս առաքյալն, ակներևաբար, այս համարն ի նկատի ունի, երբ գովաբանում է Տիմոթեոսին, որ վերջինս վաղ մանկությունից «սուրբ գրքերը գիտեր, որ կարող են քեզ իմաստուն անել փրկության համար՝ այն հավատի միջոցով, որ Քրիստոս Հիսուսում է» (Բ Տիմոթեոս 3.15):

Կարդացե՛ք Առակաց 22.8-ը: Մենք ի՞նչ սկզբունքներ ենք գտնում այստեղ: _____

_____

Դաստիարակությունը կարելի է համեմատել սերմեր ցանելու հետ: Մեր հասարակության և մեր զավակների ապագան կախված է նրանից, որ մեր դաստիարակությունը կտապալվի, և մենք տհաճություններ կքաղենք (համար 8): Եթե մեր սերմը շոշափել է երեխաների սրտերը (համար 15), ապա «խրատի գավազանը» նրանցից կհեռացնի հիմարությունը:

Մենք այնքա՜ն հաճախակի ենք ուրիշներին (հատկապես՝ երեխաներին) սովորեցնում մեր սեփական օրինակով: Խորհեցե՛ք ձեր օրինակի մասին. ի՞նչ ժառանգություն եք դուք թողնում: Ո՞ր ոլորտներում, եթե այդպիսիք կան, դուք կկարողանայիք ավելի լավ օրինակ թողնել:

Ուրբաթ փետրվարի 20

Հեպագա ուսումնասիրության համար

«Ծնողները պարտավոր են ճշմարտացիության օրինակ լինել և իրենց օրինակն ամեն օր տպավորել երեխայի սրտում: Բոլոր կենսական հարցերում ծնողները պետք է ղեկավարվեն մի անփոփոխ սկզբունքով, հատկապես երեխաների դաստիարակության և ուսուցման հարցում: Ծնողնե՛ր, երբեք մի՛ կեղծեք, երբեք մի՛ ստեք և վատ օրինակ ցույց մի՛ տվեք: Եթե դուք ցանկանում եք, որ ձեր երեխաները մեծանալով ազնիվ դառնան, ազնի՛վ եղեք նրանց հետ» (Է. Ուայթ, Երեխաների դաստիարակությունը, 151):

«Շատ հայրեր ու մայրեր, ըստ երևույթին, ենթադրում են, որ եթե իրենք կերակրեն, հագցնեն երեխաներին և այս աշխարհի օրինակին համապատասխան կրթություն տան նրանց, ապա կկատարեն իրենց ողջ պարտքը: Նրանք չափազանց զբաղված են գործերով կամ զվարճանքներով, որ իրենց երեխաների դաստիարակությունն իրենց ողջ կյանքի գործը համարեն: Նրանք չեն ձգտում երեխաներին դաստիարակել այնպես, որ նրանք իրենց տաղանդներն օգտագործեն իրենց Փրկչի փառաբանման համար: Սողոմոնը չէր ասում. «Ասա՛ երեխային իր ճանապարհի համեմատ, որ ծերացած էլ՝ չի հեռանա նրանից»: Այլ նա ասել է հետևյալ խոսքերը. «Կրթի՛ր երեխային իր ճանապարհի համեմատ, որ ծերացած էլ՝ չի հեռանա նրանից» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 38):

Հարցեր քննարկման համար

1. Խորհեցե՛ք Առակաց 22.6-ում ներկայացված մտքի մասին: Մենք ինչո՞ւ պետք է զգույշ լինենք այս սկզբունքը կիրառելիս: Շատ ծնողներ արել են ամեն հնարավորը իրենց երեխաներին դաստիարակելու համար, բայց, միևնույնն է, մեծանալով՝ այդ երեխաները սխալ ընտրություն են արել: Ինչո՞ւ, դիտարկելով այս համարի նշանակությունը, մենք չպետք է մոռանանք ազատ կամքի գոյության և մեծ պայքարի իրական բնույթի մասին:
2. Եվս մեկ անգամ քննարկե՛ք չորեքշաբթի օրվա դասի վերջին հարցը: Հենց մեր մասին ի՞նչ է ասում այն փաստը, որ, օգնելով ուրիշներին, մենք բավարարվածության հսկայական զգացում ենք ունենում, հատկապես երբ փոխարենը ոչինչ չենք ստանում: Սա ինչպե՞ս է բացատրում այն, որ շատ հարուստ մարդիկ իրենց դժբախտ են զգում:
3. Թեև մենք ամենքս հավասար չենք մեր ունեցած տաղանդներով, կրթությամբ, փորձով և այլն, մենք հավասար ենք ամենագլխավորով. մեզ ամենքիս անհրաժեշտ է փրկարար խաչը: Սա ի՞նչ պետք է ասի մեզ բոլոր մարդկանց հիմնարար հավասարության և արժանապատվության մասին: Ավելին, այս ճշմարտությունն ինչպե՞ս պետք է ազդի բոլոր մարդկանց հանդեպ մեր վերաբերմունքի վրա:

ԴԱՍ 9

ՓԵՏՐՎԱՐԻ 21-27

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Առակաց 22, Առակաց 23, Ելից 22.21-27, Առակաց 24, Եփեսացիս 5.20, Եզեկիել 33.8:

Հիշելու համարը.
«Չէ՞ որ քեզ համար գրեցի եռապատիկ խրատներով և գիտությամբ, որ քեզ սովորեցնեմ ճշմարտության խոսքի ստուգությունը, որ քեզ հարցնողներին ճշմարտության խոսքեր պատասխանես» (Առակաց 22.20,21):

Այս դասի որոշ առակներ համանմանություն ունեն եգիպտական տեքստերի հետ: Հնարավոր է՝ Սողոմոնը, ոգեշնչված լինելով Հոգուց, այդ տեքստերը շարադրել է այնպես, որ դրանք համապատասխանեն հրեական մտածելակերպին: Այստեղ եգիպտացիների խոսքերը հանդիպում են Իսրայելի Աստծո Հոգուն և, այդպիսով, դառնում են Աստծո հայտնությունը:

Այս դիտարկումը մեծ նշանակություն ունի, որովհետև այն մեզ հիշեցնում է «ճշմարտության» համընդհանուր բնույթի մասին: Այն, ինչ ճիշտ է հրեայի համար, պետք է ճիշտ լինի նաև եգիպտացու համար: Հակառակ դեպքում դա ճշմարտություն չի լինի: Որոշ ճշմարտություններ ընդունելի են ամենուրեք և բոլորի համար:

Այս հորդորների ոլորտն ընդհանուր է երկու հանրույթների համար: Այսինքն՝ դուք ով էլ լինեք՝ հավատացյալ, թե ոչ, և որտեղ էլ ապրեք, կան որոշ բաներ, որոնք պետք չէ, որ դուք անեք:

Ճշմարտության գիտելիքը

Կարդացե՛ք Առակաց 22.17,18-ը: Այստեղ ի՞նչ է ասված այն մասին, թե ինչպես պետք է ճշմարտությունը ներգործի մեր կյանքի վրա: _____

_____

_____

Աշակերտի առաջին պարտականությունն է՝ լսել և ուշադիր լինել: «Ծռի՛ր ականջդ և լսի՛ր» (Առակաց 22.17): Այլ խոսքերով՝ «Կենտրոնացի՛ր»: Վճռորոշ պահ է այն, որ ճշմարտություն որոնողը պետք է լուրջ լինի, պետք է իսկապես ձգտի իմանալ, թե ինչն է ճիշտ, իսկ հետո անի դա:

Բայց սովորողներին բավական չէ միայն լսել կամ էլ անգամ հասկանալ այն, ինչ սովորեցնում են: Որոշ մարդիկ, իմանալով բազում աստվածաշնչյան ճշմարտություններ, միևնույն ժամանակ չունեն ճշմարտության իրական, գործնական գիտություն (Հովհաննես 14.6):

Ճշմարտությունը պետք է հասնի մարդու բուն էությանը: Եբրայերեն «սրտումդ» արտահայտությունն (Առակաց 22.18) ուղղակիորեն խոսում է այդ մասին: Իսկ դասը չպետք է մնա մակերեսին, այն պետք է մարսվի, ներծծվի և դառնա մեր ներքին էության մի մասը: Միայն այն բանից հետո, երբ հրահանգը խորը կերպով ներթափանցի մեր էության մեջ, այն կկարողանա բարձրանալ դեպի մեր շուրթերը, և մենք համոզիչ վկայություն կներկայացնենք:

Կարդացե՛ք Առակաց 22.19-21-ը: Ի՞նչ պետք է տա մեզ ճշմարտությունը ճանաչելու փորձառությունը: ___

_____

_____

1. *Հավատ* (համար 19): Իմաստություն սովորեցնելու առաջին նպատակը իմաստությունը չէ ինքնին: Առակաց գիրքը չի ձգտում աշակերտներին առավել խելամիտ և առավել հմուտ դարձնել: Ուսուցչի նպատակն է՝ ամրապնդել Տիրոջ հանդեպ վստահությունը:

2. *Համոզվածությունը* (համար 21): Աշակերտները պետք է իմանան, թե ինչու են այդ «ճշմարտության խոսքերը» ճիշտ. նրանք պետք է իմանան, թե ինչու են իրենք հավատում այն բանին, ինչին հավատում են: Հավատը ըստ սահմանման՝ հավատն է առ այն, ինչ մենք մինչև վերջ չենք հասկանում:

3. *Պատասխանատվություն* (համար 21): Դաստիարակության գործընթացում վերջին քայլը ուրիշ մարդկանց հետ «ճշմարտության խոսքերով» կիսվելն է, որ մենք ստացել ենք: Սրա մեջ է մեր՝ որպես Աստծո ժողովրդի կոչման էությունը:

Մտորե՛ք Յոթերորդ օրվա ադվենտիստ լինելու համոզիչ և ռացիոնալ պատճառների մասին: Որո՞նք են այդ պատճառները, և ինչո՞ւ մենք պետք է առանց տատանվելու հետևենք դրանց և դրանց մասին պատմենք ուրիշներին: Շաբաթ օրը դասարանում կեսվե՛ք ձեր պատասխանով:

Երկուշաբթի փետրվարի 23

Աղքատներին կողոպտելը

Կարդացե՛ք Առակաց 22.22,23, 23.10-ը: Ինչի՞ մասին են զգուշացնում մեզ այս համարները: _____

_____

_____

Թեև գողանալը բոլոր դեպքերում վատ բան է, այս արգելքը վերաբերում է աղքատներից ու տնանկներից գողանալուն, ովքեր հասարակության ամենախոցելի խավն են: Նրանք իսկապես անօգնական են և, հետևաբար, Աստծո առանձնահատուկ հոգածության առարկան են (Ելից 22.21-27): Մտաբերվում է այն պատմությունը, երբ Դավիթն սպանեց Ուրիային՝ նրա կնոջը խլելու համար, և առակը, որ այդ կապակցությամբ պատմեց Նաթանը (Բ Թագավորաց 12.1-4): Աղքատներին թալանելը ոչ միայն ուժգնացնում է պատժվող գործողությունը. դա մեղք է Իր՝ Տիրոջ դեմ (Բ Թագավորաց 12.13): Խլել նրանցից, ովքեր ձեզանից քիչ ունեն, ավելի վատ է, քան գողությունը. դա վախկոտություն է: Մի՞թե *այդ գողերը մտածում են, թե Աստված չի տեսնում՝ ինչ են անում իրենք:*

Առակաց 22.23-ը ենթադրում է, որ եթե անգամ գողն անպատիժ մնա մարդկանցից, Աստված կհատուցի նրան: Փրկչի հիշատակումը՝ *«Գոէլ»* (Առակաց 23.11), հնարավոր է, անգամ ակնարկում է վերջին դատաստանը (Հոբ 19.25):

Այսպիսով, այս նախազգուշացումը, Աստվածաշնչի մյուս նախազգուշացումների նման, դիմում է նրանց, ովքեր շահագրգռված են միայն նրանով, որ ավելի շուտ «օգուտ» ստանան իրենց գործողություններից, այլ ոչ թե երկարաժամկետ արդյունքներով: Նրանք տիրա-

պետություններ են ձեռք բերում և իրենց ունեցվածքը մեծացնում են և պատրաստ են խաբել ու սպանել հանուն այդ նպատակի: Նրանք կարող են դա վայելել հիմա, բայց ավելի ուշ նրանք ստիպված են լինելու վճարել: Այս փաստարկը կոչված է ոչ միայն կանգնեցնելու գողին, այլ նաև ցույց տալու, որ մեր բարոյական արժեքները անխզելիորեն կապված են Աստծո իշխանության հետ:

Որոշ ժամանակ անց Անգլիայում քաղաքային ավտոբուսներում կարելի էր հետևյալ պաստառը տեսնել. «Աստված չկա, այնպես որ դադարի՛ր անհանգստանալ և վայելիր կյանքը»: Ու թեև այս արտահայտությանը բազմաթիվ սրամիտ պատասխաններ են եղել, մտածե՛ք ահա թե ինչի մասին. եթե *Աստված չլիներ, ապա նրանք, ովքեր գողանում են աղքատներից, իսկապես անհանգստանալու բան չէին ունենա: Իսկապես, բոլոր նրանք, ովքեր մեծ չարիք են գործել և, թվում է, անպատիժ են մնացել, իրականում անպատիժ կմնային:* Աստծո և դատաստանի մասին Նրա խոստման հանդեպ հավատը ինչպե՞ս է օգնում մեզ՝ *որոշակի* հոգևոր խաղաղություն ձեռք բերելու այն ողջ անարդարության մեջ, որ մենք տեսնում ենք ժամանակակից աշխարհում:

Երեքշաբթի **փետրվարի 24**

Մի՛ նախանձիր մեղավորներին

Ինչի՞ց են մեզ նախազգուշացնում հետևյալ համարները. Առակաց 23.17, 24.1,2, 24.19,20: _____

_____

_____

Ինչո՞ւ կարող են որոշ մարդիկ նախանձել մեղավորներին: Ավելի շուտ, նրանք նախանձում են ոչ թե այն պատճառով, որ մեղավորները մեղքեր են գործում, այլ այն շահույթին (հարստությանը, հաջողությանը, իշխանությանը), որ մեղավորներն ստանում են իրենց ամբարշտության արդյունքում. ահա՛ թե իրականում ինչ են ցանկանում նախանձողները:

Թեև, իհարկե, ոչ բոլոր հաջողակ կամ հարուստ մարդկանց կարելի է ամբարիշտ անվանել, ոմանք այդպիսին են, և հենց նրանց մասին են մեզ նախազգուշացնում այս համարներում: Մենք տեսնում ենք, թե

որքան «լավ» են ապրում նրանք, և մեզ համար հեշտ է նախանձել այն ամենին, ինչ նրանք ունեն, հատկապես այն դեպքում, եթե մենք ինքներս դժվարությամբ ենք ծայրը ծայրին հասցնում:

Սակայն սա իրերի վերաբերյալ շատ նեղ ու անհեռատես կարծիք է: Ի վերջո, մեղքի գայթակղությունն այն է, որ այն անհապաղ պարգևատրում է առաջարկում, մենք վայելք ենք ստանում անմիջապես: Ապագայի հեռանկարը կարող է մեզ պաշտպանել գայթակղությունից, այսինքն՝ մենք պետք է ավելի հեռուն տեսնենք, քան այսրոպեական շահույթն է, որ կբերի մեր մեղքը, և մտածենք երկարաժամկետ հետևանքների մասին:

Բացի դրանից, ո՞վ չի տեսել, թե որքան քայքայիչ է մեղքը: Դրանից մենք երբեք անվնաս դուրս չենք գա: Մենք կարող ենք այն թաքցնել ուրիշներից, որ ոչ ոք, անգամ ամենամտերիմները, չնչին պատկերացում անգամ չունենան այն մասին, թե ինչ ենք մենք անում (թեև վաղ թե ուշ նրանք, միևնույնն է, գլխի կընկնեն, այնպես չէ՞): Կամ էլ մենք կարող ենք խաբել մեզ՝ մտածելով, որ մեր մեղքերն այնքան էլ լուրջ չեն: (*Ի վերջո, տեսե՛ք, թե որքան մարդ է ինձանից ավելի վատ վարվում*): Բայց վաղ թե ուշ մեղքի հետևանքները կհասնեն մեզ:

Մենք պետք է ատենք մեղքը, որովհետև դա մեղք է: Պետք է ատենք այն ամենի պատճառով, ինչ նա արել է մեզ, մեր աշխարհի և մեր Տիրոջ հետ: Եթե ցանկանում եք տեսնել մեղքի իրական գինը, նայե՛ք խաչված Հիսուսին: Ահա՛ թե ինչ արժե մեր մեղքը: Արդեն միայն այդ գիտակցությունը պետք է բավարար լինի (թեև հաճախ դա այդպես չէ), որպեսզի ստիպի մեզ՝ խուսափել մեղքից և հնարավորինս հեռու մնալ նրանցից, ովքեր դրդում են մեզ դրան:

Դուք երբևէ առիթ ունեցե՞լ եք նախանձելու ուրիշի հաջողությանը: Ո՞րն է լավագույն միջոցը այդ մահացու վտանգավոր հոգևոր խնդրի դեմ: (Տե՛ս Եփեսացիս 5.20):

Չորեքշաբթի **փետրվարի 25**

Ինչ մտնում է բերանը

Պատահական չէ, որ մարդու առաջին գայթակղությունը կապված է սննդի հետ (Ծննդոց 3.3): Անհնազանդության և սննդի մեջ արգելված պտուղների օգտագործման արդյունքում մեղքն ու մահը մտան աշխարհ (Ծննդոց 3.1-7, Հռոմեացիս 5.12): Հարկ չկա մոռանալու նաև այն փաստը, որ Աստվածաշնչում գինու օգտագործման մասին առաջին

հիշատակումը կապված է սոսկալի և նվաստացուցիչ իրադարձության հետ (Ծննդոց 9.21):

Կարդացե՛ք Առակաց 23.29-35-ը: Ալկոհոլի օգտագործումը ինչպե՞ս է ներկայացված այս տեքստում: _____

Մեզանից ո՞վ չի տեսել, թե որքան կործանարար կարող է լինել ալկոհոլը: Իհարկե՛, ոչ բոլոր խմողներն են հայտնվում ջրափոսում: Բայց, ամենայն հավանականությամբ, ջրափոսում պառկած հարբեցողը առաջին բաժակը խմելիս անգամ չէր կարող պատկերացնել, թե վերջիվերջո որտեղ է հայտնվելու:

«Այն մարդը, ով արբեցուցիչ ըմպելիքներ խմելու սովորություն ունի, հուսահատ վիճակում է: Նրան հնարավոր չէ ապացուցել կամ համոզել՝ հրաժարվել իր ցանկությունները բավարարելուց: Նրա ստամոքսը և ուղեղը հիվանդ են, նրա կամքի ուժը թուլացած է, իսկ ախորժակն՝ անկառավարելի: Խավարի իշխանը նրան պահում է ստրկության մեջ, որից նա ուժ չունի դուրս պրծնելու» (Է. Ուայթ, ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հատոր 3, 1162):

Կարդացե՛ք Առակաց 23.1-8-ը: Ինչո՞ւ մենք պետք է վերահսկենք մեր ախորժակը: _____

Այս խրատը պարզապես սեղանի շուրջ ճիշտ վարվեցողություն չէ, որ նկարագրում է: Աստվածաշնչյան տեքստը նախազգուշացնում է նրանց, ովքեր սիրում են ուտել, և ով ունի ոչ չափավոր ախորժակ (Առակաց 23.2): «Կոկորդի վրա դանակ դնել» փոխաբերությունը հատկապես ուժեղ է. այն ոչ միայն խոսում է ախորժակի սանձահարման մասին, այլ նաև միտք է հուշում, որ սնունդը կարող է սպառնալիք լինել մեր առողջությանն ու անգամ կյանքին: Եբրայերեն բառը *(բիհ)*, որ թարգմանված է «լավ ուշադրություն արա», հաղորդում է սննդի տարբեր տեսակների մանրակրկիտ տարբերակման գաղափարը: Այդ նույն բառն է օգտագործում Սողոմոնը, երբ իմաստություն է խնդրում, որպեսզի «դատի *(բիհ)* չարի և բարու մեջտեղը» (Գ Թագավորաց 3.9): Այստեղ ներշնչված հեղինակը չի խոսում պարզապես ախորժակի վերահսկման մասին: Նրա խորհուրդը կարող է վերաբերել նաև խնջույքներին և ընկերախմբերում խմելուն, երբ մեզ ստիպում և գայթակղում են վայելել նրբահամ խորտիկները (Առակաց 23.3):

Մտաբերե՛ք մի ծանոթի, ում կյանքը կործանվել է ալկոհոլի պատճառով: Ինչո՞ւ այդ մի օրինակը պետք է բավական լինի մեզ, որպեսզի հասկանանք, թե ինչու պետք չէ երբևէ այդ թույնը ներս թողնել մեր օրգանիզմ:

Հինգշաբթի փետրվարի 26

Մեր պատասխանատվությունը

«Ես ամբարշտին ասելիս՝ ով ամբարիշտ, դու անպատճառ պիտի մեռնես, և դու եթե չխոսես ամբարշտին՝ իր ճանապարհից զգուշացնելու համար, այն ամբարիշտը կմեռնի իր անօրենության համար, բայց նրա արյունը քո ձեռքից ես կպահանջեմ» (Եզեկիել 33.8): Ո՞ր հիմնական հոգևոր սկզբունքն է բացահայտված այստեղ: _____

_____

_____

Սրանից մի քանի տարի առաջ մի մեծ քաղաքում գիշերը փողոցում հարձակվել էին մի կնոջ վրա: Նա օգնություն էր կանչում, տասնյակ մարդիկ լսում էին նրա աղաղակը, բայց ոչ ոք իրեն նեղություն անգամ չտվեց՝ ոստիկանություն կանչելու: Շատ մարդիկ դուրս նայեցին պատուհանից, հետո վերադարձան իրենց գործերին: Շուտով ճիչերը լռեցին: Առավոտյան կնոջը գտան մահացած՝ դանակից ստացած բազմաթիվ վերքերով:

Նրա մահվան համար մեղավո՞ր են այն մարդիկ, ովքեր լսում էին աղաղակները, բայց ոչինչ չարեցին: Թեև իրենք չէին հարձակվել նրա վրա, կարելի՞ է ասել, որ կնոջը սպանեց նրանց անտարբերությունը:

Կարդացե՛ք Առակաց 24.11,12,23-28-ը: Ի՞նչ կարևոր նախազգուշացում է տրվում մեզ այս համարներում:

_____

_____

_____

Մովսեսի օրենքը հստակ նախազգուշացնում է, որ նա, ով չի հայտնում հանցանքի մասին, որի վկան է դարձել, մեղավոր է (Ղևտացոց 5.1): Գուցե մենք ի վիճակի չենք կանխելու հանցագործությունը, բայց եթե մենք լռում ենք այն մասին, ինչ տեսել ենք, ապա մեղքը կիսում ենք հանցագործի հետ: Մեր լռությունը մեզ հանցակից է դարձնում:

Մյուս կողմից, եթե մենք մեր վկայության մեջ ճշմարտությունը հաղորդում ենք «հարմար պատասխանով» (Առակաց 24.26), մենք ճիշտ և պատասխանատու կերպով ենք վարվում: Այդպիսի արարքը համեմատվում է շրթունքները համբուրելու հետ և նշանակում է, որ մարդը հոգ է տանում դիմացինի մասին:

Լռելն ու ոչինչ չանելը, երբ ձեր փողոցում կին են սպանում, սոսկալի է: Իսկ այժմ խորհեցե՛ք այլ աղետների՝ քաղցի, պատերազմների, անարդարության, ռասիզմի, տնտեսական շահագործման մասին: Ինչպիսի՞ն է մեր պատասխանատվությունն այդ աղետների մեջ:

Ուրբաթ փետրվարի 27

Հետագա ուսումնասիրության համար

«Մեզ շրջապատող մարդկանց հոգիները հարկավոր է արթնացնել և փրկել, այլապես նրանք կկործանվեն: Մենք ամենքս ենթակա ենք ազդեցության, որը խոսում է կա՛մ հօգուտ ճշմարտության, կա՛մ դրա դեմ: Ես աղոթում եմ, որ ինձ ուղեկցի անսխալ վկայությունն այն բանի, որ ես Քրիստոսի աշակերտուհիներից մեկն եմ: Մենք ցանկանում ենք ավելին ունենալ, քան շաբաթ օրվա կրոնն է: Մենք կենդանի օրենքի և այն բանի կարիքն ունենք, որ ամեն օր զգանք անհատական պատասխանատվություն: Դա շատերն անտեսում են, և արդյունքում ծնվում են անփութությունը, անտարբերությունը, զգոնության և հոգևորության անբավարարությունը» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 1, 99):

«Խոսեցե՛ք հավատի մասին, ապրե՛ք հավատով, սե՛ր աճեցրեք Աստծո հանդեպ, վկայե՛ք աշխարհին այն ամենի մասին, թե ինչ է Հիսուսը ձեզ համար: Մեծարե՛ք Նրա սուրբ անունը: Պատմե՛ք Նրա բարության մասին, խոսե՛ք Նրա ողորմության և Նրա զորության մասին» (Է. Ուայթ, Մեր բարձրագույն կոչումը, 20):

Հարցեր քննարկման համար

1. Դասարանում քննարկե՛ք ձեր պատասխանները միաշաբթի օրվա վերջին դասի վերաբերյալ: Մենք ի՞նչ կարող ենք իմանալ միմյանց պատասխաններից: Ինչպե՞ս կարող ենք սովորել ամրապնդել մեր հավատն այն ճշմարտությունների հանդեպ, որ կազմում են մեր արժեհամակարգը:

2. Ինչ-որ մեկն ասել է. «Հիշի՛ր երկու բան. Քրիստոսը մահացել է քեզ համար, և մի օր դու մահանալու ես»: Երեքշաբթի օրվա դասի համատեքստում, որտեղ խոսվում էր այն մասին, որ մենք, միևնույնն է, այսպես թե այնպես ստիպված ենք լինելու պատասխան տալ մեր մեղքերի համար, ի՞նչ կարևոր դաս պետք է քաղենք այդ մտքից:
3. Վերադառնանք լոնդոնյան ավտոբուսների վրայի մակագրություններին. «Աստված չկա, այնպես որ դադարիր անհանգստանալ և վայելիր կյանքը»: Բացի դասի մեջ հիշատակվածներից, է՞լ ինչ խնդիրներ են կապված այս պնդման հետ: Ինչո՞ւ է Աստծո գոյությունը մարդկանց մեջ այդպիսի անհանգստություն առաջացնում: Այս պնդումն ինչպե՞ս է ցույց տալիս, թե որքանով է սատանան աղավաղել Աստծո բնավորությունը շատ մարդկանց մտքերում: Դասարանում մի քանի պատասխան մտածեցեք այս կարգախոսին: Ի՞նչ հակիրճ, բովանդակալից կարգախոսներ կարող էին օգնել մարդկանց՝ տեսնելու այն հույսը, որ մենք ունենք Աստծով:

ԴԱՍ 10

ԴԻՄԱԿԱՎՈՐՎԱԾ

ՓԵՏՐՎԱՐԻ 28 – ՄԱՐՏԻ 6

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Առակաց 25.2,3, 26.11,12, Ա Կորնթացիս 1.20,21, Առակաց 26.13-16, 27.5,6:

Հիշելու համարը.

«Մի՛ պարծենա թագավորի առջև, և մեծամեծների տեղը մի՛ կանգնիր» (Առակաց 25.6):

Ելացուցիչ գեղեցկության տեր օձի դիմակի ներքո, որ հաճելի խոսքեր է ասում և այնքան անկեղծորեն տարված է թվում Եվայի երջանկությամբ, թաքնված էր թշնամի, ով մտադրվել էր կործանել նրան (Ծննդոց 3.1-6): «Լույսի հրեշտակի» կերպարանքի ներքո սատանան ամենավտանգավոր ծուղակներն է պատրաստում մարդկության համար (Բ Կորնթացիս 11.14): Է՛լ ավելի վտանգավոր և խաբուսիկ է մեր սեփական կեղծավորությունը, երբ մենք ձևացնում ենք, թե այն չենք, ինչ ենք իրականում: Այդպես մենք խաբում ենք ուրիշներին և անգամ ինքներս մեզ:

Խաբել կարելի է տարբեր կերպ: Խաբեության ամենատարածված ձևերից մեկը խոսքով խաբելն է: Առակաց գրքի որոշ համարներ այս շաբաթ մեր ուշադրությունը կենտրոնացնում են խոսքերի՝ կեղծավոր խոսքերի, շողոքորթության, գեղեցիկ խոսքերի վրա, որոնք հնչում են որպես երաժշտություն և սքանչելի զգացմունքներ են առաջ բերում, բայց քողարկում են այլանդակ մտքեր ու մտադրություններ: Մենք պետք է զգույշ լինենք ոչ միայն այն հարցում, թե ինչ ենք ասում այլ մարդկանց, այլ նաև այն հարցում, թե ինչպես ենք մեկնաբանում այն, ինչ ուրիշներն ասում են մեզ: Հնարավոր է՝ որպես այս դասի հիմնական միտք՝ ամենից ավելի հարմար են Քրիստոսի խոսքերը. «Ահա՛ ես ուղարկում եմ ձեզ ինչպես ոչխարներ գայլերի մեջ, ուստի խորագետ եղեք ինչպես օձերը, և միամիտ՝ ինչպես աղավնիները» (Մատթեոս 10.16):

Միաշաբթի մարտի 1

Աստծո առեղծվածները

Կյանքը լի է առեղծվածներով: Ֆիզիկոս Դևիդ Դոյչը գրել է, որ «Առօրյա իրադարձությունները հիմնարար ֆիզիկայի եզրույթներով անհավատալիորեն բարդ են: Եթե թեյնիկը լցնենք ջրով և միացնենք այն, աշխարհի բոլոր գերհամակարգիչները, մի ողջ հավիտենության ընթացքում աշխատելով, չեն կարողանա լուծել այն հավասարումը, որը կգուշակի, թե ինչ են անելու ջրի այդ բոլոր մոլեկուլները, անգամ եթե մենք կարողանանք ինչ-որ կերպ որոշել դրանց նախնական վիճակը և դրանց վրա ներգործող բոլոր արտաքին ազդեցությունները, ինչն ինքնին անլուծելի խնդիր է»*:

Եթե մենք ի վիճակի չենք հասկանալու այնպիսի պարզ մի բան, ինչպիսին ջրի մոլեկուլն է, մենք ինչպե՞ս կարող ենք հույս ունենալանգամ՝ հասկանալու Աստծո առեղծվածները:

Կարդացե՛ք Առակաց 25.2,3-ը: Ի՞նչ միտք է արտահայտում հեղինակը, և ինչպե՞ս մենք կարող ենք այն կիրառել հարցերի ավելի լայն շրջանակի համար:

_____

_____

_____

_____

Այն, ինչ Աստծո փառքը տարբերում է թագավորների փառքից, Նրա «խորհրդավոր» բնույթն է և, որպես դրա հետևանք, մեր մարդկային անընդունակությունը՝ լիովին հասկանալ Նրան: Եբրայերեն *սթր* արմատը («ծածկել», «թաքցնել»), որից ծագում է «գաղտնիք» բառը, հաճախ է օգտագործվում հրեական գրվածքներում, որպեսզի բնութագրի այն, ինչ Աստծուն դարձնում է միակ ճշմարիտ Աստվածը (Եսայիա 45.14,15): Կան ճշմարտություններ Աստծո մասին, որ մենք պարզապես չենք կարող հասկանալ: Մյուս կողմից, թագավորների փառքը բնութագրում է նրանց՝ հետազոտելու պատրաստակամությունը: Թափանցիկությունն ու հաշվետու լինելը պետք է լինեն ղեկավարի առաջին հատկանիշը (Երկրորդ Օրինաց 17.14-20): Թագավորի պարտականությունն է՝ «քննել գործը», այսինքն՝ բացատրություն տալ իրադարձություններին և այն բանին, ինչ տեղի է ունենում:

* David Deutsch (2011–07–21). The Beginning of Infinity: Explanations That Transform the World (Kindle Locations 1972–1975). Penguin Group. Kindle Edition.

Կյանքը լի է չլուծված հարցերով: Ակնթարթի ընթացքում ասես պատահական իրադարձությունները կարող են վերածվել կյանքը մահից բաժանող սահմանագծի: Ոմանք մեկը մյուսի հետևից ողբերգություններ են ապրում, այն ժամանակ, երբ մյուսների գործերը լավ են: Այս ամենը պետք է ասի մեզ, որ մենք պետք է ապրենք հավատով: Այսօր ի՞նչ իրադարձություններ են տեղի ունենում ձեր կյանքում, որոնք դուք պետք է ընդունեք հավատով՝ ապավինելով Աստծուն: Դուք ուրիշ ի՞նչ ընտրություն ունեք:

Երկուշաբթի մարտի 2

Հիմարը՝ որպես իմաստուն

Թեև ճշմարտության հարաբերականության միտքը նոր հայտնագործություն չէ (հատկապես՝ արևմտյան աշխարհում), վերջին տարիներին այն լայն տարածում է ստացել: Այսինքն՝ այն, ինչ ճշմարիտ է մի մարդու համար (կամ մի մշակույթի), կարող է ճշմարիտ չլինել մեկ ուրիշի համար: Ու թեև կյանքի մի բնագավառում դա արդարացի է (որոշ երկրներում երթևեկում են փողոցի աջ կողմով, այլ երկրներում՝ ձախ), մյուսում դա վտանգավոր սխալ է, հատկապես բարոյականության հարցերում: Որոշ բաներ ճիշտ են, որոշները՝ սխալ, դա կախված չէ մեր բնակության վայրից կամ անձնական նախասիրություններից: Ի վերջո, մենք միշտ պետք է մեր տեսակետները հիմնավորենք Աստծո Խոսքի և դրա բովանդակած ճշմարտությունների վրա: Աստծո Խոսքը պետք է մեր ըմբռնման հիմնական աղբյուրը լինի, թե ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ, ինչն է բարի, ինչը՝ չար:

Կարդացե՛ք Առակաց 26.11,12-ը (տե՛ս նաև Դատավորաց 21.25, Ա Կորնթացիս 1.20,21, 2.6,7, Բ Կորընթացիս 1.12): Մենք ի՞նչ չպետք է անենք: _____

_____

_____

Ինչպես տեսնում ենք, ցանկության մեջ՝ անել այն, ինչ ճիշտ է մեր սեփական աչքերում, ոչ մի նոր բան չկա: Ինչպես դա սխալ էր այն ժամանակ, այնպես էլ սխալ է հիմա: Ինչպես արդեն ասել ենք, մեզանից ոչ ոք չի հասկանում ամեն բան, ավելի ճիշտ՝ լիովին մենք չենք հասկանում *ոչ մի բան:* Մենք բոլորս էլ ունենք բնագավառներ, որտեղ մեզ հարկ է աճել և սովորել, այդ պատճառով մենք միշտ

պետք է պատրաստ լինենք ընդունել, որ չունենք բոլոր հարցերի պատասխանները:

Ինչ վերաբերում է հիմարներին, ինչպես երևում է այս առակից, անհանգստության հիմք է ծառայում այն, որ նրանց հիմարության ազդեցությունը դուրս է գալիս նրանց սեփական կյանքի սահմաններից: Նրանք համոզված են իրենց իմաստությանը, այդ պատճառով կրկնում են իրենց հիմարությունը: Նրանք անգամ կարող են այնքան համոզիչ լինել, որ ուրիշները կմտածեն, թե նրանք իմաստուն են, կհարգեն նրանց և նրանց կդիմեն խորհրդի համար, և դա կարող է էլ ավելի մեծ խնդիրների հանգեցնել (Առակաց 26.8): Հիմարությունը կտարածվի, և ընդունվելով որպես իմաստություն՝ այն կարող է անհամեմատ ավելի կործանարար լինել: Բացի դրանից, հիմարներն այնքան անմիտ են, որ չեն գիտակցում իրենց հիմարությունը:

Որքա՞ն հաճախ եք դուք հակված դիմելու փոխզիջման՝ ոտնահարելով ձեր հիմնական արժեքները, հիմնարար համոզմունքները: Ի՞նչ է տեղի ունենում, երբ հիմնարար արժեքները հակասության մեջ են մտնում: Մենք ինչպե՞ս կարող ենք հասկանալ, թե դրանցից որոնք են առավել կարևոր:

Երեքշաբթի մարտի 3

Ծույլը

«Ծույլը իր ձեռքը կկոխի ամանի մեջ, և նրան դժվար է նրան հետ տանել իր բերանը» (Առակաց 26.15):

Ծույլ մարդը կարող է իրավացիորեն ասել. «Ճանապարհին առյուծ կա» (Առակաց 26.13): Հետևաբար, առավել խելամիտ է մնալ տանը և վտանգների չենթարկվել: Բայց այդպես վարվելով՝ մենք կորցնում ենք կյանքի առաջարկած բոլոր հնարավորությունները: Մենք երբեք չենք վայելի վարդի գեղեցկությունը, եթե չտառապենք նրա փշերի ծակոցներից: Մենք չենք կարողանա առաջ շարժվել, եթե վախենում ենք խոչընդոտներից: Այն մարդիկ, ովքեր ընդունակ չեն խիզախելու, երբեք չեն զգա կյանքի լիությունը:

Եկե՛ք դիտարկենք այս համարների մյուս փոխաբերությունները: Ինչպես ծխնիների վրա պտտվող դուռը ոչ մի տեղ չի գնում, այնպես էլ ծույլ մարդիկ, որ պտտվում են անկողնու մեջ, պարզապես փոխում են մարմնի դիրքը և նույնպես ոչ մի տեղ չեն գնում:

15-րդ համարի մեկ այլ պատկեր է՛լ ավելի ցնցող է: Ծույլը կարող է իր ձեռքը տանել կերակրով ամանը, *բայց նա չափազանց ծույլ է, որպեսզի հասցնի բերանին և կերակրվի:*

Բայց է՛լ ավելի վատ է նրանց մտավոր ծուլությունը, նրանց սահմանափակ մտածողությունն ու համոզվածությունը, որ իրենք իրավացի են: Այդ պատճառով նրանք իրենց աչքերում միշտ ճիշտ կլինեն՝ յոթ իմաստուններից ավելի իմաստուն (Առակաց 26.16) և փակ այլ, հնարավոր է՝ ավելի իմաստուն կարծիքների համար, քան իրենց սեփականն է: Նա, ով մտածում է, որ գիտի բոլոր հարցերի պատասխանները, որպես կանոն, դրանք չգիտի:

«Դատի ժամանակ մարդիկ դատապարտվելու են ոչ թե նրա համար, որ անկեղծորեն հավատացել են կեղծիքին, այլ նրա համար, որ չհավատացին ճշմարտությանը և անտեսեցին այն ճանաչելու հնարավորությունը» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 55): Ո՞րն է մեր դերը ուրիշներին ճշմարտությունը «ճանաչելու» հնարավորություն տալու հարցում: Որտե՞ղ է սկսվում մեր պատասխանատվությունը, և որտե՞ղ է այն ավարտվում:

Չորեքշաբթի մարտի 4

Բարեկամը՝ որպես թշնամի

Եթե մենք մեր բարեկամներից ավելի շատ ենք հիասթափվում, քան մեր թշնամիներից, պատճառն այն է, որ բարեկամներից սովորաբար լավ բան ենք ակնկալում, իսկ թշնամիներից՝ վատ: Բայց մեր ակնկալիքները միշտ չէ, որ արդարացվում են, այնպես չէ՞: Ահա թե ինչու է Առակաց գիրքն զգուշացնում մեզ, որ երբեմն բարեկամն իրեն պահում է թշնամու նման, իսկ թշնամին՝ ինչպես ընկեր:

Կարդացե՛ք Առակաց 27.5,6-ը: Ե՞րբ կարող է հանդիմանությունը լինել սիրո վկայություն: _____

_____

_____

_____

Սերը չի ենթադրում միայն համբույրներ կամ քնքուշ խոսքեր: Սերը երբեմն մեզ պարտավորեցնում է հանդիմանել բարեկամին կամ երեխային, և այն պատրաստ է ենթարկվել չընդունվելու, դատապարտվելու և քննադատվելու վտանգին: Մենք կարող ենք ան-

գամ կորցնել մեր ընկերներին, եթե ասենք տհաճ ճշմարտությունը: Սակայն եթե մենք մեր բարեկամներին չենք նախազգուշացնում սխալ արարքներից, հատկապես՝ եթե այդ արարքները կարող են վնասել նրանց, ինչպիսի՞ բարեկամներ ենք մենք այդ դեպքում:

Բացահայտ հանդիմանությունը նույնպես այն բանի նշան է, որ մեր սերը ոչ թե կառուցվում է պատրանքների և հավակնությունների վրա, այլ հիմնված է ճշմարտության և վստահության վրա:

Կարդացե՛ք Առակաց 27.17: Ինչպիսի՞ն կարող է լինել բարեկամների հակամարտության արդյունքը: ____

_____

_____

_____

Երկաթ սրող երկաթի պատկերը փոխադարձ օգուտ է ենթադրում: Երբ բարեկամությունն ստուգվում է ճշմարիտ հանդիմանությամբ, դա ոչ միայն բարելավում է փոխհարաբերությունների որակը, այլ նաև խթանում և ամրապնդում է երկու բարեկամներին էլ: Երկուսի զենքն առավել արդյունավետ կդառնա: Մենք վերջին հաշվով ավելի պատրաստված կլինենք ապագա ճակատամարտերին: Այն մարդիկ, ովքեր ապաստան են գտնում միայն իրենց և սեփական մտքերի մեջ ու երբեք չեն բախվում այլ տեսակետների, չեն աճի գիտելիքով կամ բնավորությամբ:

Ձեզ երբևէ դիտողություն արե՞լ են՝ հետ կանգնեցնելով սխալ ուղղությամբ տանող ճանապարհից: Ի՞նչ կլիներ, եթե ամենքը լռեին: Ինչպե՞ս սովորել դիտողություններ անել որիշներին՝ չքննադատելով և չդատապարտելով նրանց:

Հինգշաբթի մարտի 5

Թշնամին՝ որպես բարեկամ

Կարդացե՛ք Առակաց 26.17-23-ը: Համառոտ հաղորդե՛ք ողջ ասվածը գրավոր ձևով: _____

_____

_____

_____

Եվ կրկին Առակաց գիրքը դիմում է խոսքի ուժի թեմային՝ այս անգամ ուշադրություն դարձնելով այն վնասին, որ պատճառում են բամբասանքն ու վեճերը: Նրանք, ովքեր ձեր ներկայությամբ չարա-

խոսում են ձեր թշնամուն, գործում են ինչպես «ածուխ» և «փայտ». նրանք սնուցում են վեճը և ձեզ տանում են է՛լ ավելի մեծ տհաճությունների կրակի մեջ (համար 21):

Ճիշտ նույն կերպ «սիրաբորբոք շրթունքները», որոնք այդքան պերճախոս կերպով են հնչում, կարող են թաքցնել «չար սիրտը» (համար 23): Այն քաղաքագետը, ով ցանկանում է, որպեսզի իր օգտին քվեարկեն, վաճառականը, ով ցանկանում է վաճառել իր ապրանքը, թեթևամիտը, ով ցանկանում է գայթակղել կնոջը՝ սրանք բոլորն օգտվում են պերճախոսության ուժից:

Այս հատվածը սովորեցնում է մեզ, որ մենք պետք է զգույշ լինենք և չհավատանք ամեն գեղեցիկ խոսքի, որ լսում ենք: Խոսքերը կարող են վտանգավոր լինել՝ հենց այն պատճառով, որ դրանք հաճելի են: Որոշ մարդիկ շատ լավ հռետորներ են, նրանք կարող են այնքան համոզիչ լինել, այնքան անկեղծ ու հոգատար տեսք ունենալ, այն ժամանակ, երբ նրանց ներսում ինչ-որ միանգամայն այլ բան է կատարվում: Թեև մենք բոլորս առիթ ունեցել ենք այդպիսի մարդկանց զոհ դառնալու, մեզանից ո՞վ գոնե մեկ անգամ մեղավոր չի եղել այն բանում, որ ճիշտ նույն կերպ է վարվել. մարդուն ասել է մի բան, բայց մտածել կամ զգացել է ինչ-որ բացարձակապես այլ բան: Այս գլխում Առակաց գիրքը վճռականորեն հանդես է գալիս նման խաբեության դեմ:

«Ամեն բան, ինչ անում է քրիստոնյան, պետք է լուսավոր ու պայծառ լինի, ինչպես արևի ճառագայթը: Ճշմարտությունը բխում է Աստծուց, իսկ սուտն իր ցանկացած ձևով ելնում է խաբեբայից: Սակայն հեշտ չէ միշտ ասել զուտ ճշմարտությունը, նաև անհնար է, եթե չգիտես այն: Որքա՜ն հաճախ են մեզ խանգարում նախապաշարմունքները, տեսակետների միակողմանիությունը կամ գիտելիքների պակասն ու տարբեր առարկաների մասին սխալ դատողությունները: Մենք միայն այն ժամանակ կկարողանանք ասել ճշմարտությունը, երբ մեր մտքերը միշտ կղեկավարի Նա, Ով Ինքն է բացարձակ ճշմարտությունը» (Է. Ուայթ, Արտացոլելով Քրիստոսին, 71):

Որքանո՞վ եք դուք բաց ու անկեղծ ամեն ինչում, ինչ ասում եք: Ձեր խոսքերը որքանո՞վ են տարբերվում ձեր մտքերից: Դուք իսկապե՞ս կարծում եք, որ նման երկերեսանիությունը կկարողանաք անվերջ ցուցադրել: (Տե՛ս Մատթեոս 10.26,27-ը):

Ուրբաթ **մարտի 6**

Հետագա ուսումնասիրության համար

«Սուրբ Հոգու բարեխոսությունը մեզ չի ազատում մեր ընդունակություններն ու տաղանդները դրսևորելու անհրաժեշտությունից, այլ սովորեցնում է, թե ինչպես բոլոր ուժերն օգտագործել Աստծո փառքի համար: Աստծո շնորհի ղեկավարության ներքո մարդկային ընդունակությունները կարող են օգտագործվել երկրի վրա լավագույն նպատակով: Իրեն Քրիստոսի հետևորդ անվանող մարդուն անգրագետ լինելը չի դարձնում առավել խոնարհ կամ առավել հոգևոր: Զարգացման բարձր ինտելեկտով մարդը կարող է լավագույնս գնահատել Աստծո խոսքի ճշմարտությունները: Քրիստոսին ամենից լավ կարող է փառաբանել նա, ով Նրան ծառայում է գործի էությունը հասկանալով: Դաստիարակության մեծագույն նպատակը մեզ սովորեցնելն է՝ օգտվել այն զորությունից, որ մեզ տալիս է Աստված, այնպես, որ ներկայացնենք աստվածաշնչյան կրոնը և նպաստենք Աստծո փառքին:

Մենք պարտք ենք Նրան, Ով կյանք է տվել մեզ, այն տաղանդների համար, որ վստահվել են մեզ, և Արարչի առջև մեր պարտքն է՝ զարգացնել ու կատարելագործել այդ տաղանդները (Է. Ուայթ, Խորհուրդներ ծնողներին, ուսուցիչներին և ուսանողներին, 361, 362):

Հարցեր քննարկման համար

1. Խորհեցե՛ք այն գաղտնիքների մասին, որ մենք գտնում ենք առօրյա կյանքում՝ լինի դա բնության մեջ, մարդկային փոխհարաբերություններում, թե հավատի, Աստծո էության և փրկության հարցերում: Կյանքի մեծագույն պարգևներից մեկն այն է, որ ինչքան շատ ենք իմանում, այնքան ավելի սուր կերպով ենք գիտակցում, թե որքան քիչ բան գիտենք մենք: Ինչո՞ւ է սա է՛լ ավելի ճիշտ, երբ բանը վերաբերում է հոգևոր ճշմարտություններին:
2. Թվարկե՛ք մի քանի «ճշմարտություն», որ իրականում հարաբերական են, մշակույթով պայմանավորված և փոփոխական: Դրանք ինչպե՞ս տարբերել հավիտենական, համընդհանուր և անփոփոխ ճշմարտություններից: Ինչո՞ւ է այդքան կարևոր դրանց միջև եղած տարբերություններն իմանալը: Ի՞նչ վտանգ է սպառնում մեզ, եթե մենք փոփոխական ճշմարտություններն ընդունում ենք որպես հավիտենական և ընդհակառակը:

3. Մի ասացվածք հռչակում է, որ խելացի մարդիկ իրենց բարեկամներին իրենց մոտ են պահում, իսկ թշնամիներին՝ է՛լ ավելի մոտ: Ի՞նչ է սա նշանակում: Ինչպե՞ս մենք՝ քրիստոնյաներս, պետք է վերաբերվենք այս պնդմանը: Մատթեոս 10.16 համարն ինչպե՞ս է օգնում պատասխանելու այս հարցին:

ԴԱՍ 11 ԿՅԱՆՔԸ ՀԱՎԱՏՈՎ

ՄԱՐՏԻ
7-13

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Առակաց 28.4,7,9, Հռոմեացիս 1.16,17, Գաղատացիս 3.24, Առակաց 28.5, Ա Հովհաննես 2.15-17, Առակաց 29.13:

Հիշելու համարը.
«Մարդու վախը որոգայթի մեջ կգցի, բայց Տիրոջն ապավինողը կապաստանվի» (Առակաց 29.25):

Բազում տարատեսակ ձայներ մեզ կանչում են տարբեր ուղղություններով: Ինչպե՞ս իմանալ, թե ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ: Պատասխանը կարելի է գտնել Աստծո և Նրա գրավոր հայտնության մեջ: Մենք պետք է սովորենք ապավինել Աստծուն և հնազանդվել Նրա օրենքին: Մնացած ամեն բան կգա ինքնին:

Հենց դա նկատի ուներ Հիսուսը, երբ ասաց. «Սակայն առաջ Աստծո արքայությունը և նրա արդարությունը փնտրեք, և այդ ամենը կտրվի ձեզ» (Մատթեոս 6.33): Մենք պետք է վստահությունն առ Աստված ու Նրան հետևելը դարձնենք մեր գլխավոր նախապատվությունը, հակառակ դեպքում մենք ինչ-որ ուրիշ բան կդարձնենք մեր նախապատվությունը, և դա կդառնա ամենահիսկական կռապաշտություն: Մենք միայն հավատի կյանքով ապրելով կարող ենք սովորել վստահել Աստծուն: Քրիստոնեական կյանքը հենց դա է՝ Աստծո հետ քայլելը: Մենք պետք է վճռենք անել այն, ինչ մեզ հրամայել է Տերը, իսկ հետևանքները վստահենք Նրան:

Հետևել օրենքին

Առակաց գրքում «թորա»՝ «օրենք» կամ «խրատ» բառը հանդիպում է 13 անգամ, ընդ որում՝ չորս անգամ Առակաց 28-ում (համար 4՝ երկու անգամ, 7, 9): Թեև այս գրքում տվյալ բառը սովորաբար օգտագործվում է իմաստունի «խրատին» նշանակությամբ (Առակաց 13.14), հրեական ավանդության մեջ այն հոգևոր ենթատեքստ ունի և վերաբերում է Աստծո հայտնությանը, ինչպես նշված է հենց Առակաց գրքում (Առակաց 29.18):

Կարդացե՛ք Առակաց 28.4,7 և 9-ը: Այս համարները ի՞նչ են ասում՝ մեր կյանքում օրենքի կարևորության մասին: _____

_____

_____

Այլ ժողովուրդներից հրեաները տարբերվում էին ոչ այնքան մտածելակերպով կամ անգամ իրենց «հոգևոր, և դժվարըմբռնելի աստվածաբանական տեսակետներով: Ամենից շատ նրանք տարբերվում էին իրենց յուրահատուկ ապրելակերպով, այն բանով, թե ինչ կոնկրետ որոշումներ էին նրանք ընդունում սննդի, հանգստի, շրջակա միջավայրի և հարևանների ու ազգականների հետ փոխհարաբերությունների հարցերում: Հենց դա էր նրանց «սուրբ» կամ մյուս բոլոր ժողովուրդներից «առանձին» դարձնում: Իդեալական դեպքում այդ որոշումները պետք է հիմնված լինեին օրենքի և դրանում ամփոփված սկզբունքների վրա:

Մենք, մարդ լինելով, չենք կարող ինքնին լինել իմաստուն. անգամ միշտ չէ, որ մենք ի վիճակի ենք բարին տարբերելու չարից (Գ Թագավորաց 3.9): Այդ պատճառով մեզ հարկավոր է Աստծո օրենքը, որն օգնում է ըմբռնում ձեռք բերելու: Այլ խոսքերով՝ իմաստություն ձեռք բերելը կախված չէ մտավոր կամ հոգևոր վարժանքներից. այն, ըստ էության, կապված է օրենքին հնազանդվելու հետ, որը գտնվում է մեզանից, մեր մշակույթից, մեր սեփական հոգեբանությունից և մեր ցանկություններից դուրս:

Այս օրենքն, անշուշտ, Աստծո հավիտենական օրենքն է: Եվ այս օրենքին հետևելը, իսկապես, հավատի գործողություն է: «Որովհետև ես Քրիստոսի ավետարանը ամոթ չեմ համարում. որովհետև Աստծո զորություն է՝ փրկելու համար ամեն հավատացողին, առաջ Հրեա-

յին և հետո՝ Հույնին: Որովհետև Աստծով արդարությունը նրանում հայտնվում է՝ հավատքից հավատքի մեջ. ինչպես գրված է, թե Արդարը հավատքից կապրի» (Հռոմեացիս 1.16,17):

Ի՞նչ աղետներից ու խնդիրներից եք դուք ազատվել այն բանի շնորհիվ, որ որոշում եք ընդունել հավատով պահել Աստծո օրենքը: Որքանո՞վ կտարբերվեր ձեր կյանքը, եթե դուք չպահեիք այն:

Երկուշաբթի մարտի 9

Որոնեցե՛ք Տիրոջը

Չնայած հավատով կյանքի համար օրենքի (թորայի) ողջ կարևորությանը՝ այն ինքնին կյանքի աղբյուր չէ: Ընդհակառակը, օրենքը մատնանշում է մեղքը, իսկ մեղքը հանգեցնում է մահվան (տե՛ս Հռոմեացիս 7.7-13): Իսկ թորան արդյունավետ է դառնում այն փաստից, որ նա բխում է Աստծուց: Առանց Աստծո թորան սոսկ իրավաբանական հրահանգների, կանոնների ժողովածու կլիներ, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն Նրա սկզբնական մտադրությունների հետ: Աստծո օրենքին հնազանդ կյանքը կյանք է Իր՝ Աստծո հետ: Թորան չի փոխարինում Աստծուն. այն պարզապես ուսուցիչ է, որը (համաձայն Պողոսի նմանաբանության) սովորողներին բերում է Ուսուցչի մոտ (Գաղատացիս 3.24):

Կարդացե՛ք Գաղատացիս 3.24-ը համատեքստի հետ մեկտեղ: Օրենքն ինչպե՞ս է մեզ մատնացույց անում Հիսուսին՝ թույլ տալով իրականում «արդարանալ հավատով»: _____

_____

_____

Առակաց գիրքը պարզապես իմաստության գիրք չէ. այն ամենից առաջ գիրք է Աստծո մասին, Ով մեզ *բացահայտել է* իմաստությունը: Երբ մենք իմաստություն ենք որոնում՝ հնազանդվելով օրենքին, դա մեզ բերում է Տիրոջը և բերում է փրկության, որ Նա անհատույց առաջարկում է մեզ՝ Հիսուսի հանդեպ հավատի միջոցով:

Կարդացե՛ք Առակաց 28.5-ը: Ի՞նչն է մեզ օգնում՝ ամեն բան հասկանալու: _____

_____

_____

«Կհասկանան» բառը երկու անգամ օգտագործված է 5-րդ համարում, այնպես, ինչպես «օրենք» բառը՝ 4-րդ համարում: Այս երկու համարները փոխկապակցված են. օրենքը պահելը (համար 4) և Տիրոջը որոնելը (համար 5) անբաժանելի հասկացություններ են: Սակայն այս գործունեությունը չի սահմանափակվում միայն նրանով, որ պարզապես իմանալն ու անելն այն է, ինչ ճիշտ է («իրավունք»՝ համար 5): Այս հասկացությունը վերաբերում է «ամեն բանին»՝ պարզապես այն պատճառով, որ բխում է «ամեն բանի» Աստծուց: Հին Իսրայելի համար գիտությունը սերտորեն կապված էր կրոնական փորձառության, իսկ հավատը՝ ինտելեկտի և տրամաբանական մտածողության հետ: Աներևակայելի էր հավատ ունենալն առանց մտածողության կամ էլ խորհելն առանց հավատի, որովհետև Աստված և՛ մեկ, և՛ մյուս ոլորտի հիմքն է:

Ինչո՞ւ է Աստծուն հավատալը նպատակահարմար: Ինչո՞ւ է Աստծուն մերժելը պակաս տրամաբանական և ռացիոնալ, քան Նրան հավատալը:

Երեքշաբթի **մարտի 10**

Դիմում հարուստներին

Կարդացե՛ք Ա Հովհաննես 2.15-17-ը: Մեզ այստեղ ինչի՞ մասին են նախազգուշացնում, և ինչպե՞ս մենք կարող ենք մեզ պաշտպանել այն վտանգից, որի մասին խոսում են տեքստերը: _____

_____

_____

_____

Թեև մարդիկ տարբեր պատկերացում ունեն այն մասին, թե ինչ է նշանակում «հարուստ» լինելը, Առակաց գիրքը որոշ ցուցումներ է բովանդակում այն մասին, թե ինչպես դառնալ «հարուստ, իսկ հետո ինչ անել սեփական «հարստության» հետ՝ այն բանից հետո, երբ դուք այն ձեռք եք բերել:

1. Մի՛ հարստացեք աղքատների հաշվին (Առակաց 28.8): Ձեր հարստությունը անարդար է համարվում, եթե դուք այն ստացել եք աղքատների հաշվին: Ինչպես մենք արդեն տեսանք, Աստվածաշունչը վճռականորեն հանդես է գալիս նրանց դեմ, ովքեր աղքատներին օգտագործում են շահադիտական նպատակներով:

2. Տվե՛ք չքավորներին (Առակաց 28.27): Առակաց գիրքը ցույց է տալիս, որ, ի տարբերություն ժլատների, այն մարդը, ով առատաձեռն է աղքատների հանդեպ, կօրհնվի:

3. Աշխատե՛ք (Առակաց 28.19): Հարստությունը չպետք է գա գողության արդյունքում կամ պատահաբար, այլ որպես պարգև համառ աշխատանքի դիմաց: Այն, ինչ մենք ստանում ենք, կախված է մեր աշխատանքի որակից: Եթե մենք հարուստ ենք, պետք է արժանի լինենք դրան:

4. Մի՛ փորձեք արագ հարստանալ (Առակաց 28.20,22): Առակաց գիրքը նախազգուշացնում է երկու հնարավոր սցենարների մասին.

ա) երբ մենք մեր աչքերը փակում ենք որոշ անարդար գործողությունների հանդեպ և արդյունքում դառնում ենք այդ գործողությունների մասնակիցը (Առակաց 28.22),

բ) երբ մենք այնպես ենք ջանում օգտագործել մեր ծնողների ունեցվածքը, որ նրանց զրկում ենք կյանքի համար անհրաժեշտ պարագաներից:

Ամենից վատն այն է, որ նրանք, ովքեր այդպես են վարվում, կարող են այնքան ժամանակ արդարացնել իրենց վարքը, մինչև որ վերջնականապես համոզեն իրենց, որ իրենք ոչ մի վատ բան չեն արել: Նրանք ասում են, թե իբրև «դա մեղք չէ»:

Փողը հզոր շարժիչ ուժ է, և հենց այդ պատճառով Աստվածաշունչը շատ է խոսում դրա մասին: Եթե դուք փող եք ցանկանում (ինչպես և բազում այլ մարդիկ), ինչպե՞ս կարող եք վստահ լինել, որ չեք ընկնի այն ծուղակը, ինչ Հիսուսն անվանել է «հարստության խաբեություն» (Մարկոս 4.19):

Չորեքշաբթի մարտի 11

Ձեռնարկ աղքատների համար

Կարդացե՛ք Առակաց 29.13-ը: Ի՞նչ թեմա է քննարկվում այստեղ: _____

_____

_____

Աղքատներն ու հարուստները հավասար են (Առակաց 29.13): Լույսի պատկերը, որ օգտագործվում է այս առակում, սույն հարցը ներկայացնում է արարման համատեքստում: Ե՛վ հարուստները, և՛

աղքատներն արարվել են Աստծո կողմից (Առակաց 22.2): Ե՛վ սրանք, և՛ նրանք վայելում են կյանքի պարգևը, և արեգակը լուսավորում է սրանց և նրանց: Ինչպես հարուստներն են նախազգուշացում ստացել այն մասին, թե ինչպես պետք է վարվեն աղքատների հետ, այնպես էլ աղքատները պետք է սիրեն անգամ իրենց հալածողներին, ովքեր կարող են որոշ դեպքերում հարուստ լինել (Մատթեոս 5.44,45):

Ի՞նչ լուր է հայտնում Առակաց 28.3-ը: _____

_____

_____

_____

Աղքատներն ունեն այն նույն պարտականությունները, ինչ և հարուստները (Առակաց 28.3): Աղքատությունը չպետք է ծառայի որպես անօրենության արդարացում: Այն փաստը, որ, հնարավոր է, ճնշել են ձեզ, իրավունք չի տալիս՝ ճնշելու ուրիշներին: Հիսուսի առակը ծառայի մասին, ով հալածում է նրան, ով իրենից ավելի աղքատ է, ցույց է տալիս, որ այդպիսի արձագանքը, թեև անսպասելի է աղքատի կողմից (ումից կարելի էր առավել բարեհաճ վերաբերմունք ակնկալել այլ աղքատների հանդեպ), ինչ-որ արտասովոր բան չէ (Մատթեոս 18.22-35): Առակաց 28.3-ում օգտագործվում է անձրևի պատկերը, որը, որպես կանոն, օրհնություն է, բայց այստեղ կործանարար հեղեղ է. այս փոխաբերությունը ներկայացնում է այդպիսի վարքի ոչ նորմալ լինելը և այն հիասթափությունը, որ նա բերում է:

Ինչի՞ մասին է հաղորդում Առակաց 28.6-ը: _____

_____

_____

_____

Արդար աղքատն ավելի լավ է, քան ամբարիշտ հարուստը (Առակաց 28.6): Ըստ հարցի ավանդական ըմբռնման՝ արդար մարդը չպետք է աղքատ լինի, որովհետև ընդունված է համարել, որ աղքատությունը պարզապես արդար պատիժ է ծույլերի համար (Առակաց 24.34): Սակայն գործնականում կյանքն առավել բարդ է, քան տեսականորեն: Աղքատները կարող են անարդարության կամ իրենց ոչ ենթակա հանգամանքների զոհը լինել: Այդպիսի բան հաճախ է պատահում: Սակայն արժեքների սանդղակը, որ պաշտպանում է Առակաց գիրքը, հստակ է և միանշանակ: Արդարությունն ավելի կարևոր է, քան հրաստությունը, իսկ հաջողությունը արդարության հուսալի չափորոշիչ չէ:

Մենք ի՞նչ կարող ենք անել՝ բախվելով արժեքների հետ փոխզիջման գնալու գայթակղությանը՝ հանուն սեփական նյութական շահի: Մենք ինչպե՞ս կարող ենք պաշտպանվել, որպեսզի ոչ մի նման բան չանենք (ինչն ավելի հեշտ է անել, քան մենք կարծում ենք):

Հինգշաբթի մարտի 12

Սիրել ճշմարտությունը

Այն բոլոր ճշմարտություններից, որ մենք կկարողանայինք սովորեցնել մեր երեխաներին, աշակերտներին կամ բոլոր նրանց, ովքեր կցանկանային սովորել մեզանից, թերևս, ամենակարևորը նշված է Պողոսի մոտ, ով կործանվածների մասին գրում է, որ նրանք «ճշմարտության սերը չընդունեցին, որ ապրեն» (Բ Թեսաղոնիկեցիս 2.10): Իհարկե՛, քանի որ Հիսուսը Ճշմարտությունն է, ուրիշներին սովորեցնել, որ սիրեն ճշմարտությունը, նշանակում է նրանց սովորեցնել սիրել Հիսուսին, և դրանից առավել կարևոր ոչինչ չկա:

«Գիտելիքի ո՛ր բնագավառի մեջ էլ մենք ընկղմվենք՝ ճշմարտությանը հասնելու անկեղծ ցանկությամբ, մենք կհայտնաբարենք մի անտեսանելի ու մեծազոր Միտք, որ առկա է ամեն ինչում և ամենուր: Մարդու բանականությունը շփվում է Աստծո Մտքի հետ, սահմանափակը՝ Անսահմանի հետ: Անհնար է լիակատար չափով գնահատել մարմնի, մտքի և հոգու վրա այդպիսի շփման ազնվացնող գործողությունը» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 14):

Կարդացե՛ք Առակաց 29.15-ը (տե՛ս նաև Առակաց 29.19-ը): Այստեղ ի՞նչ կարևոր սկզբունք է ներկայացված ոչ միայն դաստիարակության, այլև առհասարակ կյանքի համար: _____

_____

_____

_____

Թեև մեր օրինակը կարևոր է, հատկապես նրանց համար, ում մենք չենք կարող հանդիմանել կամ պատժել, որոշ դեպքերում ինչ-որ ավելի մեծ բան է անհրաժեշտ: Դա հատկապես ճիշտ է մեր երեխաների համար: Երբեմն երեխաներին ուղղելու համար հարկավոր է պատժել:

Մենք մեր էությամբ մեղսավոր ու այլանդակ ենք՝ նույնիսկ այն ամենաքնքուշ էակները, ում մենք սիրում ենք՝ մեր երեխաները: Մենք

բարի ծառայություն չենք մատուցում ո՛չ մեզ, ո՛չ էլ մեր երեխաներին՝ նրանց թույլ տալով անել այն ամենը, ինչ իրենց ցանկանում են: Իրականում երեխաները ոչ միայն կարգապահության կարիք ունեն, նրանք *ցանկանում են* դա: Նրանք պետք է իմանան, որ գոյություն ունեն սահմանափակումներ, և որ իրենք պետք է իրենց չափերը չանցնեն: Այն մայրը, ով համարում է, թե պետք է հարգի իր երեխայի ազատությունը, նրան թույլ է տալիս անել ամեն բան, ինչ նա ցանկանում է՝ ոչ մի բանում չսահմանափակելով նրան, վերջիվերջո «անարգանք» կհնձի (Առակաց 29.15), իսկ նրա զավակները՝ տրտմություն, եթե ոչ հիմա, ապա այն ժամանակ, երբ մեծանան:

Դուք ի՞նչ դասեր եք յուրացրել մանուկ հասակում, որոնք ձեզ օգուտ են բերում նաև հասուն տարիքում: Այդ գիտելիքն ինչպե՞ս է օգնել՝ առավել լավը դարձնելու ձեր կյանքը:

Ուրբաթ մարտի 13

Հետագա ուսումնասիրության համար

«Աստծո օրենքները հիմնված են ամենաանսպառ բարոյական սկզբունքների վրա և ձևակերպված են այնպես, որ նպաստեն դրանց հետևողների երջանկությանը: Կրոնը մարդուն բերում է Աստծո հետ անձնական փոխհարաբերությունների, բայց ոչ միայն, որովհետև հարկավոր է ապրել երկնային սկզբունքների համաձայն, որպեսզի նրանք կարողանան օգնել և օրհնություն բերել մարդկանց» (Է. Ուայթ, Աստծո որդիներն ու դուստրերը, 267):

«Աստծո զավակների դաստիարակության լիակատար անտեսումը հավերժացնում է չարիքը և թշնամական շարքերն է նետում շատ տղաների և աղջիկների, ովքեր ծնողների խելամիտ խնամակալության ներքո կկարողանային Քրիստոսի գործակիցները դառնալ: Կեղծ պատկերացումներն ու անխելամիտ, սխալ ուղղորդված սերը երեխաների մեջ զարգացնում են բացասական գծեր, որոնք նրանց դարձնում են անհիրապույր և դժբախտ, ծնողների կյանքը բարդացնող. այդ կործանարար ազդեցությունն ամրապնդվում է տարեցտարի: Ցանկացած երեխա, ում թույլ են տալիս ամեն բան անել իր ուզածով, կանպատվի Աստծուն և կխայտառակի իր հորն ու մորը: Անտեսելով իրենց պարտքն ու երեխաներին թույլ տալով շարունակել սխալվել՝ ծնողները նրանց համար փակում են Աստծո քաղաքի դարպասները» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 5, 325, 326):

Հարցեր քննարկման համար

1. Ռուս գրող Լև Տոլստոյը, թեև մեծացել է քրիստոնյա ընտանիքում, երկար տարիներ հրաժարվել էր իր հավատից: Հասուն տարիքում նա ձգնաժամ ապրեց. ո՞րն է կյանքի իմաստը, եթե այն, միևնույնն է, ավարտվում է մահվամբ: Թեև նա պատասխաններ էր որոնում գիտելիքի բոլոր ոլորտներում, նա դրանք այնտեղ չգտավ: Ի վերջո նա հասկացավ, որ կյանքի և դրա իմաստի մասին հարցի պատասխանը հարկավոր է փնտրել հավատի՝ այն բանի մեջ, ինչը դուրս է գալիս բուն տրամաբանության շրջանակներից: Այսինքն՝ տրամաբանությունը հուշեց նրան, որ պատասխանն ընկած է ինչ-որ տեղ՝ տրամաբանության սահմաններից դուրս՝ հավատի աշխարհում: Ինչո՞ւ Հիսուսի հանդեպ հավատը առավել տրամաբանական ընտրությունն է, որ մենք կարող ենք անել՝ որոնելով կյանքի իմաստն ու նպատակը:
2. Ձեր կարծիքով՝ ի՞նչ է նշանակում սիրել ճշմարտությունը: Մենք ինչպե՞ս ենք սիրում ճշմարտությունը: Ճշմարտությունը սիրելու համար նախ հարկավոր է իմանալ այն: Մենք ինչպե՞ս ենք գալիս ճշմարտության ըմբռնմանը: Եվ մենք ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ ոչ մի բանի թույլ չենք տալիս կանգնել ճշմարտության հանդեպ սիրո մեր ճանապարհին:

ԴԱՍ 12

ՄԱՐՏԻ 14-20

ԻՄԱՍՏՈՒՆԻ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Առակաց 30, Ղուկաս 18.9-14, Հոբ 38-40.2, Ա Հովհաննես 1.9, Հայտնություն 3.14-18, Սաղմոս 104.24:

Հիշելու համարը.
«Երանելի են հոգով աղքատները, որովհետև նրանցն է երկնքի թագավորությունը» (Մատթեոս 5.3):

Աստվածաշունչը խոնարհությունը համարում է ամենակարևոր առաքինությունը: Մարգարեներից մեծագույնը՝ Մովսեսը, անվանված է ամենախոնարհ մարդը, որ երբևէ ապրել է երկրի վրա (Թվոց 12.3): Համաձայն Միքիա 6.8-ի՝ մարդկանց հիմնական պարտականությունն է՝ «խոնարհությամբ վարվել քո Աստծո հետ»: Հիսուսը նաև պնդում է, որ խոնարհությունն իդեալ է, որին պետք է ձգտեն քրիստոնյաները. «Արդ ով որ իր անձը այս երեխայի նման խոնարհեցնի, նա է մեծ երկնքի արքայությունում» (Մատթեոս 18.4):

Վերջին հաշվով, մարդիկ ինչո՞վ կարող են պարծենալ: Յուրաքանչյուր շունչ, սրտի յուրաքանչյուր զարկ, յուրաքանչյուր պարգև, յուրաքանչյուր տաղանդ մենք ստանում ենք միայն Աստծուց, Ումով «մենք ապրում ենք, շարժվում ու կանք» (Գործք առաքելոց, 17.28): Եվ խաչի լույսի ներքո անգամ մեր ողջ արդարությունը «դաշտանի շորի պես է» (Եսայիա 64.6): Այդ դեպքում մենք ինչո՞վ կարող ենք պարծենալ:

Այս դասում Առակաց գիրքը քննարկում է խոնարհությունը: Հաշվի առնելով մեր հանգամանքները՝ որքանո՞վ է հիմար բան հեզ ու խոնարհ չլինելը:

Պարծենալը

Կարդացե՛ք Առակաց 30.1-3,32,33-ը: Ինչի՞ մասին են խոսում այս բոլոր համարները: _____

_____

_____

Այս համարներում նման ինքնանվաստացմանն անցումը միանգամայն անսպասելի է, եթե հաշվի առնենք հին Մերձավոր Արևելքի թագավորների՝ հատուկ մեծարվելու, սեփական իմաստությամբ, ձեռքբերումներով և ռազմական հաղթանակներով պարծենալու ձգտումը: Սողոմոնն ինքնը պատկերված է որպես մարդ, ով երկրի բոլոր թագավորներին գերազանցում էր հարստությամբ և իմաստությամբ (Ա Թագավորաց 10.23, Ժողովող 2.9): Նրանից հետ չի մնում նաև Նաբուգոդոնոսորը, ով հռչակեց. «Ահա՛ այն մեծ Բաբելոնը, որ ես թագավորության տուն եմ շինել իմ մեծ զորությամբ և իմ մեծության փառքի համար» (Դանիել 4.30):

Քանի որ մեր հեղինակն ընդունում է սեփական անմտությունը, նա պարծենկոտությունն անվանում է «հիմարություն»: «Հիմար» եբրայերեն՝ *«նաբալ»* բառը այն նույն բառն է, որից ծագում է Նաբաղ անունը՝ այն մարդու անունը, ում վարքը հիմարության օրինակ է (Ա Թագավորաց 25): Այդպիսի պարծենկոտությունը, որ ենթադրում է հպարտություն, նույնպես նվաստացման, հետևաբար նաև ցասման ու թշնամանքի հնարավորություն է կրում: Պողոս առաքյալը իր եկեղեցու որոշ անդամների նաև անվանում է «անմիտ», թեև նրանք իրենց համարում էին իմաստուն և, որ ավելի վատ է, պարծենում էին դրանով (Բ Կորնթացիս 11.18,19):

Կարդացե՛ք Ղուկաս 18.9-14-ը: Ծատերը, իրենք էլ չկասկածելով, վարվում են փարիսեցիների նման: Մենք ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ չենք ընկնի այդ նույն ծուղակը: _____

_____

_____

_____

Պարծենկոտներին կարելի է լոկ խղճալ, որովհետև, որպես կանոն, նրանք պարծենկոտությամբ սքողում են սեփական անվստահությունն ու անմտությունը, բացի դրանից՝ նրանք խաբում են իրենք իրենց:

Երկուշաբթի **մարտի 16**

Ո՞վ է ճանաչում Աստծուն

Հպարտությունն ի հայտ է գալիս նրանց մեջ, ովքեր անձամբ չեն ճանաչում Տիրոջը: Ընդհակառակը, այն մարդն, ով ապրում է Աստծո հետ հաղորդակցության մեջ, համեստ կլինի, որովհետև նա մշտապես շփման մեջ է Նրա հետ, Ով անսահման ավել մեծ է մեզանից յուրաքանչյուրից: Երբ մենք պատկերացնում ենք տիեզերքի չափերն ու գիտակցում, որ երկրպագում ենք Նրան, Ով արարել է այդ տիեզերքը, երբ մենք մտորում ենք Աստծո մասին, ով ի դեմս Հիսուսի՝ տառապեց խաչի վրա՝ հանուն մեզ, ինչպե՞ս կարելի է հպարտ մնալ:

Կարդացե՛ք Առակաց 30.3-6-ը: Այս համարները ի՞նչ են ասում մեզ Աստծո զորության, մեծության և խորհրդավորության մասին: _____

_____

_____

«Ամենասուրբի գիտությունը» հարկավոր է հասկանալ «գիտություն Աստծո մասին»: Հետո հաջորդում են մի շարք հռետորական հարցեր, որոնք ստիպում են մեզ՝ ընդունել, թե Աստծո մասին որքան շատ բան մենք չգիտենք իսկապես:

Այս հարցերը կարդացե՛ք Առակաց 30.4-ում: Դրանք ի՞նչ խնդիր են դնում մեր առջև: _____

_____

_____

Քանի որ Աստված Արարիչ է (առաջին չորս հարցերը), Նա դուրս է մնում մեր ըմբռնման սահմաններից (վերջին հարցերը): Հոբի գրքում Աստված նահապետին մտահոգում է նմանատիպ հարցերով, այնպես, որ Հոբը հասկանում է, որ չի կարող հասկանալ Աստծուն կամ Նրա ճանապարհը (Հոբ 38-40.2):

Այն փաստը, որ Աստված Արարիչ է, և որ մենք չենք կարող լիովին հասկանալ Նրան, մեզ կարևոր դաս է տալիս այն մասին, թե ինչպես պետք է մենք վերաբերվենք Նրա գրավոր հայտնությանը, որ գիտնականները միշտ կասկածի են ենթարկում: Ովքե՞ր ենք մենք, ում համար բնության ամենահասարակ բաների ըմբռնումն անգամ մշուշված է և լի սպիտակ բծերով, որ վիճարկենք Աստծո Խոսքը, անգամ դրա այն մասերը, որ մեզ փակուղի են մտցնում կամ դուր չեն գալիս:

Խորհեցե՛ք բուն արարման մեծության և խորհուրդի մասին: Ի՞նչ պետք է ասի սա մեզ Արարչի մեծության և խորհրդավորության մասին: Այդ մեծությունն ու խորհրդավորությունն ինչո՞ւ պետք է մխիթարություն և հույս բերեն մեզ:

Երեքշաբթի մարտի 17

Ոչ չափազանց շատ և ոչ չափազանց քիչ

Այս հատվածը (Առակաց 30.7-9) բովանդակում է Առակաց գրքի միակ աղոթքը: Պատահական չէ, որ այդ աղերսը հաջորդում է անմիջապես այն պնդմանը, որ Աստված մեծ Արարիչ է (Առակաց 30.4), և Նրա հավատարմության խոստմանը (Առակաց 30.5):

Կարդացե՛ք Առակաց 30.7-9-ը: Ինչո՞ւ է հեղինակն Աստծուն խնդրում այդ մասին: _____

_____

_____

Նախքան Աստծուց ինչ-որ բան խնդրելը կարևոր է համոզվել, որ Նրա հետ մեր փոխհարաբերություններն ամուր են: Եթե մենք խաբում ենք, ապա մենք գործում ենք այնպես, ասես ամենագետ Աստված գոյություն չունի: Հենց այդ պատճառով է մեր մեղքի խոստովանությունն անհրաժեշտ պայման ներման համար (Ա Հովհաննես 1.9): Մենք չենք կարող խաբել Աստծուն. Նա մեզ տեսնում է հենց այնպիսին, ինչպիսին մենք կանք: Երբ մենք աղոթում ենք գետնատարած, ինչպես մեռելները հողում (Ողբ Երեմիայի 3.29), դա ցույց է տալիս ոչ միայն մեր հարգանքն ու խոնարհությունը, այլ նաև Նրա առջև մեր հոգևոր մերկության գիտակցումը:

Առակաց 30.8-ում հեղինակն Աստծուն խնդրում է իրեն չտալ ո՛չ չքավորություն, ո՛չ հարստություն: Առաջին անգամ տալ բայն Աստվածաշնչում օգտագործվում է մարդկանց վերաբերյալ և նշանակում է սննդի պարգևը Աստծո կողմից (Ծննդոց 1.29): Հենց այդ պատճառով շատ մշակույթներում սնունդն ավանդաբար կապակցվում է աղոթքի հետ: Սա հիմնարար պահանջմունք է, որն ստիպում է մեզ՝ խորապես ապավինել Արարիչ Աստծուն, աղոթքը դնում է մեր ապրուստի հիմքում:

Այս երկու խնդրանքների նպատակն է՝ ոչ այնքան հավասարակշռել մարդու բնավորությունը, որքան փառք տալ Աստծուն: Եթե մարդը չափազանց քիչ է ստանում, նա կարող է սկսել գողանալ և

դրանով իսկ կանպատվի Աստծուն, եթե մարդը չափազանց շատ է ստանում, նա Աստծո կարիքը չի զգում և, հնարավոր է, անգամ հերքում է Նրա գոյությունը: Հարկավոր է, սակայն, նշել, որ միայն վերջին դժվարությունը կարող է հանգեցնել Աստծուց բաժանման, առաջինը, ամենայն հավանականությամբ, մեզ Նրա հետ հաղորդակցության մեջ կպահի:

Տերունական աղոթքն արտացոլում է այդ նույն երկու պահերը.

ա) «Մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր» (Մատթեոս 6.11) ՝ նախատեսում է մեր պահանջմունքների բավարարումը և ոչ ավելին,

բ) «Մի՛ տար մեզ ի փորձություն» (Մատթեոս 6.13)՝ հոգում է մեր կարիքները:

Մտորե՛ք Աստծուց ձեր կախվածության մասին: Եթե դուք մշտապես հիշեք այս խիստ ճշմարտությունը, դա ինչպե՞ս կօգնի ձեզ՝ աճելու հավատի մեջ: Ի՞նչ վտանգներ են մեզ սպառնում, եթե մենք մոռանում ենք այս կախվածության մասին:

Չորեքշաբթի մարտի 18

Մեծամիտների գործողությունները

Որքան խոնարհությունը դրական հատկանիշ է և օրհնություններ է բերում, այնքան խոնարհության անբավարարությունը վտանգավոր է և իր հետևից անեծք է բերում: Խոնարհության արժանիքները դրա պարգևների ու պտուղների նկարագրության միջոցով խոստովանելուց հետո Առակաց 30-ը խիստ նախազգուշացումներ է տալիս այն վտանգների մասին, որոնք ծագում են հպարտությունից:

Անիծում է իր ծնողներին (Առակաց 30.11,17): Ագուրն սկսում է այս թեմայից, որովհետև այն մեծամտության աղաղակող օրինակ է, երբ զավակներն արհամարհում են նրանց, ովքեր իրենց կյանք են տվել: Հատկանշանական է, որ ծնողներին պատվելն ու օրհնելը կյանքի խոստում բովանդակող միակ պատվիրանն է (Ելից 20.12, Եփեսացիս 6.2,3), այն դեպքում, երբ դրա խախտումը պատժվում է մահվամբ (Ելից 21.15,17):

Ինքնաարդարացումը (Առակաց 30.12,20): Երբ մեղավորներն իրենց արդար են համարում, դա վատ է, որովհետև նրանք կմնան իրենց մեղքի մեջ՝ համարելով, որ մաքուր են և ներման կարիք չունեն: Ահա թե ինչու մեղքի խոստովանությունն այդքան հիմնարար

նշանակություն ունի ներում ստանալու համար (Ա Հովհաննես 1.9): Լաոդիկեի եկեղեցու անդամներին, ովքեր պնդում են, որ իրենք հարուստ են, խելացի և լավ հագնված (թեև չգիտեն, որ աղքատ են, կույր և մերկ), Աստվածաշունչը խորհուրդ է տալիս Աստծուց մի միջոց ձեռք բերեն, որպեսզի ուղղեն իրենց խղճուկ վիճակը (Հայտնություն 3.14-18):

«Խոսքն այն մարդկանց մասին է, ովքեր հպարտանում են հոգևոր գիտելիքներով և առավելություններով: Բայց նրանք չեն արձագանքել չարժանացած օրհնություններին, որոնցով Աստված օժտել էր իրենց: Նրանք ընդդիմանում էին Նրան, անշնորհակալ էին Նրա հանդեպ, մոռանում էին Նրան, սակայն Նա առաջվա նման նրանց հետ վարվում էր այնպես, ինչպես սիրող, ներող հայրն է վարվում իր երախտամոռ, ինքնահավան զավակի հետ: Նրանք ընդդիմանում էին Նրա օրհնությանը, չարաշահում էին առավելությունները, անտեսում էին Նրա պարգևած հնարավորությունները և ընկղմվում էին ինքնագոհության, ցավալի ապերախտության, ունայն ձևապաշտության և կեղծավորության մեջ» (Է. Ուայթ, Հավատը և գործերը, 83):

Արհամարհանք (Առակաց 30.13,14): Ինքնահավանների ներկայացված նկարագրությունը չափազանց անհրապույր է: Նրանք հպարտ հայացք ունեն, սակայն հպարտությունն արտահայտվում է ոչ միայն հայացքում. այն դրսևորվում է հարգանքի բացակայության մեջ, որով նրանք վերաբերվում են նրանց, ովքեր, իրենց կարծիքով, իրենցից ավելի ցածր են: «Դանակների» և «ատամների» պատկերները ցույց են տալիս, թե որքան վատն են նրանց արարքները:

Մտորե՛ք այն մասին, թե ինչպես եք դուք վերաբերվում ուրիշներին, հատկապես այն մարդկանց, ում համեմատությամբ դուք զգում եք սեփական գերազանցությունը (մեզանից շատերը ժամանակ առ ժամանակ այդպես են զգում իրենց, այնպես չէ՞): Դուք ինչպե՞ս կարող եք ուղղվել: Դուք ինչպե՞ս կարող եք դրսևորել անհրաժեշտ *խոնարհություն*՝ ուղղվելու համար:

Հինգշաբթի մարտի 19

Դաս բնությունից

Աստվածաշունչը հաճախ օրինակներ է օգտագործում բնությունից՝ պատկերելու համար հոգևոր ճշմարտությունները: Առակները մեզ

խոնարհության մասին դասեր են տալիս՝ նույնպես օրինակներ օգտագործելով բնությունից:

Կարդացե՛ք Առակաց 30.18,19-ը: Այստեղ ի՞նչ է ասված մարդկային ըմբռնման սահմանների մասին: ___

_____

_____

Ագուրը խորհուրդ է տեսնում անգամ «սովորական» բաների մեջ: Նա այստեղ գաղտնիքների շատ հրապուրիչ համադրություն է ներկայացնում: Առաջին երկուսը կենդանիների աշխարհից են. արծիվը սավառնում է երկնքում, օձն անձայն տեղաշարժվում է երկրի վրա: Հետո նա անցնում է երկու գործողությունների՝ մարդկանց աշխարհից. նավը ծովում և տղամարդն ու կինը: Անգամ այսօր, գիտական գիտելիքների ողջ առատության հետ մեկտեղ, դեռ այնքա՜ն գաղտնիքներ են մնում: Որքա՜ն կարևոր է, որ մենք երբեք չկորցնենք երախտագիտությունը կյանքի խորության և մեծության համար: Այդպիսի վերաբերմունքն, անկասկած, կօգնի մեզ՝ խոնարհված մնալու Աստծո առջև:

Կարդացե՛ք Առակաց 30.24-28-ը: Բնության էլ ո՞ր առեղծվածներն են գրավել հեղինակի ուշադրությունը և երկյուղածություն առաջացրել նրա մեջ: _____

_____

_____

_____

Հետաքրքիր է, որ նախորդ համարները (Առակաց 30.20-23) պատմում են մարդկային անմտության, մեծամտության և անբարոյականության մասին: Հետո հեղինակն իր ուշադրությունը փոխադրում է կենդանական աշխարհին և ցույց է տալիս փոքրիկ և համեստ արարածներին, թեև նրանց մասին խոսելիս նա օգտագործում է եբրայերեն նույն «իմաստուն» բառը, որ օգտագործվում է մարդկանց (Առակաց 3.13) և անգամ Իր՝ Աստծո վերաբերյալ (Հոբ 12.13, Սաղմոս 104.24): Անգամ այսօր, հաշվի առնելով գիտության բնագավառի բոլոր մարդկային ձեռքբերումները, մենք չենք կարող մինչև վերջ հասկանալ, թե ինչպես են այդ արարածներն անում այն, ինչ անում են: Ուրեմն այդ գործողությունները որքան պետք է մտահոգած լինեն հին աշխարհի այդ իմաստուն մարդուն: Իսկ նա իսկապես իմաստուն էր, որովհետև իմաստության հիմնական հատկանիշներից մեկը այն փաստն ընդունելն է, որ մենք քիչ բան գիտենք անգամ ամենատարածված բաների մասին:

Խորհե՛ք մի քանի «պարզագույն» բաների մասին բնության մեջ. ծառի տերևը, ջրի կաթիլը, ծովային խեցին: Ինչպե՞ս է մեզ օգնում խոնարհ մնալ այն փաստը, որ անգամ այդ բաները լի են առեղծվածներով:

Ուրբաթ մարտի 20

Հետագա ուսումնասիրության համար

«Աստվածաշնչի հանդեպ նույնպես անհրաժեշտ է հարգանք և երկյուղածություն տածել, երբեք չօգտագործել այն որպես սովորական գիրք, կամ էլ օգտագործել անփութորեն՝ ցանկանալով սրամիտ արտահայտվել: «Աստծո ամեն խոսքերը մաքրված են» ինչպես «արծաթ, որ բովի մեջ երկրի վրա սրբված և յոթ անգամ պարզված է» (Առակաց 30.5, Սաղմոս 12.6)» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 244):

«Այնտեղ՝ սարի վրա, ժողովրդին ուղղված Քրիստոսի առաջին խոսքերը խոսքեր էին երանությունների մասին: Երանելի են նրանք, ասաց Նա, ովքեր ընդունում են իրենց հոգևոր աղքատությունը և փրկագնման կարիք են զգում: Այն բացահայտվում է ոչ թե հոգով հպարտներին, ոչ թե նրանց, ովքեր իրենց համարում են հարուստ, ոչնչի կարիք չունեցող, այլ խոնարհներին և ապաշխարողներին: Տերը չի կարող ապաքինել մարդուն այնքան ժամանակ, քանի դեռ նա չի համոզվել իր թուլության մեջ, չի ազատագրվել ամեն ինքնագոհությունից և իրեն չի հանձնել աստվածային առաջնորդությանը: Միայն այդ ժամանակ նա կարող է ընդունել այն պարգևը, որ Տերը ցանկանում է տալ իրեն: Սեփական կարիքը գիտակցող հոգուն ոչինչ չի մերժվի: Այդպիսի մարդը անարգել մուտք կստանա Նրա մոտ, Ում մեջ կենում է ողջ լիությունը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 299, 300):

Հարցեր քննարկման համար

1. Խորհե՛ք փրկության ծրագրի և այն մասին, ինչ պահանջվել է մեր փրկության համար: Մենք այնքան մեղավոր, այլասերված, ամբարիշտ, փչացած ենք, որ պարզ նորոգումը բավական չէր լինի՝ մեզ մեղքից ազատելու համար: Մեր ոչ մի վերածնունդ և վերականգնում չի կարող փրկել մեզ: Մենք քավչարար զոհի կարիք ունենք, նրա, որ օրինական հիմունքներով կզբաղեցներ մեր տեղը, և միայն ում արդարությունը բավարար կլիներ՝ մեզ Աստծո հետ հաշտեցնելու համար: Այս ճշմարտությունն ի՞նչ պետք է ասի մեզ,

թե ինչու են մեծամտությունն ու հպարտությունն ամենասոսկալի մեղքերը, որ միայն կարող են ունենալ այնպիսի ընկած էակներ, ինչպիսին մենք ենք:

2. Ինչո՞վ ենք մենք, մեր բուն էությունը կախված Աստծուց: Բնության մեջ ի՞նչն է ցույց տալիս մեզ, թե ինչպես է Աստված պահպանում մեր գոյությունը:
3. Կրկին մտորե՛ք Առակաց 30.7-9-ի աղոթքի մասին: Նայե՛ք այստեղ ներկայացված հավասարակշռությանը: Մենք ինչպե՞ս ենք հավասարակշռություն գտնում ամեն ինչի մեջ, ինչ որ անում ենք: Ինչո՞ւ է դա այդքան կարևոր:

ԴԱՍ 13 ԿԱՆԱՅՔ ԵՎ ԳԻՆԻՆ

ՄԱՐՏԻ
21-27

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Առակաց 31, Հոբ 29.15, Առակաց 8, Ա Կորնթացիս 1.21, Հայտնություն 14.13-ը:

Հիշելու համարը.
«Քո զորությունը մի՛ տուր կնիկներին, ոչ էլ քո ճանապարհները՝ այն կանանց, որ փչացնում են թագավորներին: Ո՛վ Լեմուել, թագավորների բանը չէ գինի խմելը, ոչ էլ իշխաններինը՝ թե ուր է օղին» (Առակաց 31.3,4):

Առակաց գիրքն սկսվում է հոր խրատներով (Առակաց 1.1,8, 4.1), և ավարտվում է մոր խրատով (Առակաց 31.1): Լեմուել անունը, հնարավոր է, մատնացույց է անում Սողոմոնին. եթե դա այդպես է, ուրեմն Լեմուելի մայրը Սողոմոնի մայրն է, և նա որդուն նախազգուշացնում է թագավորներին սպառնացող երկու ամենալուրջ վտանգներից՝ գինուց և կանանցից:

Այս երկու թեմաների՝ գինու և կանանց միավորումը կանխամտածված է: Արդյունավետ կառավարիչ լինելու համար թագավորը պետք է մանրակրկիտ հետևի այն բանին, թե ինչին է նա թույլ տալիս ազդեցություն ունենալ իր վրա, իսկ այս երկու գործոնների ուժը չի կարելի թերագնահատել: Եվ թեև ճիշտ կնոջ ընտրելով կարելի է ձեռք բերել առավելություններ, ալկոհոլը միայն աղետներ է բերում:

Գրքի սկզբում հոր խրատը վերաբերում էր հոգևոր կյանքում իմաստություն ձեռք բերելուն: Իսկ այժմ, եզրափակելով գիրքը, մայրական խրատն ուղղված է՝ իմաստությունն առօրյա կյանքում կիրառելուն: Որովհետև հոր սովորեցրած հոգևոր սկզբունքները օգուտ չեն բերի, եթե որդին չհետևի մոր գործնական խորհուրդներին:

Միաշաբթի **մարտի 22**

«Առողջության կենացը»

Շատ մշակույթներում ալկոհոլի օգտագործումը կապվում է կյանքի և առողջության հետ: Մարդիկ բաժակ են բարձրացնում և միմյանց երկար տարիների կյանք են մաղթում, բայց հեգնանքն այն է, որ սպիրտային խմիչքի յուրաքանչյուր կումը նպաստում է հենց այդ կյանքի քայքայմանը: Վառ պիտակներով գեղեցիկ շշերը, խնջույքի ուրախ երգերը, արհեստական գովազդային հոլովակները և անգամ որոշ «գիտական» բացահայտումներ՝ այս ամենը սատարում են խմողների այն համոզմունքը, որ ալկոհոլը օգտակար բան է: Առակաց գիրքն ավելի վաղ արդեն մեզ նախազգուշացրել էր այդ մահացու խաբեության մասին (Առակաց 23.30-35): Եվ ահա այս թեման կրկին ի հայտ է գալիս՝ մեզ ցույց տալով է՛լ ավելի մեծ վնասը, որ կարող է բերել ալկոհոլի օգտագործումը:

Կարդացե՛ք Առակաց 31.4,5,8,9-ը: Ո՞րն է այս բոլոր համարների գլխավոր լուրը, և այդ լուրն ինչպե՞ս է կիրառելի Տիրոջ յուրաքանչյուր հետևորդի և ոչ միայն թագավորի կյանքում: _____

_____

_____

Նման խոսքերով Հոբը խոսում է իր մասին, որ ինքը եղել է «աչքեր կույրին և ոտքեր՝ կաղին» (Հոբ 29.15): Ճիշտ նույն կերպ թագավորը կամ նրանք, ովքեր հնարավորություններ ունեն, պետք է սատարեն աղքատներին և կարիքավորներին՝ «համրերին», այն իմաստով, որ նրանք ձայնի իրավունք չունեն, որովհետև ոչ ոք չի լսում նրանց:

Գինու ավերիչ ազդեցությունը կարելի է տեսնել նաև այն բանում, թե ինչ հեշտությամբ է այն աղավաղում մարդու ընկալումն ու դատողությունը: Ալկոհոլը վնասակար է ցանկացած մարդու համար, բայց, ազդելով թագավորի կամ իշխանությամբ օժտված մարդու վրա, ալկոհոլը կհանգեցնի սոսկալի հետևանքների: Խմող թագավորը ոչ միայն «մոռանում է օրենքը» և չի հասկանում, թե ինչն է ճիշտ, այլև արդյունքում նա աղավաղված որոշումներ է ընդունում. մեղավորները ճանաչվում են անմեղ, իսկ անմեղները՝ մեղավոր:

Սպառնալիքի ներքո է հայտնվում ճիշտը սխալից, բարին չարից տարբերելու ընդունակությունը: Գինի խմելու արգելքը վերաբերում է տարրական խելամտության սկզբունքներին, այսպիսով, այն պետք է

կիրառվի յուրաքանչյուր մարդու վերաբերյալ: Արժե նշել, որ հենց այս խնդիրն էլ եղել է քահանաների՝ գինի խմելու արգելքի պատճառը. «Սուրբի և անսուրբի մեջտեղը, և անմաքուրի ու մաքուրի մեջտեղը տարբերելու համար» (Ղևտացոց 10.9,10):

Ամեն ոք այնքա՜ն շատ մարդկանց կյանքում է տեսել ալկոհոլի կործանարար հետևանքները: Դուք ինչպե՞ս կարող եք օգնել ուրիշներին, հատկապես երիտասարդությանը՝ հեռու մնալու այն բանից, ինչ կարող է միայն վնաս հասցնել և՛ նրանց, և՛ նրանց մերձավորներին:

Երկուշաբթի մարտի 23

Կենաց «Հոգին թեթևացնելու համար»

Կարդացե՛ք Առակաց 31.6,7-ը: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք այս համարը: _____

_____

_____

Այս համարների մակերեսային ընթերցումը տպավորություն է ստեղծում, որ Լեմուելի մայրը թույլ է տալիս գինի կամ ցանկացած այլ ալկոհոլային խմիչք օգտագործել մեռնող (համար 6) կամ ընկճախտից տառապող (համար 7) մարդուն: Սակայն նման ընթերցումը կհակասեր ոչ միայն անմիջական համատեքստին՝ Լեմուելի մայրը հենց նոր թագավորին նախազգուշացնում էր սպիրտային խմիչքներ ընդունելու մասին, բայց և Առակաց գրքերի ընդհանուր համատեքստին, որը պարբերաբար և հաստատուն կերպով արգելում է գինի օգտագործել:

Բացի դրանից, հազիվ թե իմաստ ունի մեռնողին առաջարկել այն, ինչ միայն կվատթարացնի նրա վիճակը: Իսկ ընկճված մարդուն ալկոհոլ տալը նույնն է, ինչ ջրազրկված մարդուն աղ առաջարկելը: Եթե, ինչպես մենք գիտենք, Աստված հոգում է մեր մարմինների և մեր առողջության մասին, իմաստ չունի այս համարներում ալկոհոլ օգտագործելու թողտվություն որոնելը, հատկապես՝ հաշվի առնելով համատեքստը:

Որ ավելի կարևոր է, Առակաց գրքում «կորչել» բառի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ բայը միշտ կապակցվում է ամբարիշտների հետ (Առակաց 10.28, 11.7,10, 19.9, 21.28, 28.28): Օգտագործելով «կորչող» բառը՝ Լեմուելի մայրը փաստորեն մատնանշում է ամբարիշտներին: Ինչ վերաբերում է «դառնահոգի» արտահայտությանը, այն

նշանակում է ճնշված մարդ (Առակաց 31.6), ով, ինչպես և ամբարիշտը, դառնում է անզգա և «մոռանում է» իր աղքատությունը (Առակաց 31.7):

«Սատանան հավաքեց ընկած հրեշտակներին, որպեսզի մեկտեղ մտորեն, թե ինչպես առավելագույն վնաս հասցնեն մարդկային ընտանիքին: Արտահայտում էին մի առաջարկը մյուսի հետևից, մինչև որ վերջապես սատանան ինքը նրանց հետ կիսվեց իր մտահղացմամբ: Նա կվերցնի խաղողը, ցորենն ու մյուս պտուղները, որ Աստված որպես սնունդ տվել է մարդուն, և դրանք թույնի կվերածի, որը կքայքայի մարդու ֆիզիկական, մտավոր և բարոյական ուժերը, և կտիրի նրա բանականությանն ու զգացմունքներին, և նրանց կհանձնի սատանայի իշխանությանը: Սպիրտային խմիչքների ազդեցությամբ մարդիկ ամեն տեսակ հանցանքներ կգործեն: Այլասերված մոլությունները կծառայեն այս աշխարհի լիակատար քայքայմանը: Մարդկանց ստիպելով ալկոհոլ խմել՝ սատանան նրանց հրում է դեպի մի ճանապարհ, որով նրանք ավելի ու ավելի ցած են գլորվելու:

Երեքշաբթի **մարտի 24**

Առաքինի կինը

«Առաքինի կին ո՞վ կարող է գտնել. նրա գինը ավելի է, քան թե գոհարները» (Առակաց 31.10): _____

_____

_____

_____

Ո՞վ է Առակաց 31.10-ի այս «առաքինի կինը»: Մի շարք նշաններ թույլ են տալիս ենթադրել, որ հեղինակն ի նկատի ունի ինչ-որ ավելին, քան ազնվաբարո կինը կամ ամուսնու իդեալական կինը: Համեմատելով գրքի մյուս հատվածների հետ (Առակաց 1.20-33, 3.13-20, 4.5-9, 8)՝ մենք կարող ենք ենթադրել, որ «առաքինի կինը» խորհրդանշում է իմաստությունը: Կնոջ տեսքով իմաստության այդ պատկերացումն արդարացված է ոչ միայն նրանով, որ եբրայերենում «իմաստություն»՝ chokmah բառը իգական սեռի գոյական է, այլ նաև նրանով, որ հրեա հեղինակին թույլ է տալիս՝ բազում կոնկրետ դասեր ցույց տալու մեր առօրյա կյանքի համար: Իմաստությունը պատկերվում է ոչ թե որպես որոշ բարձր ու անհասանելի իդեալ, այլ որպես շատ գործնական և հասկանալի կին, ով կարող էր դառնալ մեր կյանքի ուղեկիցը:

Իմաստության մասին այս վերջին ուսմունքը ներկայացված է գեղեցիկ ակրոստիքոսի ձևով. յուրաքանչյուր համար սկսվում է եբրայական այբուբենի հերթական տառով (բոլոր տառերը հաջորդում են միմյանց այբբենական կարգով): Նման համարներ կարելի է գտնել Երեմիայի ողբում և շատ սաղմոսներում:

Առակաց 8-րդ գլխի իմաստության մասին հատվածը համեմատե՛ք «առաքինի կնոջ» մասին մեր համարի հետ: «Առաքինի կնոջ» ո՞ր գծերն են մեզ հիշեցնում Առակաց գրքի իմաստության մասին: _____

_____

_____

_____

1. Նա թանկարժեք է և արժե, որ իրեն գտնեն (Առակաց 31.10, 8.35):
2. Նրա արժեքը մարգարիտից ավելի բարձր է (Առակաց 31.10, 8.10,11,18,19):
3. Նա սնունդ է ապահովում (Առակաց 31.14, 8.1):
4. Նա ուժեղ է (Առակաց 31.17,25, 8.14):
5. Նա իմաստուն է (Առակաց 31.26, 8.1):
6. Նրան գովաբանում են (Առակաց 31.28, 8.34):

Թեև մենք ապրում ենք տեղեկատվության դարում և անմամեմատ ավելի շատ գիտելիքներ ենք կուտակել, քան բոլոր նախորդ սերունդները, քիչ բան է մատնացույց անում այն, որ մեր սերունդն ավելի իմաստուն է, քան նախորդ սերունդները: Իսկապես, ինչպես ասել է Մարտին Լյութեր Քինգ կրտսերը. «Մենք լավ ենք կառավարում հրթիռները, վատ՝ մարդկանց»:

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 1.21-ը: Այս համարն ինչի՞ մասին է, և այս գաղափարն ինչպե՞ս է օգնում ձեզ՝ ապրել հավատով:

Չորեքշաբթի **մարտի 25**

Նա աշխատում է

Առակաց 31-ի առաքինի կինը չի ծուլանում. նա շատ է աշխատում և շատ գործունյա է: Բանաստեղծությունն ընդգծում է այդ հատկանիշը (Առակաց 31.27), որը, ի դեպ, իմաստունին տարբերում է հիմարից (Առակաց 6.6, 24.33,34): Նրա գործունեության ոլորտը որոշակի է և

բազմակողմանի: Հոգևոր լինել, չի նշանակում ձեռքերը ծալած նստել այն պատրվակով, որ մենք զբաղված ենք չափազանց կարևոր կրոնական հարցերով և, հետևաբար, ժամանակ չունենք՝ զբաղվելու «մանր, առօրյա» հարցերով (տե՛ս Ղուկաս 16.10-ը): Կինը «գործում է իր ձեռքերի հոժարությամբ» (Առակաց 31.13): Հետաքրքիր է, որ այս շատ հոգևոր անձնավորությունը երբեք չի պատկերվում աղոթելիս կամ մտորելիս: Նա պատկերված է որպես իր գործն իմացող և արդյունավետ կին, որ շատ նման է Ավետարանների Մարթային (Ղուկաս 10.38-40):

Կարդացե՛ք Առակաց 31.12,15,18-ը: Ինչո՞ւ է այդ կինը միշտ աշխատում: _____

_____

_____

Կինը երբեք չի հանգստանում: Նա աշխատում է «իր կյանքի բոլոր օրերում» (համար 12), անգամ գիշերը (համարներ 15, 18): Նրա ակտիվ ու զգոն ներկայությունն անընդհատ օգուտ է բերում: Նրա մշտական կենտրոնացածության պատճառը նրա պատասխանատվությունն է: Կինը պետք է տեղում լինի, հակառակ դեպքում ամեն բան կկործանվի:

Կարդացե՛ք Առակաց 31.20,25-ը: Որո՞նք են նրա գործունեության ժամանակային սահմանները: _____

_____

_____

Այստեղ մեր աշխատանքներին և գործադրվող ջանքերին վերաբերող կարևոր հանգամանք կա թաքնված. նրանք կստուգվեն ժամանակով: Միայն ապագան ցույց կտա մեր գործերի որակը: Իմաստուն կերպով աշխատել՝ նշանակում է աշխատել հետագայի հեռանկարով, և ոչ թե մտածելով միայն անհապաղ պարգևատրման մասին:

Թեև թեման բոլորովին էլ այն չէ, սակայն կարևոր է այն սկզբունքը, որ թաքնված է Հայտնություն գրքի հաջորդ համարում «Երանելի են են այն մեռելները, որ Տիրոջում են ննջում այսուհետև. այո, Հոգին ասում է, որ իրենց աշխատանքից հանգիստ կառնեն, և նրանց գործերը գնում են նրանց հետևից» (Հայտնություն 14.13):

Եթե ձեր կյանքում կա յուրահատուկ կին (կին, մայր, ազգականուհի, ուսուցչուհի և այլն), ինչպե՞ս կարող եք ձեր երախտագիտություն հայտնել նրան՝ այն ամենի համար, թե ով է նա և ինչ է արել ձեզ համար:

Նա հոգում է

Կարդացե՛ք Առակաց 31.26-31-ը: Ուրիշ ի՞նչ կարևոր բնութագրեր ունի այդ կինը: Ինչո՞ւ են դրանք կարևոր մեզ բոլորիս համար՝ անկախ այն բանից, թե ով ենք մենք: _____

_____

Ինչպես մենք տեսանք ողջ եռամսյակի ընթացքում, շեշտադրվում են բառերը, այն, ինչ մենք խոսում ենք: Կինը հայտնի է իր իմաստությամբ և բարությամբ: Այս բնութագրերը կապակցված են: Ի վերջո, մի՞թե կարելի է չհամաձայնել, որ բարությունը իմաստության ևս մեկ դրսևորում է, հատկապես՝ եթե մենք հասկանում ենք, որ իմաստությունը ոչ միայն այն է, ինչ մենք գիտենք, այլ նաև այն, ինչ մենք ասում և անում ենք:

Նկատե՛ք նաև «շնորհալի օրենք» արտահայտությանը (անգլերեն թարգմանության մեջ օգտագործված է «բարության օրենք» արտահայտությունը): Այսինքն՝ բարությունը պարզապես անցողիկ երևույթ չէ, որ ժամանակ առ ժամանակ պոկվում է նրա շուրթերից: Սա օրենք է, նրա իսկ գոյության սկզբունքը: Մենք ի՞նչ ազդեցություն կարող էինք գործել աշխարհի վրա, եթե «բարության օրենքը» ղեկավարեր ամեն բան, ինչ դուրս է գալիս մեր բերանից:

Կարդացե՛ք Առակաց 31.30-ը: Ո՞ր կարևոր ճշմարտությունն է բացահայտված այստեղ, որի մասին այդքան հաճախ մոռանում են: _____

_____

_____

Կանանց չափազանց հաճախ են գնահատում միայն արտաքին տեսքով. դա այնպիսի՜ փոքր ու մակերեսային չափանիշ է: Աստվածաշունչը ցույց է տալիս, թե, վերջին հաշվով, որքան «ունայն» և դատարկ է դուրս գալիս նման վերաբերմունքը: Այս կնոջ ճշմարիտ գեղեցկությունը նրա բնավորության և այն բանի մեջ է, թե ինչպես է այդ բնավորությունը դրսևորվում նրա կյանքում և աշխատանքում: Գեղեցկությունը միշտ անցողիկ է. բնավորությունը մնում է ընդմիշտ: «Մարդկանց մեջ մեծ անունը ավազին գրված տառերի նման է, իսկ անթերի բնավորությունը՝ ողջ հավիտենության» (Է. Ուայթ, Աստծո զարմանալի շնորհը, 81):

Ձեր կյանքի ո՞ր պարագաներում է անհրաժեշտ հասնել բնավորության բարելավմանը: Այդ մասին աղոթելը հրաշալի է, բայց ի՞նչ որոշակի քայլեր պետք է ձեռնարկեք ածը տեսնելու համար:

Ուրբաթ մարտի 27

Հետագա ուսումնասիրության համար

«Երբ նրանք հերթական անգամ գինի խմեցին և գտնվում էին դրա գրգռիչ ազդեցության ներքո, նրանց միտքը մթագնեց, և նրանք սուրբը խառնեցին անսուրբի հետ: Աստծո հստակ ցուցումի փոխարեն՝ նրանք (Նադաբը և Աբիուդը) անպատվեցին Նրան, որ սովորական կրակ բերեցին սրբազանի փոխարեն: Աստված նրանց վրա թափեց Իր ցասումը. կրակ դուրս եկավ նրա երեսից և ոչնչացրեց նրանց» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 3, 295):

«Թող երեխաներն ու դեռահասները Աստվածաշնչից իմանան, թե ինչպես է Աստված գնահատում աշխատողի ամենօրյա ջանքերը: Թող կարդան Առակներում նկարագրված իմաստուն կնոջ մասին, ով «կորոնի բուրդ և քաթան, և կգործի իր ձեռքերի հոժարությամբ», ով «իր տան կերակուրը տալիս է և իր աղախիններին՝ բաժինը», ով «այգի է տնկում», «զորացնում է իր բազուկները», «իր ձեռքը տարածում է դեպի աղքատը և ձեռքը մեկնում տնանկին», ով «մտիկ է անում իր տան ընթացքին և ծույլ-ծույլ չի ուտում իր հացը» (Առակաց 31.13,15-17,20,27)» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 217):

Հարցեր քննարկման համար

1. Ինչո՞ւ է ալկոհոլից լիովին ձեռնպահ մնալը միակ ճիշտ որոշումը: Ի՞նչ լավ բանի կարող է հանգեցնել ալկոհոլի օգտագործումը ցանկացած տեսքով: Խորհեցե՛ք այն բոլոր դժբախտությունների մասին, որ նա կարող է բերել:
2. Եվս մեկ անգամ ուշադրություն դարձրեք այն գաղափարին, որ, թեև մենք այժմ անհամեմատ ավելի շատ գիտելիքներ ունենք, պարտադիր չէ, որ մենք ավելի շատ իմաստություն ունենանք: Գիտությունն առանց իմաստության ինչպե՞ս կարող է է՛լ ավելի վտանգավոր լինել, քան գիտելիքների պակասությունը: Դուք ի՞նչ թարմ օրինակներ կարող եք բերել, թե որքանով կարող է կործանարար լինել գիտելիքն առանց իմաստության:

3. Քննարկե՛ք «առաքինի կնոջ» բնութագրերը: Այս որոշակի իրավիճակի հիմքում ընկած սկզբունքներն ինչպե՞ս կարելի է կիրառել հավատավորների համար՝ անկախ նրանց սեռից, ընտանեկան դրությունից կամ տարիքից:
4. Առակաց գիրքը լի է գործնական իմաստությամբ: Դա մեզ պետք է ցույց տա, որ մեր կրոնը, անգամ իր ողջ բարձր աստվածաբանությամբ և հոգևոր տեսանկյուններով, նաև գործնական տեսանկյուն ունի: Մենք ինչպե՞ս կարող ենք համոզվել, որ ձգտելով կատարել աստվածաբանական և հոգևոր սկզբունքները, մենք չենք անտեսում հավատի գործնական տեսանկյունը:

ՆՈՐՈՒՅԹ

Երևակայության սահմաններից անդին

Այս գրքում մենք կհետազոտենք Տիեզերքի և մեր մոլորակի վրա կյանքի որոշ հրաշքներ: Բայց, որ ավելի կարևոր է. մենք կհետազոտենք մեր սեփական գոյության հրաշքը: Մարդկության պատմության առաջին իսկ օրերից մարդիկ փորձել են գտնել կյանքի ամենագլխավոր հարցերի պատասխանները: Ինչո՞ւ ենք մենք այստեղ: Ո՞ւր ենք մենք գնում: Մեզ հետ ի՞նչ է լինելու մահից հետո:
Սկսե՛ք այս ճանապարհորդությունը՝ ձեռք բերելու համար ոչ միայն կյանքի հրաշքները, այլ նաև ինչ-որ առավել զարմանահրաշ մի բան՝ սեր՝ երևակայության սահմաններից դուրս:

Առողջության բանալիները

Հիպերտոնիա, շաքարախտ, կաթված, քաղցկեղ, սթրես... Մարդիկ պատրաստ են իրենց ողջ միջոցները տալ, որպեսզի վերադարձնեն կորցրած առողջությունը: Բնությունն առաջարկում է լավ ինքնազգացողություն ունենալու համար ավելի պարզ և անվճար ուղիներ: Օգտագործեք դրանք, և դուք կբացահայտեք ձեզ համար գեղեցկության, ներդաշնակության և երկարակեցության աշխարհը:

ՆՈՐՈՒՅԹ

Նոր սկիզբ

Գրքում կգտնեք ճիշտ սննդի, մաքուր օդի, ջրի, ֆիզիկական վարժությունների մասին տեղեկություններ: Մի խոսքով այն ամենը ինչը անհրաժեշտ է սկզբնական առողջությունը պահպանելու համար:

ՆՈՐՈՒՅԹ

Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2015 թվականի առաջին եռամսյակ

ԱՌԱԿՆԵՐ

Ժակ Դյուկան

Գլխավոր խմբագիր՝ Պավել Սարգսյան
Թարգմանությունը և համակարգչային շարվածքը՝ Մերինե Աթոյան
Վերստուգող՝ Ալվարդ Մադոյան
Գրական խմբագիր՝ Գեղեցիկ Մարտիրոսյան
Համակարգչային ձևավորող՝ Կորյուն Կակոյան